

29154
7.22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴԱՆԴԱՇ
ԺԱՄԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴԱՐԴԱՐ
ԺԱՄԵՐ



..ԱՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ..
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԵՐԵՎԱՆ · 1986

ԳՄԴ 8427

9888

Հ ԱՀ ԳՐԱԴԱՐԱՆ
ԲԻBLIOOTEMA EGU

Գրիգորյան, Հ. Ե. 153453

Գ 888 Դանդաղ ժամեր: Բանաստեղծություններ.— Եր., Սովոր. գրող, 1986.— 188 էջ:

Այս գրքի մեջ առավել որոշակի են ընդգծված բանաստեղծի նախասիրությունները՝ առօրյա, առաջին հայացքից սովորական թվացող անցուղարձի մեջ որոնելու ու գտնել հոգեբանորեն նույր, առաջին հայացքից անտեսանելի թվացող ելևէշներ:

Գ 4702080200
705(01)86—86 «8»

ԳՄԴ 8427

© «Սովորական գրող» հրատարակչության, 1986

ԱՌԱՎՈՒՅԱՆ ԺԱՄԵՐ



1. Ծնվել եմ առավոտյան շուտ,
լենինականյան մի աղքատիկ առավոտ:
Ինձ հետ ծնված քույրս մահացել է մի քանի ժամ հետո,
երբ օգոստոսի արևը վաղուց արդեն դուրս էր եկել
և անտարբեր նայում էր
մեր մոլորված ընտանիքին,
որը մեկ ժպտում էր
և մեկ էլ լալիս էր սրտակեղեք:
Հիմա մեր տանը ոչ ոք չի հիշում նրան,
ոչ ոք չի խոսում նրա մասին,
քրոջս, որին ի՞նչ էին տեսել.
Ընդամենը մի քանի ժամ՝
ետպատերազմյան մի կիսաքաղց առավոտ:
Միայն ե՞ս շեմ կարողանում մոռանալ
և երբեմն
արթնանում եմ վաղ առավոտյան սրտիս ցավից
և աշքերս թաց
մթության մեջ պառկած,

օր առ օր վերհիշում եմ
այն ինը ամիսները,
որ միասին ապրել ենք
մեր կյանքի լավագույն շրջանում...

2. Առավոտյան դու դեռ ոչ մի տարեկան եմ,
ամեն առավոտ դու արթնանում ես օրորոցի մեջ:
Եվ աշքերդ փակ՝ մորդ ազ ձեռքի
հաճելի սառնություն ես զգում ճակատիդ:
Իսկ հետո շրխկոցով փակվում է դարպասի դուռը՝
հայրդ աշխատանքի գնաց,
և հետո դուռը նորից կրացվի ու կփակվի՝
քույրերդ դպրոց գնացին...
Եվ հետո լոռւթյուն կիշնի,
և տանը միայն մորդ քայլերը կմնան
և լացի ձայնը,
քո լացի ձայնը, որն ականջիդ մեջ է:
Եվ դեռ աշքերդ փակ սթափվում ես քիշ-քիշ,
քո լացի ձայնը... աղջիկդ է լալիս...
օրորոցի մեջ... կնոջդ քայլերը...
ինչ-որ դռներ են փակվում ու բացվում խոհանոցում...
Եվ սթափվում ես զերջնականապես,
հետո ծերանում
մի ակնթարթում...

3. Միծեռնակներ օդում — ուղիղ մեջտեղից բացված
տետրակների նման: Առաջին ժամերը ցուրտ դասարանում:
Թվաբ: Աշխարհ: Բուսաբ:
Եվ դեմ առ դեմ առաջին հանդիպումը կմախքի հետ

անատոմիայի կարինետում, և ուսուցիչը,
որի համեմատությամբ
կմախքը շատ ավելի կենսունակ ու կենսախինդ էր թվում
և շահում էր իր մարդկային հատկանիշներով...
Զանգերով, թվերով ու գնահատականներով լցված
առավոտներ—
բազմազան ժողովներ, որ ավարտվում էին պարերով,
հեռավոր էքսկուրսիաներ, որ ավարտվում էին մոտակա
պուրակում,
և սերը, որպես ֆակուլտատիվ առարկա,
թևածում էր միջանցքներում, կաշում էր մեր թանաքոտ
մատներին,

կավճի փոշուց ճերմակած արտևանունքներին,
սերը, որի ետևից ընկած, ինչպես ճանճի ետևից,
ուսուցչական կոլեկտիվը քշում էր օրնիբուն,
պայքարում քիմիական պրեպարատներով, թակարդներով
զանազան...

Սակայն վաղ առավոտյան, գտնելով մի բաց լուսամուտ,
սերը նորից սուրում էր ներս, և սկսվել էր նորից
ամենօրյա վազվոտուքն ու պայքարը հուսահատ...
Ծիծեռնակներ օդում—

երկինքն ամբողջովին խղճակած է ծիծեռնակներով,
ինչպես տառասխալներով լցված տետրակի էզ:

4. Թանաստեղծներից շատերն են խոսել
անձեռոտ առավոտների մասին:
Կա նաև համապատասխան երաժշտություն:
Թայց ծրեան—Լենինական ավտորուսի մեջ՝ նստած՝
ես գիտեի արդեն, որ չկա ինձ փրկություն,

թեկ ավտոբուսը մոմե փիսրուն թերով

առասպելի հանրահայտ հերոսի նման

բարձրացել էր երկինք:

Առանձնակի գաղտնիք չկա այս թոհջքի մեջ,

շահել տարիներին, սիրահարված ժամանակ,

այդ ո՞վ է, որ չի բարձրացել երկինք

տրանսպորտի զանազան տեսակներով:

Մեր դեպքում ավտոբուսի վարորդը փշացրեց իրադրությունը՝

միանգամից քառակի թանկացնելով արժեքը տոմսերի,

սիրո մասին այնքան հաջող բացվող խոսակցությունը

թեքելով մի բոլորովին ուրիշ ուղղությամբ...

Ես վաղուց արդեն շեմ կարողանում բառեր գտնել,

որովհետև երիտասարդ եմ և անվերադարձ սիրահարված
և երիտասարդ ու սիրահարված նստած եմ

Լենինական—Երևան ավտոբուսի մեջ

և անհամբեր սպասում եմ նրա շարժվելուն:

Իսկ ավտոբուսի վարորդն ինձ տեսնելով ճանաշեց իսկուն,

և արագ շրջվելով դեպի ուղևորները՝

հայտարարեց ուրախացած.

«Ամրագոտիները կապել,

թոհջքի ամբողջ ընթացքում

ծխելն արգելվում է»:

5. Վարձով տներում առավոտը բացվում է

սովորականից մի քիչ ուշ:

Իսկ գլխացավը նույնն է՝ տնից ստացված մի քանի նամակ

սեղանի վրա, անալգինի դատարկ տուփեր,

տանտիրոջ շգիտես թե ինչու հղի աղջիկը,

որը լվացք է անում պուավոտից-իրիկուն,

իսպաներենի դասագիրքը պատուհանի գոգին,
և դու շգիտես, ո՞րտեղ ծախսես
զարմանալիորեն հրաշալի տրամադրությունդ,
որը քո մեջ ծիլ է տվել գարնանային այս կիրակի առավոտ:
Հեռվից-հեռու լսվում է տրամվայի զնգոցը,
և դուռդ է ճանկում կապույտ աշքերով կատուն:
Դու դեռ շգիտես, ո՞ր սրճարանում պիտի փշացնես օրդ
և որտեղ պիտի ծախսես վերջին երեք ոռորլիդ—
գալառից եկած ուսանող՝ քառակուսի արդուկած շալվարով:
Եվ փակելով խցիկիդ դուռը.
— Buenos días, Տե՛սոր,— խանդավառ ողջունում ես
տանտիրոցդ:
— Buenos días, շուն շան որդի, — ի պատասխան
մըթմըթում է տանտերդ,
տուն հրելով իր հղի աղջկան,
որի առավոտը, ըստ երեսուցին, շատ վաղուց էր սկսվել...

6. Դաշնամուրի վրա մի մատով նվագված առավոտ,
պարզ հնչյուններ, որ թափանցում են վարագուցրից ներս:
Ծներ, կատուններ, ծտեր՝ ահա քաղաքային ամբողջ ֆառնան,
աղքատիկ մի նվագախումբ՝ հասարակ
իրադարձությունների համար նախատեսված:
Ինչ արագ են երեսում դատարկ օրվա նշանները
և հորիզոնդ՝ փոքրիկ պատուհանն է
փակված շգիտես թե ում լվացքով՝
ճերմակ սավան, ավարտված կինոյի էկրան,
լույսերը վառվել են, իսկ դու մենակ ես դահլիճում,
բոլորն արդեն գնացել են տարրեր ուղղություններով,
իսկ դու մոլորված նստել-մնացել ես, որովհետեւ

շգիտես, թե հիմա ուր պիտի գնաս,
մոլորված նստել ես քո վարձով սենյակում և օրը նոր է
սկսվել,

իսկ հոգիդ խամրած է,
ինչպես անձրւների տակ երկար մնացած կոնֆետի թուղթ:
Դաշնամուրի վրա
միակ մատով նվազված առավոտ:

7. Գիշերը դուքնել էիր անտառում,
բաց երկնքի տակ, պառկած կանաչ խոտերին։
Իսկ երբ արթնացար, վաղ առավոտ էր,
իսկ երբ արթնացար՝ ուշացել էիր արդեն—
խոտերը աճել էին քո միջով,
ճյուղերը անցել էին քո միջով,
իսկ հենց կրծքիդ վրա,
հենց այնտեղ, որտեղ սիրոտ է,
բացվել էր մի ծաղիկ՝ շափազանց վառ գույներով,
և թերթիկները փոխում էին գույները
ամեն ակնթարթ։
Թեթև քամին ճոճում էր խոտերը,
և ես զգում էի, որ խոտերն իմ մատներն են,
արեք շոյում էր ճյուղերը,
և ես զգում էի, որ ճյուղերն իմ ձեռքերն են,
թիթեռները պտտվում էին ծաղկի շուրջ,
և սիրոտ ուղղում էր ուրախությունից...
Ես երեխ մեռել եմ,— մտածեցի առանց խուճապի,—
Ես երեխ վաղուց եմ մեռել,— շարունակեցի մտածել,
իսկ եթե չեմ մեռել,
ապա վատ չէր լինի,
եթե մի քիչ էլ այսպես ապրեի...

ՀԱՅՐԵՐԻ ՀՈՂ

Ես այս երգը երգում եմ կանգնած,
որովհետև դու նա ես,
ում խաղաղության համար գոհվում են առանց կասկածելու,
որովհետև դու նա ես,
ում համար կովի են ելնում առանց հրամանի,
որովհետև դու նա ես,

Հենց նա, որին ասում են միակ,
որին կարոտում են հեռվից,
որի համար արտասվում են օտար սրճարաններում
և նավերի վրա:

Ես այս երգը երգում եմ սկզբից,
որովհետև դու նա ես,
որին կորցնելուց հետո
էլ ոչինչ չենք ունենա կորցնելու,
որովհետև առանց քեզ անձրեւ զուր է սովորական,
լեռները՝ քարերի կուտակում,
սերը՝ շքեղություն ավելորդ,
և որդի ծնելը՝ հանցագործություն:
Ես այս երգը երգում եմ գլխարաց,
որովհետև դու նա ես,
ում ձեռքը պետք է իշնի մեր գլխին օրհնության նման,
երբ մենք ճանապարհ ենք ընկնում,
երբ մենք սկսում ենք օրը,

Կրբ մենք ծնունդ ենք տալիս տողին ու մտքին:
Դժվար է խոսքով ասել այն, ինչ սրտում է պահված,
առավել ևս դժվար է լուել,
և դրա համար հրաժարվում եմ վերջակետ դնել,
որովհետև իմ այս երգը պիտի շարունակվի այնքան,
քանի դեռ կաս դու,
քանի դեռ ես կամ

ՀԱՅԱՍՏԱՆ

Սա իմ երկիրն է—շափսերով այնպիսին,
որ կարող եմ վերցնել հետո,
թե մի հեռու տեղ գնամ:
Փոքրիկ՝ ինչպես ծերացած մայր,
փոքրիկ՝ ինչպես նորածին դավակ:
Իսկ քարտեզի վրա
ընդամենը մի արցունքի կաթիլ...
Սա իմ երկիրն է—շափսերով այնպիսին,
որ աղատորեն տեղավորել եմ սրտիս մեջ,
որ չկորցնեմ հանկարծ:

ԵՐԲ

Այդ օրը, վաղ առավոտյան, երբ ես գնում էի դաշտի միջով,
երբ ես չէի մտածում անցնող կյանքի մասին,
որովհետև արեք նոր էր սկսում բարձրանալ,
երբ ամեն ինչ սկսվում էր,
միայն և միայն սկսվում:

Այդ օրը վաղ առավոտյան թոշունները երգում էին
սքանչելի երգեր՝ սկսվող կյանքի մասին,
որովհետև արեք նոր էր սկսում բարձրանալ,
և ես գնում էի դաշտի միջով՝
ուրախ անցնելով դեղին ծաղիկների կողքով,
ուրախ անցնելով

կարմիր
և մնացած բոլոր գույների ծաղիկների կողքով,
երբ ես կանգ առա դաշտի կենտրոնում,
որովհետև արեք սկսել էր բարձրանալ:

Այդ օրը վաղ առավոտյան, երբ փոքրիկ տղաները
վաղվում էին թիթեռների ետևից,
երբ փոքրիկ տղաները վաղվում էին հենց այնպես,
որովհետև թիթեռները հասկացել էին ամեն ինչ
և հեռացել էին առավոտվա ամենաառաջին գնացքով,
և օդի մեջ մնացել էին
հրաժեշտի գույնդգույն թաշկինակները,
և ես էի մենակ վաղվում

գույնզգույն թաշկինակների ետևից
դաշտի կենտրոնում,
իսկ փոքրիկ տղաները ծիծաղում էին վրաս,
ծիծաղում ու խրվում էին հողի մեջ՝
թիթեռ բռնելու ցանցերը բարձր պահած։
Այդ օրը, վաղ առավոտյան,
երբ ամեն ինչ սկսվում էր,
միայն և միայն սկսվում,
ես արդեն որսացել էի հրաժեշտի բռլոր թաշկինակները
և մոլորված նայում էի հեռացող գնացքի ետևից,
սքանչելի երգերի ետևից,
որ ծխի պես ծածանվում էին հեռացող գնացքի վերևում,
գեղին ու կարմիր ծաղիկների ետևից,
որ շուզեցին թիթեռներից բաժանվել,
և իմ ետևից, որ շուզեցի մնալ միայնակ,
երբ ամեն ինչ սկսվում էր,
միայն և միայն սկսվում։

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՕՐՎԱ ՍԿԻԶԲ

Ես հիմա հետզհետե մեռնում եմ քո սիրուց,
 որովհետև քո սերը հետզհետե մեռնում է իմ մեջ:
 Հիմա այնքան կարևոր գործեր կան,
 այնքան կարևոր հոգսեր:
 Եվ որտեղի՞ց ժամանակ գտնեմ
 նստելու ծովի ափին,
 նայելու ալիքների խաղին, որոնք երևի նախկինի նման
 մեկ խփվում են ափին,
 մեկ գլորվում են ետ,
 որտեղի՞ց ժամանակ գտնեմ նայելու լուսնի դեմքին,
 որը մի դեպքում արցունքի կաթիլ է,
 մեկ՝ կարոտով սպասող աշք
 և շատ ավելի հաճախ՝ հավերժական վկա՝
 բաժանումների, սիրո, հանդիպումների, մոռացության:
 Սիրելիս,
 դու հիմա մի հերթական անուն ես՝
 գրված իմ օրացույցի թերթիկին
 և կողքին՝ հեռախոսիդ համարը,
 մի քիչ վերև՝ ինչ-որ գրասենյակի համար,
 մի քիչ ներքև՝ մի հեռավոր բարեկամի, որի տղան
 այրվում է որևէ, մի բուհում սովորելու ցանկությունից...
 Սիրելիս, ես հիմա մտազրադ նայում եմ օրացույցին,
 հոգոց եմ քաշում և նայում եմ նորից
 և հետո վերցնում եմ ինքնահոսը
 և գրասենյակի կողքին գրում եմ՝ հարկավոր է զանգել,
 հեռավոր բարեկամիս կողքին՝ հարկավոր է հետաքրքրվել,
 իսկ քո անվան կողքին գրում եմ՝ հարկավոր է սիրել
 և երկու հաստ գիծ եմ քաշում այդ բառերի տակ...

ԱՐՔԱՅԱԿԱՆ ՈՐՍ

Հնչում են եղբերափողերը,
և մենք հանդիսավոր հրաժեշտ ենք տալիս իրար:
Խզված ձայնով երգող մի տղամարդ
առավել հուզի դարձրեց առավոտը,
և ճակատագիրը փայլեց
առավոտի մեջ մոլորված զահել աստղի նման:
Մի տիրիր,— ասացին ձիերը,
մի տիրիր,— ասացին խոտերը,
կրակիր անվրեպ,— ասացին եղնիկները,
ձեռքդ շդողա հանկարծ,— ինձ ասացին թռչունները,
և խզված ձայնով երգող մի տղամարդ
դանդաղ սկսեց խրվել հողի մեջ,
մինչեւ որ ձայնը խզվեց բոլորովին:
Եվ ես չէի լսում այլես ոչինչ,
սմբակների դոփյունից բացի,
քամին սովում էր ականջներիս մեջ,
և ես ծնվում ու մեռնում էի անվերջ,
սիրում էի, բաժանվում, ծերանում—
և ինձ մեկ Հակոր էին կոշում,
Տետո անվանեցին Արշակ,
ապա Երվանդ անունը տվեցին,
իսկ երբ ասացին Հովհաննես,
դադարեց ձիս վարգելուց,
և ես հոգնած իշա խոտերին,
և եկեղեցու զանգերը ղողանջեցին,
որովհետև արդեն առավոտ էր նոր,
և ճակատագիրը փայլում էր
առավոտի մեջ մոլորված անփորձ աստղի պես...

Առավոտը օրվա ամենասքանչելի մասն է:
 Ես ինչպես կարող եմ չսիրել առավոտը:
 Օրվա մանկությունը՝ մաշկը թարմ, թմբվիկ ոտիկներով ու
 թաթիկներով,
 ահա վազվզում է ցողաթաթախ կանաչների վրայով,
 և նրա աներևակայելի քաղցր ճիշերից
 հոգիդ կարող է մարել վերջնականապես...
 Դողդողացող ձեռքով ետ տար վարագույրդ,
 և արևի լույսը թող մտնի
 թախծալուր հուշերի սարդուտայնով ամբողջովին պատված
 ծակուծուկը սենյակներիդ,
 և ուրվականները ծանր հոգոց քաշելով կելնեն նստած
տեղերից

և դանդաղ քայլերով դուրս կդան սենյակից:
 Առավոտը օրվա ամենասքանչելի մասն է:
 Ետ տար վարագույրդ և կերևա օրը ժայրեժայր,
 ավտոբուսի կանգառներով, պաղպաղակի կրպակներով,
 հանդիպումներով ու բաժանումներով,
 գարնանային ծառերով, որոնց տերևները թարմ են ու կանաչ
 և միանման, ինչպես թարմ ու կանաչ երեքնոցներ...
 Այսքանից հետո դու ինչպես կարող ես չսիրել առավոտը:
 Ահա այսպես, համարձակ,
 տար դողդողացող ձեռքդ վարագույրին,
 ևս մի քիչ
 և կտեսնես այն, ինչ
 երազել ես ամբողջ գիշեր՝ փակ ու տառապած աշքերով,
 կտեսնես լույսը՝ մաշկը թարմ, թմբվիկ ոտիկներով ու
թաթիկներով,

ահա վազվում է ցողաթաթախ կանաչների վրայով
և նրա աներևակայելի քաղցր ճիշերից
Հոգիդ կարող է մարել վերջնականապես...

ՆՈՐ ԱՐԹՆԱՑՈՒՄ

Թեթևորեն

անցիր վերադարձող Հոգիների միշով:
Կնճոտված մարմիններ, որ ջուր են խմում՝
զգուշորեն հակված երբեք չնվազող գետակին:
Իմաստում աշքերով մանուկներ—
մի քանի կյանք է սահել
ծերացած մատների արանքով:
Հնարավորին շափ ազատ տարածություն,
ուր դու պիտի քայլես
վերադարձող Հոգիների միշով,
և խոտերը պիտի շզգան քո մարմնի ծանրությունը:
Բազեների նման բացուխուփ անելով թերը,
անձայն սահում են թիթեռները,
շփոթված իրենց գույների առատությունից
և ընդհանրապես, ամեն ինչից շփոթված,
և գետակը, որի ջրերը երբեք չեն նվազում,
արտացոլում է իր մեջ աշքեր
զարմանալի հստակությամբ,
աշքեր, որ ոչ հարցեր են տալիս
և ոչ էլ պատասխան են որոնում
գարնանային մոլեգնած կատուների համառությամբ:
Ինչ-որ մի տեղ օրերը բացում և փակում են իրենց թերը,
ինչ-որ մի տեղ սահում է իմ կյանքը
ծերացած մատների արանքով...

Եվս մի առավոտ, երբ լյարդդ չի ցավում,
երբ օրն արևոտ է
ու դեռ հոգիդ ինչ-որ սպասումներ ունի
և հույսդ ուռկանի պես նետած օրվա 24 ժամերի մեջ,
ինքդ քեզ հաշիվ ես տալիս սթափ ուղեղով՝
եթե ոչ ոսկե ձկնիկ,
գոնե մի քանի արծաթե,
թեկուզ և շատ փոքրիկ,
թեկուզ և շերեփուկ
կհայտնվեն ուռկանիդ կիսամաշ թելերի մեջ։
Եվս մի առավոտ,
երբ գլուխդ չի ցավում,
երբ ողնաշարդ չի նվվում
գալիք անձրեկ սպառնալիքից,
երբ դեռ ուրախ է հայացքդ
լուսամուտից դուրս նայող,
երբ փողոցվ անցնող փողային նվագախումբը
չի որոնում քո տան հասցեն,
և Շոպենի հետ քո հանդիպումը
հետաձգվում է ինչ-ինչ պատճառներով...
Ահա դեռ ոտքի վրա ես,
ինքդ քեզ տանում ես առաջ
և դանդաղ ու հաճույքով վայելում ես
առավոտի քաղցրությունը,
լեզվիդ վրա զգալով աղքատիկ մանկությանդ օրերի
ամենամեծ վայելքը անմոռաց,
երբ ձմեռվա համար պահած
մուրաբան էիր ուտում
պահարանի մեջ ապահով թաքնված...»

ՅԵՐԵԿԱՅԻՆ ԺԱՄԵՐ



1. Երբեք շմեռնես,— մահվան մահճում
թախանձագին հորդորում էր ինձ հայրս:
Եվ նայելով նրա մշուշված աշքերին՝
ես դառնությամբ հասկացա, թե ինչ ծանր է
մեռնել ցերեկվա լույսերի մեջ ողողված,
երբ պատուհանից երևում է դիմացի պատշգամբը,
և մի կին պատշգամբում
պարանից կախ է տալիս իր մաքրամաքուր լվացքը,
հետո զնգում է սխալված հեռախոսը, և տղամարդու
մի ջահել ձայն բացատրում է, որ այն, ինչ վերցրել է վաղուց,
հենց հիմա չի կարող վերադարձնել, որովհետև...
Հետո վերեկի հարկում շրխկոցով բացվում է դուռը,
և երեխաների զվարթ ճիշ ու աղմուկը
լցվում է միշանցք, տարածվում վերե ու ներքեւ,
այնուհետև՝ աշխարհով մեկ
և դրանից երկնքի կապույտն ավելի է պայծառանում
և ավելի է թանձրանում դառնությունը...
Երբեք շմեռնես, ահա թե ինչ կասեմ քեզ,—
խնդրեց հայրս վերշին անգամ
և փակեց աշքերը:

2. Իսկ երբ հայրս իշավ գերեզման,
ես հանկարծ զգացի, որ այլևս չեմ կարող շարժվել,
որովհետև ինքս կիսով շափ հողի մեջ էի:
Դա տեղի ունեցավ ցերեկը, պայծառ արևի տակ,
բոլորի աշքի առաջ.
դուդուկները տխուր նվագում էին,
մայրս ու քույրերս լաց էին լինում,
իսկ ես դանդաղ խրվում էի հողի մեջ...
Իսկ երբ իրենց թաց ու զղաձիգ մատներով
անհնարին ուժով արցունքները սեղմեցին կոկորդս,
ես հանկարծ պարզորոշ տեսա,
թե ինչպես անաղմուկ բացվեցին դրները հորս առաջ,
և նա վերջին անգամ շրջվեց,
նայեց բոլորիս,
նա շատ մոտ էր ինձ կանգնած,
բայց երբ տվեց իմ անունը,
նրա ձայնը լսվեց շափազանց հեռվից,
և հետո շուր եկավ և իր սովորական
արագ քայլվածքով հեռացավ:
Եվ դրները նորից փակվեցին անաղմուկ:
Ես հիմա կիսով շափ հողի մեջ եմ,
սովորական մի ժառ, որը խոսել գիտի,
բայց շատ ավելի գերադասում է
լոել:

3. Անցնել փողոցից-փողոց,
երբ շենքերը ստվերների կարճլիկ փեշերով
մի կերպ ժամանակ են ծնկները:
Ենքերը խոսում են իրար հետ,

դա վաղուց հայտնի և հասկանալի է բոլորին։
Բայց մի օր, երբ անցնում էի փողոցից-փողոց,
ես կանգնեցի խայթվածի պես,
որովհեակ զգացի թիկունքիս նրանց հայացքը։
Սովորական խելագարություն է, մտածեցի ես,
կանցնի և ես հիմա կշարժվեմ։
Իսկ ո՞ւր են մարդիկ—
ամայի էին փողոցները ցերեկային,
շենքերում են, իհարկե,
և շենքերը բերներերան լցված են հիմա մարդկանցով՝
ծերունիներով, հիվանդներով, նորածիններով,
երիտասարդներով, և բոլորը սսկված
հիմա նայում են թիկունքիդ։
Սովորական խելագարություն է, մտածեցի ես,
ցերեկային երազներ են, թեթև շունչ քաշեցի
և վերջապես քայլեցի
գլուխս ուսերիս մեջ քաշած։

4. Դու խոսում ես, բայց լոռւթյունը չի խախտվում։
Դու մտածում ես՝ հիմա ուր-որ է
քամին կփշի, և բառերը աշնան տերևների պես
կթափվեն շուրթերիցդ
և կտարածվեն անձրեկից սևացած փողոցներում։
Տիկնիկներ,
շափից դուրս շատ տիկնիկներ
խանութների ցուցափեղկերում՝ ցերեկվա
լույսերի մեջ անտարբեր հետևում են
քեզ, որը դեռ հույսեր է փայփայում,

թե երբեք կրարձրանա լուստիյան վարագույրը,
կերևա բեմը լուսերով ողողված,
կծնդա զանգը և տիկնիկները կսկսեն շարժվել,
և բառերը, բառերը կսկսեն խոսել՝
ինչպես բոլոր իսկական ու շքեղ թատրոններում:

5. Զմուան հիշողության ինչ-որ մի հեռավոր ծալքի մեջ
տրամվայի ցուրտ զրնգոցն արթնացավ։
Հիմա ոչ ոք չի հարցնում,
թե ո՞վ էր քնում պուրակում
օրվա բոլոր ժամերին
և թե ո՞ւմ կիսացնորված կինն էր,
որ անվերջ խնդրում էր
հանգցնել ցերեկվա լուսերը,
որովհետև իր ամուսինը
չի սիրում քնել լուսերը վառ սենյակում,
մանալանդ, եթե մի քիչ խմած է,
և հետո լռում էր միանգամից,
թեև այդ պահին ճակատագրական սխալներ էր որոնեմ
հեռու գնացող մտքերի մեջ։
Ինչ գեղեցիկ է մեռնում ձմեռն այս ժամին։
Տրամվայի ցուրտ զրնգոցն իմ դեմ բացուած է դանդաղորեն
լուսերով ու շերմությամբ ողողված
տների հմայքը անկրկնելի
և բոլոր դռների առաջ,
գլուխը կախ, մեղավոր ժպիտը դեմքին
կանգնած է մեր բոլորի մեռած ընկերը,
որի անունն արթնացավ

ձմռան հիշողության
ինչոր մի հեռավոր ծալքի մեջ
տրամվայի անակնկալ զնգոցից:

6. Ես միայն հիմա եմ նկատում,
որ ցերեկով եմ սկսել հիշել նրանց,
ովքեր հեռացան երկնային կառքերով՝
ոչ մի խոսք շասելով՝ այն մասին,
թե երբ են վերադառնալու: Բայց
ես սպասում եմ նրանց: Միգուցե
կան նաև ուրիշ սպասողներ:
Ես միայն հիմա եմ սկսում հասկանալ,
որ շատ ավելի հարմար է ցերեկով սպասելը,
օրվա ուրիշ պահերի,
խավարի մեջ և նույնիսկ կիսախավարի,
կարող է և չնկատես, և նրանք կանցնեն քո կողքով
ծաղիկները ձեռքերին,
երջանկությունից շողշողացող դեմքերով:
Ցերեկվա ժամերը: Ահա տես—
ոսկու պես շողշողում է երջանկությունը
բոլոր կողմերից:

7. Ես ինչպես մոռանամ քեզ—
Ես, որ հիմա թափառում եմ
ապրողների և մեռնողների արանքում:
Ես, որ կիսով շափ հողի մեջ եմ:
Եվ ամեն անգամ,
երբ նորից տերևակալում են թևերս
և սրտիս միջից իր ցողունն է երկարում

Թունավոր վառ գույներով ծաղիկն անանուն՝
 ես մտածում եմ, թե էլ ե՞րբ եմ մոռանալու քեզ
 և էլ ո՞րտեղ եմ մոռանալու,
 երբ կիսով շափ այստեղ եմ և հիշում եմ քեզ,
 և կիսով շափ այնտեղ եմ և էլի հնար չկա քեզ
 մոռանալու
 և չկա ուրիշ
 մի ուրիշ աշխարհ էլ հեռանալու...

Ս.ՇՈԽՆ

Նվագում էր դաշնամուր,
 իսկ լուսամուտները բաց էին,
 և աշուն էր:
 Մազերը երկար էին,
 իսկ ինքը տղամարդ էր:
 Տերևները թափվում էին,
 իսկ ինքը նվագում էր:
 Այս ամենը այնպես,
 այնպես տխուր էր,
 որ շպրտեցի հանգած ծխախոտս
 և չնստեցի տրամվայ:
 Մեկ-մեկ
 թափվում էին տերևները,
 ինչպես չորացած բառեր,
 ինչպես չորացած նոտաներ:
 Ինձ թաղեցեք
 վաղը չէ մյուս օրը—
 անտարբեր խնդրում էր դաշնամուրը:

ԿԱՐՈՏ ԵՎ ՍՊԱՍՈՒՄ

Հրեշտակներ շեկան քո հոգին փրկելու
կամ գոնե՝ մարմինդ;
Նրանք ամուր փակեցին առասպելների դռները,
և դու ստիպված հավատացիր,
որ գոյություն չունեն նրանք:
Ծովի ընկերությունը քեզ մատուցվեց
որպես հարգանք:
Դու նայեցիր ավագին և մտածեցիր՝
ինչ երկար է ճանապարհու
Դու հենց այդպես մտածեցիր նաև,
երբ քայլում էիր ծովի երկայնքով:

Հետո ճայերի անտանելի ձայները հասան քեզ:
Խսկապես, ի՞նչ լավ բան կա այդ ամենի մեջ:
Ներիր ինձ, ես արդեն կանոնավոր շեմ սափրվում,
չէ՞ որ դու իմ մասին ավելի մեծ կարծիք ունես:

...Բայց դու ամեն օր
բաց ես թողնում քո լուսամուտները;
որովհետև հաստատ հավատում ես,
որ կգան նրանք,
որոնց անգոյությանն էլ ես
հաստատ հավատում...

ԱՅՍՈՐ ԶՅՈՒՆ ԵԿԱՎ

Ես գիտեմ՝

կմեռնեմ ձմուան առաջին օրը:

Մարդիկ կթփթփացնեն ոտքերը

և զարմանքով կնայեն,

թե ինչպես է ձյունը հալվում իմ սառած դեմքին:

ծերացած կինս կորոնի

և չի գտնի վառարանի ունելին՝

կատվին սենյակից դուրս քշելու համար,

հետո կնստի, կօրորի գլուխը՝

քմահաճ կատվի և իմ անխոհեմ քայլից ընկճված:

Քույրս թեյ կրածանի մրսած հյուրերին

և ազատ ձեռքով կուղղի

կրծքիս դարսված շորացած ծաղիկները:

Հետո բոլորը միանգամից կելնեն ոտքի

և աղմուկ-աղաղակով ինձ դուրս կհանեն
տնից,

դեպի ձյունը,

ճերմակ ձյունը,

առաջին ձյունը,

վերջին ձյունը,

և այդ հրաշալի տեսարանից քար կտրած՝

ես խոսքեր շեմ գտնի

հիացմունքս արտահայտելու համար...

Ճանապարհ ընկնողների համար

կարեռը արցունքները զսպելն է:
Երշանիկներ, ձեր թաշկինավները միշտ չոր են,
հումորի զգացումը միշտ էլ հաղթանակում է ձեզ մոտ.
դուք ճիշտ ժամանակին կռահում եք,
որն է ճիշտք և որը սխալ
և ամեն ինչ շարունակում եք, նախօրոք իմանալով

վերջը:

Ճանապարհ ընկնողների համար

կա հատուկ երաժշտություն:
Նրանք անպայման հիշում են մանկությունը,
և այդ պահին արագ-արագ շարվում են կողք-կողքի
սանտիմենտի հրեշտակները,
որոնք անպայման գեղեցիկ մարմիններ ունեն
և առանձնանում են իրենց նազելի շարժուձևով:
Ճանապարհ ընկնելուց առաջ

պարտադիր է հիշել առաջին սերը:
Գուցե այս ամենը իզուր պատմություն է,
չէ՞ որ ինչ կատարվում է, ճիշտ է կատարվում,
և վերջաբանն իմանալը սոսկ անմտություն է:
Ահա և անապատը՝
իր շարժուն և խոսող ավագահատիկներով:
Փակիր աշքերդ և ասա արագ.
—Ռ՞ն ես սրանցից:—
Եվ հենց որ մարի հնչունդ վերջին,

կլինի հրաշք՝ կելնի արևը,
լուսինն էլ կելնի, աստղերն էլ կելնեն,
և ծունկի կիշնես,
և հուզմունքի ու աղոթքի բառերը դուրս կսողան
բաղաքակրթության նիկելած ուղեղիդ անցուղիներով:



Ինչ-որ հեռու հեռավոր երկրում
ապրում է թագավորը
և հրամաններ է արձակում։
Նա ամեն առավոտ շարում է զորքը,
համբուրում է թագուհու ճակատը,
հետո լվացվում է
և դուրս է գալիս թափառելու։
Զորքը գնում է նրա ետևից,
և նրանք գնում են դաշտերով, ձորերով,
անտառներով, լեռներով
և շեն հանդիպում թշնամուն։
Եվ հետո նրանք ետ են դառնում.
Լեռներով, անտառներով, ձորերով, դաշտերով,
տիսուր ետ են դառնում։
Թագավորը փոշոտված է անտառելի,
զորքը փոշոտված է անտառելի։
Նրանք լվացվում են,
և թագավորը հրամաններ է արձակում,
և թագավորը համբուրում է թագուհու ճակատը
և գնում է քնելու։

Այսպես նստել իրար դեմ
և այսպես երկար լոել:
Ու մեկ-մեկ թվում է ինձ,
թե երկուսս էլ փայտից ենք պատրաստված,
կամ, ասենք, աշնան չորացած տերևներից:
Այսպես նստել իրար դեմ
ու երկար նայել իրար:
Չունենալ ոչ մի հիշողություն,
կարծես հենց նոր ենք ծնվել:
Մեր կողքին մարդիկ կծիծաղեն,
մենք շենք լսի նրանց,
կասկածանքով կնայեն մեզ,
իսկ մենք՝ իսկապես փայտից,
մեր կողքին մարդիկ կտխրեն,
հետո դանդաղ կծերանան:
Այսպես նստել իրար դեմ
և այսպես երկար լոել:

Հետո երկնքից մոխիր կթափվի:
Հետո կլինի քամի:
Եվ քանի որ մենք պատրաստված էինք
աշնան դեղին տերևներից՝
Կցրվենք դես ու դեն
և էլ շենք լինի:

Փողոցներով անցնում են կույր աղջիկներ:

Նրանք գավազան ունեն ձեռքներին

և քայլում են քսվելով պատերին:

— Եթե դու ինձ սիրեիր,

ես քեզ կտայի քո կապույտ աշքերը:

Փողոցներում

առանց ամաչելու լալիս են բանաստեղծները,

նրանք գլուխները կախել են,

իսկ կույր աղջիկները քայլում են

և շեն տեսնում նրանց:

— Ես քեզ կտայի քո կապույտ աշքերը,

և դու կտեսնեիր ինձ:

Փողոցներում

Կամաց-կամաց իջնում են վարագույրները,

և կամաց-կամաց փակվում է բեմը,

և գլուխ տալով կամաց-կամաց

հեռանում են կույր աղջիկները,

և բանաստեղծներն են հեռանում,

և վարագույրը վերջնականապես իջնում է:

Վարագույրից այն կողմ լսվում է բարձրածայն

հեծկլտոց-

վարագույրից այն կողմ

բոլորովին ուրիշ աշուն է:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Դու այս դատողովունը կհամարես պարզունակ: Թող ալդպես լիճի:
ՎԻՆՍԵՆԹ ՎԱՆ-ԳՈԳ

Ամեն անգամ ինչ-որ բան կորցնելիս ես հիշում եմ քեզ,
ամենադժվարը քեզ կորցնելն էր— ես ոչինչ չէի հիշում,
իսկ հիմա նույնիսկ թերթ կարդալիս ես ապահով եմ՝
ոչ ոք չի խոցի ինձ մեջքից:

Այդ ե՞րբ էր, առաջին անգամ վառեցին գրքերը.
Կիսամերկ մարդիկ էին վազում փողոցներով,
ցեխաշրի մեջ լողում էին վարդերը,
և ոսկեզօծ կառքերն էին սուրում

երջանկությունից խելագարված:

Ամեն անգամ ինչ-որ բան գտնելիս ես կորցնում եմ քեզ,
ամենահեշտը քեզ գտնելն էր— ես ոչինչ չէի հիշում:
Դժվար է երջանկությունը պահել երկու ձեռքերով,
երր աշքերիդ մեջ արցունքի կաթիլներ կան։
Իսկ անտառը կամաց-կամաց սափրվում է երկրի երեսից,
կապիկներին մարդ դառնալուց զատ այլ ելք չի մնում.
անխելք կենդանիներ, զգում եք ձեր անխոհեմ քայլը՝
դուք վեպերի հերոսներ կդառնաք,
դուք վերարկուներ կհագնեք,
ինտրիգներ կսարքեք,
կսիրահարվեք և կխորտակվեք վերջնականապես։
Ես երգում եմ այս երգը ամենավերջին անգամ։
Իսկ վաղը գուցե պատերազմ սկսվի.

Կապիկները վառվելով՝ թիթեռների թեթևությամբ կթափվեն
ծառերից,

և կիսամերկ մարդիկ կվազեն փողոցներով։
Դժվար է երջանկությունը պահել երկու ձեռքերով,
երբ աշքերիդ մեջ արցունքի կաթիլներ կան։

ԳԱՐՈՒՆ

Եվ նորից գարուն—Հին և սիրելի կինո,
որն արդեն տեսել ես շուրջ քառասուն անգամ,
նախ ձյունն է հալվում, ծառերն են ծաղկում հետո,
ապա սիրահարվում ես՝ կարգն է սովորական։
Փողոցում բույրեր՝ ծաղկանց, խոտերի,
և զգեստների՝ քիմմաքրումից հանած...
Ինչ դժվար է հիմա նայել աղջիկներին,
առավել դժվար է շնայելը նրանց։
Իսկ էլ առավել դժվար է մնալ,
պարկեցած պատյանում խելոք մտքերի,
վերարկուիդ պես նետել, հեռանալ
քո տարիների ծանր հոգսերից։
Եվ սմբած հոգիդ, որ թուղթ է կերել
ու դեղնած էջեր՝ գրքերի տրտում,
հիմա ուզում է ապրել ու սիրել,
ինչպես վայել է կենդանի մարդուն...
Եվ նորից գարուն—Հին և սիրելի կինո
և ես մուտքի մոտ մոլորված կանգնած,
Այս, երանի թե ներս շթողնեին,
երանի լիներ նորից արգելված...

ՌՈԹԻՆՁՈՆ ԿՐՈՒՁՈ

Օրվա բոլոր ժամերին խմում էր իր սուրճը
և ուշադիր ու համառ նայում անցնող-դարձող մարդկանց։
Ծխախոտ էր վառում և լուցկու հատիկով
դանդաղ խառնում էր սուրճը և նայում էր բոլորին
և միայն հավաքարարին չէր նայում,
որն անվերջ փնթփնթում էր ու բողոքուա
անձրեսից, որը երբեք չի կտրվում,
արեից, որը երբեք մայր չի մտնում,
ծերունուց, որն ամբողջ օրը նստած է սրճարանում,
և մարդկանցից, որ անցնում են նրա կողքով
և չեն տեսնում նրան...
Եսկ ծերունին խառնում էր իր սուրճը
և նայում էր պատուհանից դուրս,
ուշադիր ու համառ նայում էր պատուհանից։
Եվ մի օր նա կանչեց հավաքարարին պառավ
և ասաց, որ այլևս չի կարող սպասել,
և ասաց, որ աշքերը սկսել են վատ տեսնել,
որ ինքը հոգնել է ու պիտի գնա տուն,
բայց եթե հանկարծ մի նավ,
ընդամենը մի նավ մոտենա պատուհանին,
նշանակություն չունի բնավ՝ մեծ նավ կլինի, թե փոքր,
թող խնդրի, որ սպասի իրեն,
թող խնդրի, որ մի քիչ սպասի...»

և հեռացավ ծանր ու դանդաղ քայլերով...
գլխարկը մոռանալով սեղանի վրա:
Եվ անցնում էին օրերը, ու անձրևները շէին կտրվում,
արեք մայր չէր մտնում, և անցնում էին օրերը,
և դարձյալ հավաքարարն էր, որ անվերջ
փնթփնթում էր ու բողոքում ծերունուց,
որը շգիտես ինչու այլևս չի վերադառնում,
նավերից, որ անցնում էին պատուհանի կողքով
ու կանգ շէին առնում
և վերջապես, գլխարկից, որը մնացել էր սեղանի վրա,
ու ինչ-որ բան է ուզում պառավին ասել,
բայց ձայն չի հանում...

ԱՆՑԱԾ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Անցել են ժամանակները, երբ մարդիկ փողոցներում
ուրիշների կորցրած երազներն էին որոնում—
Հիմա որոնում են առավել կոնկրետ բաներ:
Անցել են ժամանակները,
երբ ես թփերի մեջ թաքնված,
աղիողորմ լալիս էի իմ անցած սիրո համար,
և ընկերս երկար որոնելուց հետո,
վերջապես գտնելով ինձ, հորդորում էր՝ դուրս արի,
առիթը շափազանց հարմար է հարբեցողության համար...
Իսկ ընդհանրապես
Հիմա քիչ են խմում+
Ավելի շատ խոսում են խմելու մասին:
Էլ ինչու հանկարծ ես հիշեցի քեզ:

Էլ ինչու հանկարծ հիշեցի, երբ անցել է նաև քո ժամանակը,
 երբ շուտ էի քնում, որ շուտ սկսվի նոր օրը
 և հնարավորին շափ արագ կարողանամ տեսնել քեզ,
 արագ, ինչպես մանկության օրերին,
 երբ գնում էինք լողանալու և վազքով,
 արդեն գետն երևալիս, անհամբերությունից շնչակտուր,
 վազքով շորերից ազատվում էինք
 հենց վազքի մեջ... Ես այդպես շտապում էի
 քեզ տեսնելու, ու թեև անցել են ժամանակները,
 բայց սիրտս խփում է շնչակտուր,
 որովհետեւ սկսում եմ վազել ականջներս փակած,
 որովհետեւ ինչ-որ ձայներ են հասնում ինձ,
 որովհետեւ զգում եմ, որ անցնող ժամանակները
 անցել են ուրիշ ճանապարհով,
 իսկ այստեղ ամեն ինչ նույնն է մնացել,
 իսկ այստեղ նվիռմ է ընկեցիկ երեխայի նման,
 աղիողորմ լալիս է իմ անցած սերը
 թփերի մեջ շարունակ...

ՏՈՒԱՎԱՃԱՐ—ՕՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ
 ՄԻԱՅՆԱԿ ՏԵՐԱՑՈՂ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ,
 ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Հատուկ ծրարներ, որ շունեն ետադարձ հասցե—
 ինքներդ ձեզ նամակներ գրելու համար:
 Անթերի աշխատող կողմնացույց,
 որի սլաքը միշտ ձեր տան կողմն է ուղղված:

Շախմատի հնարամիտ խաղատախտակ—
միայնակ խաղալու հարմարեցված:
Մայրենի լեզվով գրուցագիրք—
ինքն իր հետ գրուցելու համար:
Սքանչելի վեպեր, պիեսներ, բանաստեղծություններ,
որոնց տողերի արանքից աննկատելիորեն հանված են
մի շարք անկարենոր բառեր (հայր, մայր, քույր, եղբայր, սեր,
բարեկամ,
մտերիմ, հանդիպել, համբուրվել, հիշել և այլն):
Ընտիր կահույք՝ բաղկացած մի մահճակալից և մի
գիշերանոթից,
որն հարմարեցված է մահճակալի տակ:
Հեռախոսագիրք,
ուր միայն «Շտապ օգնության» համարն է գրանցված:
Օրացույց, ուր շկան տոնական օրեր...
Զմոռանաք գնել ամենակարենոր ու ամենաանհրաժեշտ

նորույթը՝

Էլեկտրոնային նրբագեղ արկղիկը,
որի հատուկ անցքից եթե 5 (հինգ) կոպեկ գցեք,
մարդկային ջերմ ձայնով կիսոսի ձեզ հետ,
կարտասանի, օրինակի համար, այսպիսի
նախադասություններ。
«Բարի օր», «Ինչպես եք», «Ու մի տեղդ չի՞ ցավում»,
«Ինչ լավ եղանակ է, այնպես չէ», «Ուտելու բան կա՞
տանը...»

Եվ այս խոսքերը լսելուց հետո ձեր գեմքի հատուկ
անցքերից
շափազանց անհրաժեշտ ու շափազանց տաք հեղուկ կծորա,
որն հիմա չգիտեմ ինչպես,
բայց մի ժամանակ արցունք էր կոշվում...

ՓՈՔՐԻԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

Տում,

որտեղ ես կուզենայի ապրել:
Լուսամուտի գոգին ծաղիկներ:
Ջրով լի գրաֆին՝ դրված սեղանին:
Կիսատ ընթերցված գիրք բազմոցի վրա,
թանձր վարագույր, որի ետևում թաքնված
ժամերով կնայեի պատուհանից,
թե ինչպես է
բակում խաղում փոքրիկ աղջիկս,
ոտից գլուխ փոշոտված:
Եվ ես կուզենայի ապրել
անվերջ:

ՄԻ ՄԱՐԴ ԵՎ ՄԵԿ ՈՒՐԻՇ ՄԱՐԴ

Համեստ, ինքնամփոփ բնավորություն, ոմեր նա,
ով առաջինը հնարեց կրակը հանգնելու գյուտը,
Եվ արժե՞ո որոնել նրան
բազմամիլիոն մարդկանց այս խայտաբղետ խառնամբոխի
մեջ,
Ուր ոմանք ուրախանում են առանց պատճառի,

իրար հաջողություն են մաղթում,
ելումուտ են անում խանութները
և ծխի հոտ առած անհանգիստ շորսրոլորն են նայում՝
երկի ինչ-որ մի տեղ ինչ-որ մի բան է վառվում:
Ահա զնացքը կամաց-կամաց մոտենում է կայարանին,
և թաց կառամատույցը մերձենում է քեզ անծանոթ փայլով։
Կայարանից այն կողմ մարդկանց մի նոր բազմություն է։
Ոմանք քնած են։
Եվ ես մոտեցա այն մեկին, որը քնած չէր
և մեն-միայնակ, անհանգիստ շրջում էր կառամատույցում,
պարզ հասկանալով, որ ինչ-որ մի տեղ
վառվում է ինչ-որ մի շատ կարենոր բան։
Ներեցեք, ասացի ես նրան, դուք չե՞ք տեսել
համեստ ու ինքնամփոփի բնավորության տեր մի մարդու,
որին արժեք որոնել բազմամիլիոն մարդկանց
այս խայտարդետ խառնամքոխի մեջ։
Հնչեց նվազախումբը, և ինձ ծաղիկներ մատուցեցին։
Արդեն կամաց-կամաց մոտենում է կրակներ հանգժնելու
ժամանակը,
և շուտով, շատ շուտով մռայլադեմ ժայռի վրա
մի մարդու կողքին իր պատվավոր տեղը կդրավի մեկ ուրիշ
մարդ,
նա, ով առաջինը հնարեց կրակը հանգժնելու գյուտը։
Համեստ ու ինքնամփոփի բնավորության տեր մի մարդ,
որն հասկացել է, որ եթե ծխի հոտ է գալիս,
ուրեմն վառվում է ինչ-որ մի տեղ
անընդհատ վառվում է
ինչ-որ մի շատ կարենոր բան...»

ՆԱՄԱԿ ՀԵՌԱՎՈՐ ԲԱՐԵԿԱՄԻՍ

Փշենք քամու փշած ուղղությամբ
և ծիծաղենք խելագարի վրա:
Զեռքերդ գրպաններդ խրած և ոտքերդ ամուր հենած հողին,
խորը շնչելով, որպեսզի թոքերդ աշխատեն ամրող
կարողությամբ
և հնարավորին շափ շատ թթվածին անցնի արյանդ մեջ
և սիրտդ աշխատի ոչ արագ, ոչ դանդաղ,
այլ այսպես՝ միջին արագությամբ,
և մի մոռացիր ծիծաղել խելագարի վրա,
որն ասում է, թե երկիրը քառակուսի է
և նույնիսկ՝ եռանկյունի, ոչ միշտ, իհարկե,
այլ միայն հատուկ պահերի և հատուկ տրամադրության
գեպօւմ,
որն ասում է, թե ծառն է աճում խնձորի վրա
և հողն է աճում խոտերի վրա,
և արել ոչ այլ ինչ է, եթե ոչ զերմ վերաբերմունք,
շափազանց զերմ վերաբերմունք՝ երկնքից առաքված
մարդկանց,
իսկ անձրես շատ հազվադեպ է գալիս,
ավելի հաճախ գնում է
և այն էլ անհայտ է, թե ինչ ուղղությամբ...
ծիծաղել, անվերջ ծիծաղել,
թվաբանության դասագիրքը և մնացած բոլոր դասագրերը

ամուր սեղմած թէիդ տակ
և բազմապատկման աղյուսակը թիկնոցի նման գցած
ուսերիդ,

և եթե ուշադիր նայեն աշքերիդ մեջ,
ապա կերևան նյուտոնի երեք օրենքները—
ճագարի նման բանտարկված բիբերիդ քարանձավում,
իսկ ավելի խորքում՝ ակաղեմիկուների կուռ շարքերն են,
որ պտտվում են կրծքավանդակումդ
ժամացուցի սլաքի ուղղությամբ:

Ծիծաղել, անվերջ ծիծաղել;
ի վերջո, ծիծաղը դրական է ներգործում մարսողության վրա,
և ինքնըստինքյան բարձրանում է տրամադրությունդ,
բայց ոչ այնքան բարձր, որ շարժես հարեւաններիդ նախանձը
և ոչ այնքան ցածր, որ տարբերվես մյուսներից.

և աշքի տակով զգոն հետեւում ես
նրանց, մյուսներին,
ձգտելով ոչ առաջ ընկնել
և, աստված մի արասցե, հանկարծ ետ մնալ,
այլ այսպես, բոլորի հետ համընթաց,
ուս-ուսի և ստամոքս-ստամոքսի
կպտտվեք անվերջ ձեր կլոր երկրագնդով,
կպտտվեք ձեր շափից դուրս կլոր երկրագնդով,
ժամացուցի սլաքի ուղղությամբ:

ՌՈՄԱՆՍ

Ես հիմա կուզենայի պառկել մի որևէ հարմար տեղ
և մեռնել քո սիրուց—
մեռնել ամենախսկական մահով,
մեռնել ամենախսկական սիրուց:
իսկ ո՞րտեղից գտնել մի հարմար տեղ,
գուցե քաղաքային այգո՞ւմ,
մաքուր խուզած կանաչ խոտերի մեջ,
ծառերի արանքում...բայց թնդում է փողային նվազախումբը,
բայց թնդում են բարձրախոսները
և կարուսելներն են ճռչում,
և երեխաներն են վազվզում ամենուրեք,
և թոշակառու կանայք (թու, այս ով է
պառկել կանաչների մեջ, երևի հարբած է,
չի էլ ամաշում...):
Գուցե տո՞ւն զնամ, պառկեմ բազմոցի վրա,
Փակեմ դուռ ու լուսամուտ...
բայց հեռուստացույցը երգում է բարձրածայն,
բայց հեռախոսը զնգում է անդադար,
իսկ վերևի հարկում մի հայր դաստիարակում է երեխային,
իսկ ներքեւի հարկում
մի երեխա դաստիարակում է հորը,
և դժգոհում են իրարից անթույլատրելի եղանակներով,
գումարած՝ ծորակը, որից շուրջ է կաթում անդադար...
Միգուցե զնամ քաղաքից դո՞ւրս,

Հեռու մարդկային ժխորից,
վերջին լուրերից, տրամվայից, պինոչետից, ասպիրինից,
կպառկեմ բաց երկնքի տակ,
գլուխս կդնեմ շրբ քարին,
կնայեմ լուսնին և քո դեմքը կտեսնեմ,
քո աշքերը կտեսնեմ, և սիրտս կմարի ցավից...
Բայց քաղաքը ոչ մի կերպ չի վերջանում,
այլ շարունակվում է քաղաքատիպ ավանով,
հետո ավանատիպ գյուղերն են սկսվում,
և ապա դարձյալ նույն քաղաքն է
ելնում քո դեմ, շատ պարզ պատճառով՝
որովհետև երկրագունդը կլոր է,
և ամենուգեց նույն կլոր լուսինն է,
կլոր ու ծանոթ,
ծանոթ, ինչպես նույն մուտքի բնակիչ,
որի անունը չգիտես, բայց բարեկում ես կանոնավոր,
և նույն երկինքն է՝
Մենդելեևի աղյուսակի նման ձգված վերևում,
և աստղերը շարված են ամեն մեկն իր վանդակում
և ահա աղյուսակում, վերջապես,
գտնում եմ մի դատարկ վանդակ,
զնում պառկում եմ ապահով
և մեռնում եմ քո սիրուց,
ամենախսկական մահով—
ամենախսկական սիրուց...

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Ես այդքան մեծ ու զարմանալի գետ երթեք չէի տեսել:
Անհնարին մի գետ, որ հոսում էր բոլոր ուղղություններով
և որի մեղավոր ջրերում
լողում էին անմեղ ձկներ
և ինչ-որ զարմանալի բույսեր, որ գետի խորումկ հատակից
արագորեն աճում ու բարձրանում էին վեր
և ձեռքերի նման պարզվում էին երկինք
և հետո հուսահատ ժալվում էին նորից,
նույն արագությամբ սուզվելով գետի ծանր ջրերի մեջ:
Բայց պիտի երազ տեսնես՝ անվերջ կրկնվող պատկերներով,
և բոլոր պատկերներում նույն հայացքն է,
որ նայում է բոլոր ուղղություններով,
և նույն ձկները, որ լողում են նրա աշքերի մեջ,
հեռավոր նմանություն ունեն հին և մեռած բառերի,
որոնք մթան մեջ փայլվիլում են
քարանձավներում սովամահ ճգնավորների
հազարամյա քաղցած բիբերով—
հին և սովամահ բառերի, որոնք խեցիներ են դատարկ,
և կյանքը՝ խխունջը ճերմակամիս,
վաղուց լքել է նրանց:
Բայց պիտի երազ տեսնես՝ մեծ ու զարմանալի մի գետ,
որի ավազների միջից
պսպղում են բոլորովին կենդանի ժամացույցներ,

և դու պարզ լսում ես նրանց կտկողը համերաշխ
և ձկնորսի ճիշք զվարթաձայն, որը քաշել է ուռկանը գետից,
իսկ ուռկանի մեջ մի վիթխարի ժամացույց է թպրտում՝
անվերջ կրկնվող պատկերներով,
և ձեռքը, որ սահում է դեմքի վրայով,
և աշքերը, որ արդեն ճանաշել են քեզ,
և աշքերը՝ հազարամյա քաղցած բիբերով
սկսում են դանդաղ ժպտալ...

ՎԵՐՁԻՆ ՀԵՔԻԱԲ

Գրադարանները պայթում են գրքերի առատությունից:
Գուցե թե սա վերջին դարն է,
կամ էլ առավել սարսափելին՝ վերջին տարին:
Իսկ քանդակագործը քանդակում է անվերջ,
և արվեստանոցը բերներերան լցված է քանդակներով,
և տունը լցված է քանդակներով,
և կինն ու երեխանները ստիպված փողոցում են ապրում,
բայց շուտով փողոցն էլ կլցվի քանդակներով,
իսկ քանդակագործը քանդակում է անվերջ,
և ոչ մի հնար շկա նրան կանգնեցնելու:
Գուցե թե սա վերջին դարն է,
կամ էլ առավել սարսափելին՝ վերջին տարին:
Բուռն շինարարություն է ծավալվել վերջին անմարդարնակ
կղզում՝

Հօթելներ, մօթելներ, բազաներ և տուրբազաներ,

ամենուրեք փոշի, վերամբարձ կռունկներ, ցեմենտ, կիր ու
ավագ,

և աղքահավաք մեքենան ծով է տանում լցնի ինչ-որ
ցնցոտիներ, փալաս-փուլուս, ոռքինզոններ և ուրբաթներ՝
թափքի մեջ բարձած...

Գուցե, իսկապես սա վերջին դարն է,

կամ էլ առավել սարսափելին՝ վերջին տարին:

Իսկ հեքիաթն ընթանում է իր սովորական հոմավ

նույն թագավորի տղան և թագավորի աղջիկը նույն,
նույն բարի հրեշտակը և նույն սատանան շար...

Միայն թե, լինում է չի լինումի փոխարեն—

եղել է ու այլևս չի լինի...

Իսկ հեքիաթի վերջում

երկնքից երեք նեյտրոնային ռումբ են ընկնում,

մեկն ինձ, որպես հեքիաթասացի,

մյուսը ձեզ, որ համբերությամբ ապրեցիք այսքան տարիներ,

իսկ երրորդը՝ հենց այնպես,

հետաքրքրության համար:

ԿՈԼՈՒՄԲՈՍ

Փշում են համընթաց քամիները,
և առագաստները շնչում են ամբողջ ուժով՝
նիկոտինից շաղտոտված շահել ու առողջ թոքերի պես
և անամպ երկնքում աստղերն անսխալ նշում են ուղին,
և դու պատուհանի մոտ նստած՝
նայում ես անծայրածիր օվկիանոսին
և դու մտախոհ թաթախում ես փետուրե գրիշդ թանաքի մեջ
և գրում ես. օր առաջին...
... Ես հիմա չգիտեմ,
երազում եմ տեսել, կարդացե՞լ եմ, թե պատմել է ինչ-որ
մեկը,
բայց ես հիշում եմ այնպես, կարծես թե երեկ է եղել,
կամ ամենաշատը՝ երեկ չէ առաջին օրը.
մեջքի վրա պառկած եմ տախտակամածին,
մի անհայտ, վիթխարի նավի մեջ,
մեն-միայնակ պառկած նայում եմ երկնքին,
և երկինքը լցված է երեքթեանի թոշուններով,
Ամուրներով, որ անվրեապ խոցում են խնձորները կարմիր,
և հետո ինչ-որ տեղից երգի ձայն է լսվում, որից
քնում և էլ չեն զարթնում երջանիկ սիրահարները,
և հետո ամեն ինչ ծածկվեց ալիքների շառալով,
ծանրումեծ ճոմլոցներով կայմերի,
և փշում,

անվերջ փշում են համընթաց քամիները,
և առագաստները շնչում են ամբողջ ուժով...
Երեկի թե ես ինչ-որ մի ժամանակ բոլորովին շեմ կասկածել
և շատ լավ եմ իմացել, թե ուր եմ գնում,
երեկի թե ինչ-որ մի ժամանակ
գնացել եմ աստղերի անսխալ նշած ուղիով,
բայց ես հիմա շեմ հիշում գտե՞լ եմ, թե՞ կորցրել,
բոլորովին շեմ հիշում՝
գնո՞ւմ եմ, թե՞ ետ եմ վերադառնում արգեն...
Բայց ես ամեն օր նստում եմ պատուհանի մոտ,
շկա ավելի հետաքրքիր զբաղմումք,
քան նստել պատուհանի մոտ,
ուշադիր նայել երկնքին, սպասելով առաջին աստղին,
սպասելով թոշուններին՝ մեկ և ավելի թևերով...
Եվ մի օր,
գիտեմ, կլինի այդպիսի մի օր,
միանգամից կտատանվեն վարագույրները՝
ուրեմն փշում են համընթաց քամիները,
և առագաստները շնչում են ամբողջ ուժով,
և պարզորոշ կլսեմ երգը
և կուզենամ քնել ու այլևս շարթնանալ
և կտեսնեմ, վերջապես կտեսնեմ
անծայրածիր օվկիանոսի գորշ ալիքների վրա,
կտեսնեմ սիրտս՝ խոցված նետով,
երջանիկ ցավի մեջ բռնված
և արցունքակալված աչքերով
կթաթախեմ գրիշս թանաքի մեջ
և կգրեմ. օր առաջին...

ՈՒԳԱ

Մի բարակ անձրև է հարկավոր քեզ նորից հիշելու համար,
մի թեթև քամի, որ օգնելու է
թերթելու այս գիրքը հաստաբեստ՝
լցված սեսպիտակ նկարներով:
Ի վերջո, հրաշալի էր ծխել թալթիկ ծովի ափին,
երբ քեզ հետ լուսմ են համերաշխ
և ինչ է երշանկությունը՝ մի տուփ ծխախոտ,
լուցկի, որ խոնավությունից այլևս չէր վառվում,
և զարմանալիորեն մանր աստղեր,
ավելի մանր, քան ավազը՝ ծովեղերքին տարածված,
կամ, գուցե, երկինքն էր շատ բարձր
և երազները սավառնում էին շատ վերևում
և ահա թե ինչու են լատվիացիները բարձրահասակ այդքան,
այլ կերպ ինչպես կերպես այդքան բարձր երկնքի տակ,
կամ, գուցե, ծովն էր շատ ծանծաղ,
ինչպես սկսնակ բանաստեղծի տողացի թարգմանությունը,
որն արդեն քանի օր է ընկած է սեղանիս...
Տրամվայի մի հեռավոր զնդոց էր՝ հարկավոր
քեզ նորից տեսնելու այնպես,
ինչպես հենց այն պահին, երբ մեկն ինձ լատվիերեն
ինչոր բան հարցրեց,
իսկ ես ամենաին շտարակուաելով պատասխանեցի հայերեն
և հետո

սկսեցինք բարձրածայն ծիծաղել ինչ-որ մի խառը լեզվով,
թփթփացնել իրար ուսի և նորից ծիծաղել...

Ի վերջո, հրաշալի էր ծիծաղել թալթիկ ծովի ափին,
երբ բարակ անձրև էր գալիս,
և քամին շգիտես օգնում էր, թե խանգարում
թերթելու այս գիրքը հաստարեստ,
որ հիշողություն է կոշվում...

ԱՌՈՅՑԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ինչ խոսք, կարելի էր և բաց թողնել այս պատմությունը
և շարունակել բանաստեղծությունն իր հունով,
ի վերջո, սքանչելի եղանակ է սիրուց տառապելու համար,
և պատշգամքից բացվող տեսարանը
նպաստավոր պայմաններ է ստեղծում հորդարուխ
զգացմունքներիդ առաջ:

Սակայն ճշմարիտն այն է,
որ հիմա կանգնած-ձմերուկի հերթում,
կանոնավոր տարուրերվում եմ մարդկանց մի հոծ խմբի հետ
և աղմուկ-աղաղակից ոգեշնչված՝
ձգտում եմ հնարավորին շափ մոտենալ երանելի
պատուհանին,
որի ետևում կանգնած երազկոտ աշքերով գործակատարը՝
միշին տարիքի ճերմակահեր մի տղամարդ,
հայացքն ինչ-որ անհայտ ուղղությամբ հառած՝
խաղաղվելու կոչ էր անում մեզ՝
պատրիկավայել շարժումով ձեռքը վերև պարզած

և գունատ շրթունքները հազիվ շարժելով
շշնջում էր. «Միրեցեք զմիմեանս»,
և անսփող դաժանությամբ թալանում էր մարդկանց,
բոլորին անխտիր՝ հաշմանդամներին, ծերունիներին,
կանանց...

Ինչ խոսք, կարելի էր և բաց թողնել այս պատմությունը,
սակայն, երբ մի պահ նայեցի գործակատարի երազկոտ
աշքերին,

հիշեցի հանկարծ ինձ անվերջ տանջող մի երազ,
և տարօրինակ հաճույքից ու սարսափից սիրտս նվազեց՝
երազկոտ աշքերով մի վիթխարի վիշապօձ
և կիսամերկ վայրենիների մի հոծ բազմություն՝ իրար ետևից
շարված
և մեկը մեկից առաջ ընկնելով գնում էին մտնելու վիշապի
երախը՝

նրա երազկոտ աշքերից հմայված...
Ինչ խոսք, կարելի էր և այս պատմությունն էլ բաց թողնել
և շարունակել սիրային բանաստեղծությունն իր հունով,
բայց արդեն հասել էր իմ հերթը,
և ես արդեն կիսով շափ վիշապի երախում էի՝
հաճույքից ու սարսափից նվազած...

Տարիների հետ բառերի մեծ մասը
սկսում է դառնալ ավելորդու
Դա տիսուր բան է, ինչպես, ասենք, մազերի ճերմակելը,
կամ հետզհետե ծանրացող ցավը՝ ողնաշարի երկայնքով։
Տարիների հետ անձրես դադարում է
նոր միտք հուշել քեզ,
և այն, ինչ առաջ երաժշտություն էր—
վերածվում է հնչունների միապաղաղ վերարտադրության։
Եվ ձմեռը, որի հետ հանդիպումը
ոչ մի ուրախություն չէր առաջացնում քո մեջ նախկինում,
հիմա թշնամի է ատելի,
որին տեսնելիս կուզենայիր փոխել ճանապարհուց,
բայց գիտես, և ինչ օգուտ այդ իմանալուց,
որ բոլոր ճանապարհների վերջում
առատ ձյուն է գալիս
անտանելի խոշոր փաթիլներով։
Սակայն ես գիտեմ, որ բառերն ինչ-որ տեղ կանգ են առնում
և հետո դանդաղ վերադառնում են ետ՝
ծնվելունոր ծնվեղի հետ միասին։
Իսկ քեզ հետ,
հետզհետե ուժգնացող ձյան տակ,
կարունակեն քայլել ընդամենը մի քանի բառ,
ընդամենը
մի քանի ու գլխահակ բառ,
որ պետք կգան քեզ վերջում,
երբ ժամանակը կգա կանգ առնելու
և հրաժեշտ տալու համար...

Ի վերջո կհանդիպես մի խելագարի,
գարնան ծաղկող ծառերի և անձրւի մեջ,
որը սիրելի էր քեզ ինչ-որ մի ժամանակ,
ի վերջո կհանդիպես մի խելագարի,
որն ատում է քեզ
իր խեղված հոգու ամբողջ գորությամբ,
ատում է, որովհետև ինքը կուզենար քո փոխարեն
առավոտյան արթնանալ, սափրվել թեյ խմելով,
ծխել և ծխի հետ զգալ ատամի մածուկի համը լեզվի վրա
և սպա համբուրել կնոշն ու երեխաներին
և գնալ գործի, թեկուզ շաբաթ և կիրակի օրերին,
իսկ դու նրա փոխարեն մնայիր
անհրապույր սենյակի շոր պատերի մեջ
և անհողարաշխ ոռնոցով վազեիր անկյունից-անկյուն...
ի վերջո կհանդիպես... ում հետ ասես, որ շես հանդիպի,
հատկապես եթե գարում է,
երբ ժառերը ծաղկել են,
և սիրտդ կրծքավանդակիդ շոր պատերի մեջ
անհողարաշխ ոռնոցով
վազում է անկյունից-անկյուն...

ՀՐԱԺԵՇՏԻ ԽԱՂ

Կան դա արկ բառեր, կոկիկ, ինչպես կաշվե ճամպրուկներ՝
նիկելապատ, փայլվլուն եզրերով:

Կան բառեր, որոնք ազատորեն ճամփորդում են գնացքներով,
թափառում են կառամատուցների վրա

և նույնիսկ ծխում են՝ հենված կայարանի

շգիտես թե ինչու կապույտ ներկված պատին:

Սակայն դա չէ ամենակարևորը,

այլ այն, որ նրանք հաճախ միանում են իրար,

խմբվում են գլուխ-գլխի, ծիծաղում ու քրքջում են

միահամուռ,

նայում են անցնող կանանց ու աղջիկների ետևից,

ոտք նեն գցում ծերունիներին

և կտտացնում են մաքուր խուզած գլուխներին երեխաների
և հետո գնում են կինո,

նույնիսկ չնայելով, թե ինչ է գրված աֆիշներին:

Սակայն դա չէ ամենակարևորը,

այլ այն, որ նրանք կարող են տարածվել օդի մեջ,

անգույն, արցունքաբեր գաղի նման,

կսողոսկեն սենյակը, ուր միայնակ ապրում է մի մարդ,

որը դեպքերի բերումով հիմա խիստ ծերացել է,

և դատարկ բառերը նրան կպատմեն

ծերությանը հաջորդող իրադարձությունների մասին

և դատարկության մասին,

որը հաջորդում է ընդհանրապես ամեն ինչին:
Եղ ծերունին, ճանճաքշիկը ձեռքին,
զայրացած կվազվզի սենյակով մեկ,
աշխատելով քշել աներեւութ ճանճերին,
հետո հուսահատված կնսուի մահճակալի եղրին;
դատարկված հոգով
դառնացած տրորելով ծնկները շորշորուկ...
Կան դատարկ բառեր,
որոնք անվրեալ կրակում են լցված սրտերի վրա—
դատարկ բառերը, որոնք կույրին ասում են կույր,
կաղին ասում են կաղ
և խրոխտ քայլում են
կոտրված սրտերի փշուր-փշուր ապակիների վրայով։
Սակայն դա չէ ամենակարեւորը,
այլ այն, որ ես ի վերջո հրաժեշտ եմ տավիս ձեզ,
ի վերջո ես հիմա գնում եմ կայարան,
նստելու իմ գնացքը, որը վաղուց սպասում է ինձ,
տանելու է ինձ գնացքը, որը վաղուց տանում է ինձ
հեռու մի տեղ, ուր գետակ կլինի
կամ ավերված մի ամրոց, եսիմ որ դարից խարխլված,
քարերով լցված ջրհոր, աշխարհից խոռված ջրաղաց
և մի քար՝
վրան նստելու,
լռելու,
երկաաար լռելու համար...

ԵՍ ԻՆՉ ԿԱՐՈՂ ԵՄ ԱՆՁ

Իմ այս խեղճուկրակ բառերով,
գրքերով, որ միաբերան ասում են՝ համբերիր,
համբերիր ծնվելուցդ անմիջապես հետո
և այդպես

կամաց-կամաց համբերիր
մինչև փառավոր ավարտը քո օրերի։
Ահա ժամանակը դանդաղորեն ելնում է քո միշից,
շորս կողմում աշքեր,
որ անտարբեր հետևում են քեզ,
ձեռքերի և ոտների անտառ,
որ պատրաստակամ օգնում են
մարմնիդ,

որ շուտ ազատվի երկրային բեռից
և թեթև ու հանգիստ բարձրանա երկինք,
հնարավորության դեպքում՝
դեռ ավելի վերև։

Ես ինչ կարող եմ անել իմ այս խեղճուկրակ բառերով,
ինչպես քայլեմ, երբ արդեն թեքվում եմ հողին,
ինչպես քայլեմ, երբ արդեն կիսով շափ խրված եմ հողի մեջ,
շորացող ժառի պես՝ կիսով շափ հողի մեջ
և կիսով շափ երկնի և երկուստեք մեռած,
և հոգիս վախեցած թռչնի պես ծվարել է շոր ճյուղերի մեջ
և ուր որ է կթռչի։

Ես ինչպես պահեմ նրան իմ այս խեղճուկրակ բառերով,
այս անպաշտպան ու փիլրուն գրքերով, որ ոչ ձմռան ցրտին
են օգնում և ոչ էլ ամռան տապին,
ոդ միայն ասում են՝ Համբերի՛՛
Համբերիր ծնվելուցդ անմիջապես հետո,
Համբերիր,
քանի դեռ թոշումը նստած է ճյուղերին:

ՎԱՅՐԻ ՑՈՐԵՆ

Կոպտացել էր արեից ու քամուց,
բայց երևում էին ազնիվ դիմագծերը:
Իսկ քիստերի մեջ
շարված էին Հատիկները,
գեղեցիկ, ինչպես
տառերը
այբուբենի:

ՆՈՐԻՑ ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երջանկությունն այն է, ինչ մենք կորցնում ենք ամեն օր
և այն, ինչ մենք կորցնում ենք ամեն ժամ,
երբ ձեռքերդ մեկնած ցանկալի ուղղությամբ
անհրաժեշտ բառեր ես որոնում՝
հանկարծակի հայտնված արցունքներդ մեկնաբանելու համար:
Խսկ սիրտդ պիտի բարախի անհնարին ցնծությամբ.
անմոռանալի թափառումներ երածշտության նրբանցքներում
և քրտինք, որ հեղեղի նման ծորում է ներքն
և տղամարդու դժվարին ու անիծյալ մի կյանք,
արև ու անապատ ու շվերջացող քայլեր...
Երջանկությունը... դու դեռ երկար պիտի խռոսես այս ամենի
մասին,

որովհետեւ երջանկությունը հենց այն է,
ինչի մասին խռոսում են երկար ու առանց կեղծիքի,
որովհետեւ այն, ինչ մենք թողեցինք հեռվում
և ինչից հեռանում ենք քայլ առ քայլ,
պիտի մոռանանք արևի տակ շուռումուռ գալով,
ցատկոտելով զրի մեջ, հիանալով փողոցների անթերիությամբ,
աղջիկների ետևից նետելով աններելիորեն կոպիտ բառեր
և խռոսելով, անվերջ խռոսելով:
Դու այս խռոսերը կլսես ամենավերջում,
գուցե անձրե լինի, և դու կծկվես շենքի մուտքի մոտ,
և դու, երբ հեռվից տեսնես, դժվարությամբ տեսնես ինձ,

որ մոտենում եմ քեզ—թրջված ու ողբալի, կիմանաս,
որ երջանկությունը այն է, ինչ հեռվից մոտենում է քեզ
և պիտի անցնի քո կողքով թրջված ու ողբալի,
անծանոթ ու օտար, ինչպես անտարբեր մեկի պատմած
ձանձրալի ու տիրու մի իրողություն։

Սանր է մենակ մնալ անծանոթ քաղաքի ուղիղ կենտրոնում,
բայց դու քայլում ես՝ ոտքերդ զգուշորեն դնելով
աղավնիներից ազատ տարածության վրա։
Ու, դու ձկնորսներ շես տեսնում քո աշքերի առաջ
և ոչ էլ ջրահարսներ մողայիկ սանրվածքով,
բայց դու քայլում ես մի խաղաղ անկյուն գտնելու հույսով,
որտեղ կարելի է նստել մենակ ու հանգիստ,
ծխել և մտածել դանդաղորեն մաշվող մի կյանքի մասին
և երջանկության մասին ծխել ու մտածել.
և հետո կսկսես անհրաժեշտ բառեր որոնել՝
հանկարծակի հայտնված արցունքներդ մեկնարանելու

Համար...

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՎԵՐԱԿ-ՀՈՒՇԱՐՁԱՆԸ

Ինձ այսօր մի լուսանկար ցույց տվեցին՝
հաշմված մի շենք էր պատկերված այնտեղ,
կույր, անձեռ, անոտ մի շենք,
որ կանգնած աշխարհի խաշմերուկներում,
արդեն չորս տասնամյակ,
անվերջ նույն հարցերն է տալիս
անցնող-դարձող մարդկանց
անասելի ցավերից խզված ձայնով.

— Ի՞նչ եղան նրանք, ովքեր ապրում էին իմ հարկի տակ,
ի՞նչ եղան, որ զահել էին, մանուկ էին ու ծեր,
ինչո՞ւ ոչ ոք չի ծիծաղում, ոչ ոք չի երգում,
ոչ ոք չի վիճում, ոչ ոք չի հաշտվում
իմ պատերի մեջ...

Ես ոշինչ չեմ մոռացել,
ես ամեն ինչ հիշում եմ երեկվա պես.
ճոճվող օրորոցներն եմ հիշում,
լացը երեխեքի՝ կեսպիշերին արթնացած,
բարուրները գրկած մայրերի երգն եմ հիշում,
ծերուկների տնքտնքոցն անվերջ

և զահելների սիրո փսխոցը կամաց...
...Ինձ այսօր մի լուսանկար ցույց տվեցին՝
կույր, անձեռ, անոտ, հաշմված մի շենք,
և ես սարսափով փակեցի աշքերս,
պարզ տեսա հանկարծ սառը տիեզերքում

դատարկ պտտվող մոլորակը մեր՝ լույսերը հանգած,
հաշմված ու կույր այս շենքի նման,
որ անցնող-գարձող մոլորակներին՝
անասելի ցավերից խզված ձայնով
անվերջ նույն հարցերն է տալիս.
— Ի՞նչ եղան նրանք, որ ապրում էին իմ հարկի տակ,
ի՞նչ եղան, որ շահել էին, մանուկ էին ու ծեր...

ՍԻԶԻՓՈՍ

Դողդոջուն մատներով բռնիր գարեզրի բաժակը,
Տունը նորից լցվել է խաղալիքներով,
իսկ երեխան դեռ խոսել չի սովորել:
Ինչի՞ մասին ես խոսելու նրա հետ և ինչ բառերով,
դու, որ հոգնել ես նույնիսկ քայլելուց,
զարմանքով նայում ես երեխայիդ,
որն ամեն կերպ ձգտում է մնալ ոտքերի վրա
և թաթիկները առաջ պարզած՝
առաջին քայլերն է անում
աշխարհում,
ուր այնքան դժվար է հիմա.
Հաստատուն կանգնել ոտքերի վրա...

Դողդոջուն մատներով բռնիր գարեզրի բաժակը
և նայիր ծառերին, որոնք հետևողական լավատեսությամբ
կանաչում, տերեակալում ու ծաղկում են կրկին ու կրկին,
ծառերը, որոնք կարողանում են ամեն ինչ սկսել սկզբից,
դատարկ տեղից, երբ առիթն այնքան հարմար էր

Հուսահատվելու համար

ևոչոք իրավունք չէր ունենա մեղադրելու,
որ դու ձեռքերդ ծալած նստել ես,
այնինչ կյանքը դեռ առջևում է
և էլի ինչ-որ բաներ կան առջևում, որոնց անունները
հիմնավորապես մոռացել ես:

Սակայն-դու զուր մի կորցրու ժամանակդ
և դողողուն մատներով բռնիր գարեցրի բաժակը,
թեև բժիշկները քեզ խստիվ արգելել են գործ ունենալ
ալկոհոլի հետ,

և մտածիր կապիկների մասին,
որոնք ջանասիրաբար նախապատրաստվում են մարդ դառնալ
և ամեն ինչ սկսել սկզբից՝
սքանչելի հացում, որը կարող է հետաքրքիր ընթացք
և առավել հետաքրքիր ավարտ ունենալ...
կապիկները, որոնք հպարտ են իրենց երջանիկ

անտեղյակությամբ;

որոնց համար ամեն մի առավոտ՝ առաջին օրվա առավոտն է,
և օրը գլորվելով հասնում է մինչև խավարի պատը,
և հաշորդ առավոտը սկսվում է ճիշտ նույն էջից,
նրանց աղքատիկ կյանքի գրքում, որն ընդամենը մի էջ ունի,
բայց շափազանց շքեղ կազմ, արտակարդ սննդարաբ
րովանդակությամբ...

Իսկ երբ խմեցիր ջրախառն գարեցուրդ—ո՞ւր են իմ թղթերը—
հանկարծ մտածեցիր գու,
ո՞ւր են իմ թղթերը, որտեղ ամեն ինչ գրված է,
ահա տեսնում եք՝ ինչքան հարցեր կան,
որոնց պատասխանները ես գրի էի առել մաքուր

ձեռագրով,

ահա տեսնում եք իրար նման ինչքան կլորիկ քարեր կան,

դրանք իմ օրերն են,
որոնք ես հղկել եմ, համարակալել և շարել լեռան
կատարին,

ո՞ւր են իմ թղթերը,
ես գրել եմ նաև իմ օրերի մասին,
ո՞ւր են իմ թղթերը, չէ՞ որ ես պիտի ամեն ինչ նորից
առվորեմ,

պիտի նորից սովորեմ բառերը,
որոնք գլորվելուց հղկվել են,
ես պիտի նրանց նորից համարակալեմ,
պիտի թողնեմ միայն բարի ու գեղեցիկ բառերը,
որովհետև տունը նորից լցվել է խաղալիքներով,
իմկ երեխան շուտով, շատ շուտով
խռաել կողորի...

Մի հոգնած լեռ

անտառը պիշակի նման գցած ուսերին,

և պիշակի գրանից դուրս է ցցվել

սրած մատիտը եկեղեցու գմբեթի:

Պատմության դասագրքերը

սնկերի նման աճել են անտառի խորքերում:

Նորից ծնվել,

նորից ծնվել—անվերջ կրկնում էր արձագանքը,

և հանկարծակի եկած կալծակը

առաջին տպավորության պես վառ՝

սե-սպիտակ լուսանկարվեց աշքերիդ առաջ:

Եվ մի հոգնած լեռ,

ամեն ինչից հոգնած,

թեթև ճռճվեց տեղում և անցավ հազար տարի:

Եվ իսկույն նոր թոշուններ հայտնվեցին անշարժ թևերով,

քամին գտավ համապատասխան էջը

պատմության դասագրքերում,

և կովերի համերաշխ նախիրն անցավ

համարակալված՝ սպորտային ավտոմեքենաների նման

և հովիվը՝ շփոթված համընդհանուր ուշադրությունից

և հովիվը՝ Պատոնի իմաստուն թախիծը աշքերի մեջ:

Վերջապես ինչ-որ մարդիկ եկան՝

աշխատանքային կոկիկ համազգեստներով,

շափած-ձեած շարժումներով զգուշորեն

հանեցին պիշակը լեռան հագից

և ապա ընկան-նրա թևերը

և տարան ինչ-որ անհայտ ուղղությամբ:

Անցավ ևս հազար տարի:

Գոնե ինչ-որ մեկը մնար
անցած օրերի մասին խոսելու համար։
Խունացած կապույտ աշքեր՝
ներկը ճաքել է տեղ-տեղ,
իսկ ակնոցի ապակիները վաղուց շկան,
և անցքերը փակված են հին լրագրերով։
Մի քանի հնամաշ տրամվայ,
որ ծեծված շների նման
պոշերը քաշած վազում են ետին փողոցներով՝
շատ շուտով։
Նրանց էլ կվտարեն քաղաքային երթկեկությունից։
Մի հեռավոր քաղաք,
որտեղից հայրս վաղուց նամակ չի գրում։
Թիթեռի թեռերի նման ծակծկված հիշողություններ,
որ շորանում են՝ կախված մտքիս թելից
և այն էլ կտրվում է տեղի, անտեղի...
Անձրեկից թրջված ծխախոտներ,
որ արևկող են անում պատուհանի գոգին։
Տաք շրով լի տաշտ,
և գուռ ոտքերդ շրի մեջ
անկողնուդ նստած,
վերնաշապիկիդ կոճակն ես կարում կենտրոնացած։

Ամառվա սարսափելի շոգ էր,
բայց ժպիտը սառել էր դեմքիս;
Առույգ շարքերով գնանք դեպի դաշտերը
և վերջին ծաղիկները պոկենք,
և ասֆալտ պատող մեքենան
թող գլորվի մեր ետևից:
Վերջին ծաղիկները պոկենք,
վերջին տերևները պոկենք,
վերջին խոտերը պոկենք
և գնանք,
և գնանք առույգ շարքերով,
և ասֆալտ պատող մեքենան
թող գլորվի մեր ետևից:
Եկ երբ կշորանա վերջին ծաղիկը,
և խելագարված վերջին մեղվի
դիակը կծածկի ավազը տաք,
և երբ կշորանա վերջին տերևը,
և ծառը կփշրվի հազարամյա մումիայի նման,
և երբ կշորանա վերջին խոտը
և արևի շիկացած շողից
ծղրիդը կրոնկվի լուցկուց պայժառ—
դուք կտեսնեք նրան՝
ամառվա սարսափելի շոգին գետնին անշարժ տարածված,
ամառվա սարսափելի շոգին ժպիտը սառած դեմքին
և աշքերը բաց...
Եվ ասֆալտ պատող մեքենան
քնքշորեն կփակի նրա աշքերը թաց:

ՕԳՈՍՏՈՍ

Զարմանալի ամիս,
որի լայնքով ու երկայնքով առյուծներ են թափառում՝
ծույլ-ծույլ թափահարելով պոշերը։
Մի գունագեղ Աֆրիկա,
որը հարմարողեն տեղավորվել է երեսուն օրերի մեջ։
Մտեղծված են սքանչելի պայմաններ դդումների
Հասունացման համար,
և չկա ոչ մի լուր քեզանից։
Դատարկ արկղերի բարիկադներ, սրոնց բարերեր
պարունակությունը
արդեն տարածվել է քաղաքով մեկ,
և հոգնած գործակատարը ստվերում նստած ուտում է
վերջին պոմիդորը,
անտարբեր նայելով փողոցի կեսը բռնած մի անհնարին
տիկնոջ,
որն այնքան շատ էր մի փոքրիկ, բազմաշարչար ժողովրդի
համար,
որն հիմա ապրում է խաղաղ ու ապահով կյանքով,
... և չկա ոչ մի լուր քեզանից։
Սա քո ամիսն է, երբ փողոցներում, թատրոններում և
համերգասրահներում

Հետզհետե ստվարանում է այն մարդկանց բազմությունը, որոնք տանջահար են եղել զանազան ծովափերում և հիմա, ինչպես գուրգուրված շնիկի՝ ցուցադրության են հանում իրենց թխացած մաշկերը,
...և չկա ոչ մի լուր քեզանից:
Իսկ կույր աշուղների երամը վերջապես իշավ դիմացի
կանաչ լանջին,
Նախ սկսվեց լարվող գործիքների ճնկճնկոց և ապա՝
միանգամից ճնշեց համերաշխ երաժշտությունը, և մի ձայն
շափազանց տաք
ու քաղցրածայն երգեց—չկա ոչ մի լուր քեզանից, չկա ոչ մի
լուր
քեզանից—գնում-գալիս էի պատշգամբում— չկա, ասում
էի ես, չկա
ոչ մի լուր քեզանից և մատներս էի կոտրատում
նյարդայնացած...
Լավ կլիներ եթե անձրե գար (երկի կինս էր խոսողը), լավ
կլիներ...
... լսեցի՞ր, երեխայի ճիշ, լսեցի՞ր...
... լսեցի՞ր, երեխայի լաց, լսեցի՞ր...
Իսկ տատոս թափահարեց ոտքերիցս
ու ասաց— Տղա է, թռղ երկար կյանք տա աստված:

Ա.Ռ.Ա.ՍՊԵԼ

Հիմա շրջում ենք բակում։

Թացվեցին-փակվեցին մի քանի լուսամուտ,

և միակ դուռը բացվեց վերջապես։

Բանաստեղծին վիրահատող բժիշկը զարմանքով նկատեց,

որ նրա մարմնի մեջ բացակայում են

մի շարք շափազանց կարևոր օրգաններ,

ինչպես, օրինակ, սիրտը (քննադատները,

իրար խանգարելով, շնչակտուր

սկսեցին բացատրել,

որ բանաստեղծն այն անվերադարձ նվիրել է ընթերցողներին),

սակայն կրծքավանդակի վրա, դրա փոխարեն

կա մի անցք,

և մենք բանալին զգուշորեն կպտտենք այդ անցքի մեջ,

ինչքան որ թույլ տա զսպանակը

և հանկարծ ծլնգոցով կաշխատի առասպելի մեխանիզմը,

պատկերը կենդանի գույներ կստանա,

դարբինները ոիթմով կխփեն սալին,

և շները զարմանքով կնկատեն,

որ իրենց աշխատանքը իզուր է անցել

և կատաղի թափով կսկսեն նորից կրծել՝

քանի դեռ բացվում-փակվում են լուսամուտները,

քանի դեռ շրջում ենք...

1945

Տարեկիցներ ենք խաղաղությունն ու ես:
Իրար հետ ծնվել ենք նույն թվականին
և մեկ լավ, մեկ վատ
մեծանում ենք այսպես:
Միասին խաղացել ենք գնդակով փալասե,
միասին վազվզել շալվարով քրքրված,
նույն փողոցից է մեզ մայրս որսացել,
նույն տաշտում ենք ճղջացել
փրփուրի մեջ կորած...
Միասին ենք փախել դասից,
անծանոթ փողոցում մոլորվել,
միասին արտասվել քաղցած...
Իրար ետևից օրերն այսպես գլորվել են,
էլի միասին ենք հիմա՝ տուն-տեղ դրած:
Եվ այնպես ենք վարժվել իրար,
այնպես սովորել ենք,
այնպես ենք ձուլված իրար, կապված,
որ թե հնչեն կրակոցները,
թե սուրան գնդակները
խաղաղության վրա արձակված,
իմ սրտի միջով կանցնի,
առաջինն ինձ կխոցի
առաջին գնդակն
անկասկած...

ԱՇԽԱՆ ԱՐԱՀԵՏՆԵՐԻ ՄԵԶ

Օրացուցային թախիծ՝ հնարավոր տարրերակներով,
նորից խոսակցություններ մեռած նկարիչների մասին,
և պատուհանների երբեք լհնացող համեմատությունը
արցունքուտ աշքերի հետ
և անհաշվենկատ շոայլվող դեղին գույնը ամենուրեք
ու նախ և առաջ՝ փողոցներում,
որտեղ արագացել էն մարդկանց քայլերը,
և պաղպաղակի թղթերի փոխարեն
արդեն տերևներ է քշում քամին։
Այնինչ դու արդեն նոր ծխախոտ ես ուզում վառել
այգու մեջ,
որն հանդարտվել է՝ ինչպես առավոտը հարսանիքից հետո,
և ծառերը քնատ,
խումհար հարսանքավորների նման
գլուխ-գլխի ինչ-որ բան են խոսում՝
ով ինչքան է խմել,
ով ինչքան է ծախսել...
Այնինչ դու արդեն խորացել ես աշնան արահետների մեջ,
ուր տերևները թափվում են խունացած լուսանկարների
նման՝
(մայրդ ձեռքերը կրծքին նայում ու շի տեսնում քեզ,
հալոդ, որ այլևս չի կարող նամակներ գրել)
և ծառեր, բազմաթիվ ծառեր,
որ հենց աշքիդ առաջ դեղնում ու կքվում են գետնին
և միայն թախիծն է անվերջ փարթամ,
անվերջ կանաչ ու թարմ
եղենի...)

ԱԴԱՄ

Ես նրան տեսա գրախտի ճանապարհին:
Հին օրերից մնացած սովորություն էր՝
երբեմն-երբեմն գնում էր, պարտք կատարելու նման,
ձեռքին ջրով լի դույլ, ավել
և մի քանի մաքուր փալաս:
Նախ նստում էր դռան առաջ,
ծխում էր՝ ծնոտը հենած ձեռքին,
նայում էր անտարբեր, մտախոհ.
պարզ երևում էր ամեն ինչ վերևից—
դաշտեր, քաղաքներ,
նույնիսկ մեքենաներ են երևում, եթե հայացքդ լարես...
Ապա ոտքի էր ելնում, երկար ջրջնկում էր հողը դռան առջևի
և ավլում էր՝ հայացքը գետնից չկտրելով,
հետո դուռն էր սրբում ջնջոցով,
զգուշորեն, առանց շտապելու,
մատներով քնքշորեն շոյում էր դռան փայտը
և գլուխը տմբացնում՝ հիացած ամրության վրա,
նախշերին էր նայում և ապա նորից էր տմբացնում գլուխը,
հետո շոշափում էր փականի մետաղը,
որի փայլը ամենաին շէր խամբել,
չնայած անցել է քանի հազար տարի...
Իսկ ամենավերջում թակում էր դուռը, թակում էր
հենց այնպես,

Հետաքրքրության համար...

Եվ հետո նոր ծխախոտ էր կպցնում
և հետո վերցնում էր ավելն ու դույլը
և դանդաղ քայլերով
դառնում էր ետ...

ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Կոճակների, ինքնահոսների, դեղահաբերի արանքում
դեղին տերեններ նկատեցիր հանկարծ,
երբ դարակներդ էիր խառնշտում
վերնաշապիկիդ ճարմանդները որոնելիս:
Խսկ պահարանը բացելիս, անձրեի շուրտ կաթիլները
խփեցին դեմքիդ,
երբ կանոնավոր շարված հագուստներիդ արանքից
հանեցիր պիշակդ, որը վաղուց չէիր հագել
և ըստ սովորության, հենց այնպես,
ստուգեցիր մեկ առ մեկ բոլոր գրպաններդ՝
ծխախոտի տուփ հայտնաբերեցիր երեք ժխախոտով,
հետո ինչ-որ հեռախոսի համար գտադ,
երկար մտածեցիր, թե ումը կարող է լինել
ու թեև չհիշեցիր, բայց և այնպես խնամքով ծալեցիր թուղթը
և նորից դրեցիր գրպանդ:
Մի սառը քամի ծակծկեց մատներդ,
երբ շերտավոր փողկապդ էիր հանգուցում վզիդ,
հազարերորդ անգամ կարդալով պիտակի վրա գրված տառերը
և ակամա ժպտացիր— հազարերորդ անգամ— որովհետեւ

Հիշեցիր, որ երբ Յուրմալայում, փոքրիկ կրպակի առջև
կանգնած
որոշում էիր՝ գնել, թե շգնել վերոհիշյալ փողկապը,
ցուցափեղկի ապակու մեջ արտացոլված տեսար՝
ետևումդ կանգնած մի փոքրիկ աղջիկ (հիմա
ամուսնացած կլինի հավանաբար)
լեզու ցույց տվեց քեզ և հետո խոճապահար վազեց
ինքն իր համարձակությունից շփոթված:
Իսկ երբ դուրս ելար տնից և կողպեցիր դուռը,
և երբ բանալին կողպեքի մեջ վերջին պտույտն էր գործում,
հասկացար հանկարծ, որ ոչ մի տեղ չունես գնալու
և երկար կանգնեցիր այդպես՝
մեջքով դեպի աշունը...

■

Դանդաղ կրկնություն՝ գարուն, ամառ, աշուն, ձմեռ...
Եղանակի ինչ-ինչ փոփոխությամներ՝
ձանձրալի միօրինակությունից խուսափելու նպատակով.
մեկ ձյունն է ուշ գալիս,
մեկ անձրեններն են շտապում,
մեկ կարկուտ է տեղում ամառվա պարզ կեսօրին։
Բայց ծերությունը գալիս է ճիշտ ժամանակին,
բայց կնճիռները բացվում են առանց ուշացումի,
և կյանքիցդ խվզող օրերի թիվը
մնում է հաստատում։
Ես ո՞ւմ հետ եմ խոսում գիշերվա այս ուշ ժամին
և ո՞ւմ ձայնն եմ ուզում լսել, որ հապաղում է անվերջ—

կիսալուսինն ահա լարից կախ ընկած հեռախոսափողի պես
անհաղորդ ու անտարբեր ճոճվում է երկնքում:

Դանդաղ կրկնություն՝ մեկ ժամ, երկու, երեք և ավելի...

Ո՞րտեղ է սկիզբը,

և ո՞ւր է տանում հաշվարկն այս անտանելի.

Նույն ծնունդը, ծաղիկներով, դհոլ-զուռնայով,

նույն կյանքը՝ հնամենի պահարան,

բազմաթիվ դարակները լցված ամեն տեսակի

Հիշողություններով

և նույն ծերությունը, երբ մեկ-մեկ բացում ես դարակները,

հանում ու փայփայում ես անցյալի լաթերը,

որ շահելությանդ օրերին խառնիխուռն հավաքել ես դեսից-
գենից

և վերջապես, նույն մահը, ծաղիկներով, դհոլ-զուռնայով,

և փոսը, ամենավերջին դարակը՝ հողի մեջ բացված,

ուր լացուկոծով քնքորեն փակելու են քեզ՝ քո ծաղիկներով,
դհոլ-զուռնայով, ամեն տեսակի հիշողություններով, անցյալի

լաթերով

և հնար չկա խուսափելու այս ձանձրալի միօրինակությունից,

թեև մեկ ձյունն է ուշ գալիս,

մեկ անձրեներն են շտապում

և մեկ էլ կարկուտ է տեղում ամառվա կապույտ երկնքից...

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

Նորից ձայներ եմ լսում:

Աշունը ճռոռւմ է հին ցանկապատի տակ:

Ես ինչեր ասես շքաշեցի այս բանաստեղծությունների
պատճառով,

ինչեր ասես շտեսա:

Ահա մի քանի ծառ, որոնք ես տեսել եմ մանկությանս
օրերին,

Նրանք դեռ աճում են հիշողություններիս մեջ,

իսկ հայրս շկարողացավ երկար ապրել

և հիմա միայնակ թաղված է քաղաքի գերեզմանոցում,
ուր ես գնում եմ երբեմն,

որովհետև ովիշ էլ ոչ մի տեղ

ես այնքան պարզ ու հստակ շեմ լսում նրա ձայնը:

Ես ինչեր ասես շքաշեցի այս բանաստեղծությունների

պատճառով...

Հիմա սեղմում են իմ ձեռքը

իսկ ես գլուխս կախ խոնարհաբար լսում եմ՝

թռչուններն են երգում ծառերի միջից,

որոնց ես տեսել եմ մանկությանս օրերին—

Նրանք դեռ աճում են հիշողություններիս մեջ,

և մարդիկ, որ գնում-գալիս են ծառերի արանքով,

մտախոհ տեսքով մարդիկ,

որ մեկ շնչով կարող են պատմել իրենց կենսագրությունը,

զարմանալի մանրամասնությամբ հիշելով

ինչ-որ թոշակառու հաշվապահների, որոնց
հանդիպել են փողոցի անկյունում
և ինչ-որ երկրորդական վարսավիրե, ոքը ծնվել է
երկրաշարժից առաջ կամ շատ հետո...
Բայց ես նորից ձայներ եմ լսում:
Հայրս է խոսում ինքն իր հետ,
Սովորություն ուներ՝ այդպես երկար խոսում էր ինքն իր
հետ,
հետո միանգամից սթափվում էր,
մեղավոր նայում էր մեզ ու ժպառամ շփոթված...

ԻՐԻԿԱՅԻՒՄ ԺԱՄԵՐ



1. Գնալով դժվարանում է քայլելլ օրվա միջով,
և դու զգում ես տխրությամբ,
որ խտացող խավարի ալիքները
քիշ-քիշ քեզ սկսում են բաժանել մարդկանցից:
Ամեն ինչ արդեն կցկտուր է.
խոսակցության մի պատառ,
հեռվում մարող քայլեր,
ձեռքի մի շարժում, որը կարող էր
հետաքրքիր շարունակություն ունենալ,
խոսափուկ մի նայվածք, որն անվերջ կհիշեցնի քեզ,
որ միշտ գալիս է հրաժեշտի ժամանակը:
Գնալով դանդաղում են քայլերը,
և դու տխրությամբ նայում ես օրվա խամրող դեմքին:
Հեռվում մարող քայլերը
մարող երակազարկի նման
հիմա կմարեն վերջնականապես,
եվ խավարի մեջ լուած շենքերը
դանդաղ ներփեն կկախեն իրենց սգավոր դրոշները՝
ստվերները սև...

2. Անշարժ մանեկեններ՝

Հեռուստացույցների անկենդան լույսերի պատրանքում։

Մեծ ու փոքր ընտանիքներ՝

աղե արձաններ դարձած լուսնային գույներով։

Գոնե վարագույրները շարժվեին —

տագնապով կծկվում է սիրտդ,

գոնե ծառերն աճեին,

կամ խոտերը սվսվային —

մատներդ թուլանում են սարսափից։

Հնչում է երաժշտությունը՝ երաժիշտները ժպտում են,

եռանդով շարժում են մարմինները մեղեդու տակտով —
բայց մանեկենները չեն ժպտում,

բայց աղե արձանները չեն շարժվում տեղերում,

որովհետև նրանց բոլորին հայտնի է,

որովհետև լրագրերը արագորեն մտնելով տնետուն,

վաղուց տեղեկացրել են նրանց՝

երաժիշտները ծերանալով և ավելի ծերանալով

մեռել են շատ տարիներ առաջ,

մեծամասամբ բնական մահով, ոմանք՝ զանազան

հիվանդություններից։

Բայց երաժշտությունը կենդանի է

և երաժշտությունը հնչում է ինքն իրեն,

հավերժորեն թարմ, ինչպես արհեստական ծառ՝ սինթետիկ
տերևներով,

ինչպես մանեկեն, որ հաջողությամբ պտտվում է

երկրագնդի հետ,

ինչպես աղե արձան,

ավելի աղե, քան արցունքը,
որը մի օր լաց կլինեմ,
առաջին իսկ հարմար առիթով...

3. Եվ հանկարծ արձանների անկենդան թագավորության մեջ
բարձրածայն ու զվարթ հնչեց լացը երեխայի:
Եվ հրաշագործ խոսքի զորությամբ կախարդական
շարժման մեջ քարացած քաղաքը կենդանացավ:
Կինը վազեց խոհանոց կաթը տաքացնելու,
տղամարդը ծալեց թերթը և հորանջելով ոտքի կանգնեց:
Եռանդով անգիր էր արվում դասական պոեզիան՝
հաջորդ օրը դասարաններում արտասանվելու համար:
Ահա և վարագույրները շաբժվեցին,
ահա և ծառերն են աճում,
խոտերն են սվավում...
Եվ խավարի կապանքները ծվատելով,
զիլ հնչում է աշխարհի ամենասքանչելի երաժշտությունը՝
երեխայի լացը
բարձրածայն ու զվարթ...

4. Դատարկ սենյակում գնդում էր հեռախոսը:
Բաղկաթոռներ, պահարան,
գրադարակներ, որոնց վրայից գրգերը
քիշ-քիշ պակասում են: Սեղանին
լրագրեր և մոխրաման՝ առանց ծխախտի
և մոխրի: Փոքրիկ մի սարդ, որն հեռախոսի
գանգից վախեցած արագորեն անհետացավ
պատի ժամացույցի ետևում:
և բոլորը՝ բազկաթոռները, պահարանը,

գրադարակները, լրագրերը, մոխրամանը
և փոքրիկ սարդը լարված նայում էին հեռախոսին,
և միայն ժամացույցն էր անտարբեր
տուաշ տանում իր ժամանակը:
Եվս մի քանի զանգ, և հեռախոսը լոեց:
Քիչ հետո սարդը դուրս վազեց ժամացույցի ետևից՝
ամբողջովին ժամանակոտված
և վազեց խոհանոցի ուղղությամբ,
ուր լվացված սուրճի բաժակներ կային
լվացարանի կողքին շարված:
Թոլորովին մութ էր արդեն,
երբ դռան փականի մեջ պտտվեց բանալին,
և ներս մտավ մի մարդ,
որի դեմքից պարզ երևում էր,
որ տեղյակ չէ ամենակին,
թե ինչ անհամբերությամբ էին
այստեղ իրեն սպասում:

5. Ի՞նչ է լինելու հիմա:

Վարագույները արդեն բարձրացել են,
և դահլիճը թաղվել է կիսախավարի մեջ,
և բեմը լուսավորված է զանազան անիրական գույներով:
Բայց ահա երածշտությունը ուժեղացավ, հետո հանդարտվեց,
և դանդաղ քայլերով բեմ մտավ մի տղամարդ:
Նա չէր նայում դահլիճին,
բայց զգացվում էր, որ ամեն՝ ինչ գիտի,
այսինքն, գիտի, որ դահլիճում բազմաթիվ մարդիկ են
հավաքված.

Կանայք, ծերունիներ, տղամարդիկ և նույնիսկ՝ երեխաներ,

որոնց ներս էին բերել հսկիչներից թաքցրած։
Նա գիտի, որ դրսում հիմա անձրև է գալիս,
ցուրտ է, և շատ ավելի հարմար է այսպես
մի կտուրի տակ հավաքվելը՝ մեկը կխռուի բեմից,
մյուսները կլսեն նրան, հետո բոլորը կխռուեն
և նրանք չեն լսի իրար։
Նա գիտի, որ իր տղան հիմա
դասընկերուհու հետ համբուրվում է հենց այստեղից
քիչ հեռվուած տարածվող պուրակում,
ի՞նչ է լինելու դրա վերջը, մտածում էր տղամարդը,
և ընդհանրապես, լինելու է, թե՞ չի լինելու,
շարունակում էր մտածել՝ դանդաղ քայլելով բեմի վրա,
շուտով ձմեռ է գալու և տղային հարկավոր է վերարկու գնել,
կնոջս վերարկուն էլ է հնացել, դառնությամբ հիշեց տղամարդը
և արագորեն սպանելով թագավորի շորեր հագած ինչ-որ մի
ժերուկի,

Նստեց բեմի կենտրոնում դրված աթոռին՝
գլուխն առնելով երկու ձեռքերի մեջ,
իսկ ես էլ ահա ծերանում եմ, լյարդս ցավում է,
առավոտյան սրտիս շրջանում ցավեր զգացի...
դառնությամբ սեղմելով շուրթերը՝ գլխի թեթև շարժումով
բարեկեց կողքից անցնող զինվորականին,
ծխելը պիտի թողնել, սուրճ խմելն էլ պիտի թռղնել...
...էհ, այս մի կյանքն էլ այսպես անցավ...
Դահլիճը սսկված լսում էր նրան,
բայց շուտով,
շատ շուտով բոլորը ոտքի կկանգնեն
և ամեն մեկը առանձին-առանձին՝ կծափահարի

նրա այս մի կյանքի համար,
որն անցավ այսպես:

6. Երբեմն դու ժամանակ ես գտնում երկնքին նայելու:
Բոլոր աստղերն իրենց տեղերում են:
Հետո տեսնում ես՝ մարդկանց մի մեծ խումբ երկնքով
անցավ,

տեսնում ես նրանց մտահոգ դեմքերը,
ճամպրուկների և պայուսակների դեզը... Հետո մեկ ուրիշ,
ավելի հոծ խումբ սուրաց մեկ այլ ուղղությամբ:
Հետաքրքիր է, հիմա ինչքա՞ն մարդ կա երկնքում,
մտածեցի ես, փորձելով նրանց արանքից
զննել երկինքը: Ահա, Վեներան
կիսով շափ փակված ինչ-որ մեկի վիթխարի ճամպրուկով,
Սատուրնը կայծկլտաց բացված լրագրի արանքից,
Հարդագողի ճանապարհ՝ խճճված
մի փարթամ տիկնոջ շափից դուրս գանգուր մազերի մեջ,
Երեխից, որի պոչն էր երեռամ միայն՝
ինչ-որ տարօրինակ արարածներով լցված թռչող ափսեի
միջից,

Բայց ո՞ւր է իմ աստղը. շատ փոքրիկ ու շատ պայծառ
իմ աստղը և, ինչպես կինոյի հերթում,
արմունկներով ճանապարհ եմ բացուած՝
ամբողջ երկինքը բռնած ճամպրուկների ու պայուսակների,
վերարկուների ու լացող երեխաների, բամբասանքների,
մրափող պառավների, սիրահետող շահելների, լրագիր
կարդացող

անհայտ անձանց արանքից և վերջապես տեսնում եմ նրան՝
շատ փոքրիկ ու շատ պայծառ
իմ աստղը, և ցնծությունից մարում է հոգիս՝
աշխարհի ամենագեղեցիկ թիթեռը
ցանցով բռնած փոքրիկ տղայի պես...

7. Ես հիմա քեզ էլ չեմ որոնում,
որովհետև գիտեմ, թե որտեղ ես,
ես հիմա քեզ էլ չեմ կորցնում՝
արդեն վաղուց եմ կորցրել
ինչպես հին գիրք, թերթում եմ էջերդ՝
խունացել է կազմը, հնացել,
իրիկվա այս ժամին ինչ հեշտ է
տառապել անցած տառապանքները,
կրկնել տիրությունը անցած,
բաժանման դառնություններն ու ցավերը.
ծերացած թոշնի պես, հիացած,
շոյում եմ վանդակիս ճաղերը...

ՀԻՆ ԱՐՅՈՒԽՆԸ

Հալած կապարի ծանր գետի պես հոսում է անապատով,
ուր իսկ ու փարթամ մորմոքներ են աճում,
փշե պսակներ՝ զարմանալի թարմ:
Եվ կանալ գույնը հոգնել է արդեն
և չի հասցնում վաղել ու կպշել
հանկարծ վախեցած մողեսի մաշկին,
իսկ ավազները շատ են շափից դուրս՝
անպտուղ, ամուլ ժամերի նման ու վայրկյանների...
ծանր, կնճռապատ հոսում է գետը, մեղքի նման սև,
ու տաք հորձանքից
ենում է դանդաղ հիշողությունների դառը գոլորշին,
բայց բուրմունքն անշափ քաղցր է, արբեցնող,
և եթե շնչես՝
ուրվականները կշրջապատեն քեզ,
և խելագարված կանայք կվազեն գետի ափերով,
և ծերունիներ, որ չեն ծերանում,
և երեխաներ, որ չեն մեծանում...
Մի քանի վայրկյան՝ հետո կցնդեն ու կանհետանան,
և միայն լացը կմնա օդում...
Եվ արցունքները ցողի պես կիշնեն,
և մորմոքները կաճեն ավելի, կփարթամանան,
և պսակների փշերն առավել սուր-սուր կցցվեն,
և կանալ գույնը կհասունանա՝
անապատի շոր, դավադիր ծոցում
դաշույնի նման թաքցրած օձի
եփվող թույնի պես...
Մանր, կնճռապատ հոսում է գետը
իմ երակներում:

Տղամարդիկ: Կանայք: Երեխաներ: Լուսու: Ու սսկված:
 Ինչպես ոմբապաստարանում:
 Քո ինչին էր պետք թոշելը:
 Երկու ժամ: Բայց գու ծերանում ես րոպե առ րոպե
 և նայում ես սրահում նստոտած մարդկանց,
 որ թորշոմել են ու անշարժացել,
 ինչպես տիկնիկները թատրոնի պահեստում:
 Քո ինչին էր պետք թոշելը՝ շա յոթերորդ երկինք,
 կա ընդամենը մեկը և մի բարալիկ միջանցք
 կյանքի և մահվան արանքում:
 Ոմանք թերթ են կարդում: Շատերը քնած են:
 Մի ծերունի աշխարհագրությունն է ուսումնասիրում
 լուսանցույցից,
 ուղեկցորդուհին անցավ անիրական գեղեցիկ ոտքերով:
 Երկու կին զրուցում էին կիսաձայն,
 և մի երեխա էր մերթընդմերթ լալիս՝
 զարմանալիորեն շխանգարելով ոչ մեկին:
 Եվ ես հանկարծ տեսա և շտարակուսեցի ամենեին,
 տեսա, թե ինչպես դանդաղ հետևողականությամբ թևեր էին
 աճում
 Նրանց ուսերին, ովքեր թերթ էին կարդում,
 ովքեր քնած էին
 և ծերունու ուսերին, որ նայում էր լուսանցույցից
 և կանանց ուսերին, որ զրուցում էին կիսաձայն,
 սքանչելի թևեր էին աճել ուղեկցորդուհու ուսերին,
 և երբ նա քայլում էր՝
 փետուրները շողջողում էին անիրական գույներով,

սակայն ամենադժվարը երեխայի հարցն էր,
որն այլևս չէր լալիս, այլ՝
թևիկները արագ-արագ թափահարելով սահում էր օդի միջով,
սրահի մի ծայրից մյուսը,
անշափ ուրախացած, ինչպես որ վայել է երեխային,
և մայրը սաստում էր նրան՝ ծալիր թևերդ և իշիր ներքեւ,
այլապես դուրս կթռչես լուսանցույցից,
իսկ հետո, ինչ իմանաս, թե ինչ կլինի հետո...
Պատկառելի թևեր էին աճել նաև իմ ուսերին,
և ես դանդաղ շոյում էի փետուրներս,
և սիրտս նվազում էր հաճույքից:
Երկու ժամ, բայց դու ծերանում ես րոպե առ րոպե,
և աննկատ իշած լուսթյան մեջ
հանկարծ բարձր ու զրնգուն հնչեց. ԾՈՒՂՐՈՒՂՈՒ,
և սրահը միանգամից լցվեց համընդհանուր կրթկրթոցով,
և կտուրից ցած նետված թխսկան հավի նման
ինքնաթիռը թփթփոցվ վազեց՝ թևերը կախած ներքեւ
և ապա կանգ առավ
թեթև շունչ քաշելու պես:
Իսկ երբ բացվեց դուռը և սանդուղքը մոտեցավ ելքին—
դուրս եկավ մի ծերունի,
ընդամենը մի ծերունի,
հենվեց ցանկապատին և սպասեց երկար,
սպասեց, մինչև որ օրը մթնեց
և մթնեցին էլի ուրիշ օրեր,
և հետո դառը քմծիծաղ տվեց ու դանդաղ հեռացավ,
և կարծես թե շմոռանալու համար
քթի տակ կրկնելով անվերջ՝ տղամարդիկ, կանայք, երեխաներ,
կյանքի ու մահվան արանքում՝
երեխաներ, կանայք ու տղամարդիկ...

Գետի հոսանքով ներքե
լողում էր մի ջութակ:
Բայց ինչ ջութակ էր դա՝
ամբողջովին ծաղկանկար,
անշափ գեղեցիկ և աննման մի բան:
Իսկ գետի ափին
կանգնած էր մի ջութակահար,
բայց ինչ ջութակահար էր դա՝
ամբողջովին արցունքների մեջ կորած:
Իսկ հեռու-հեռվից
նրան է մոտենում մի աղջիկ.
մերկ, ինչպես երաժշտությունը,
և գեղեցիկ, ինչպես ջութակը ծաղկանկար:
Իսկ երբ լուսինը դուրս եկավ,
գետերում խայտացին բոլոր ջութակները
և մի մեղեղի բարձրացավ երկինք՝
ամբողջովին արցունքների մեջ կորած:

ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ

Ճանալիր գույները, թիթեռ,
Հրաժեշտի թագուհի,
Թկիկներով քո փխրուն ինչ արագ ես սլանում
դեպի ավարտը օրվա:
Եվ ո՞վ է քեզ այսքան նուրբ ու գեղեցիկ նկարել—
ծերունազարդ վարպետի իմաստնացած ձեռքի տակ
մատիտի վարժ, սահուն վազք—
Հետագծի պես կայծի՝ խարուցկից վեր սուրացող—
Հղացման կարճ ակնթարթ
մթության սև կտավին
և ի՞նչ գծեր ավարտուն...
Վաղամեռիկ պոետի երազի պես գոմագեղ
և առավել կատարյալ,
և առավել գեղեցիկ, բազմապատկված գույներով—
չէ՞ որ նա քեզ նայել է արցունքուտված աշքերով...
Իսկ երբ իջնի իրիկուն և աղմուկները մարեն
և գույները վերանան, քիշ-քիշ խամրեն խավարում՝
թերդ անզոր տարածած
կանշարժանաս դու մթնում,
և աստղերը զարմանքով
քեզ կնայեն վերեկից
համրացումի այդ պահին—
փոքրիկ մի սիրտ է լուել,
բայց այս ինչ մեծ լոռություն
հանկարծ տիրեց աշխարհին...

Հայրս ու մայրս՝
երկու վառվող մոմեր
երկու ձեռքերիս մեջ,
երկու հալվող մոմեր՝
հայրս ու մայրս։

Զգույշ քայլում եմ
տարիների մեջ,
թեթև շունչ քաշում։
Դեմքիս մի մասը ցերեկվա մեջ է,
իսկ մյուս կեսը՝ գիշերվա։

Ահա մի քառորդ
ապրեցի այսպես
Մեկ ուրիշ քառորդ,
և էլ չկամ ես
և էլ չկամ։

Հայրս ու մայրս՝
երկու վառվող մոմեր.
ես մեկ ուրախ եմ
և մեկ էլ տիսուր՝
նրանց լույսի տակ։

Երկու ձեռքերիս մեջ՝
երկու հալվող մոմեր,
տաք ու գեղեցիկ
մոմե արցունքներ
ձեռքերիս վրա։

ԻՍԿ ԵՐԲ ԵՐԵԿՈՑԱՆ...

Իսկ երբ երեկոյան դու քայլեցիր ավազների վրայով—
ծովահարսերը շրջապատեցին քեզ,
և շգիտես ինչու
դու ընկճվեցիր նրանց առատությունից:
Ու մինչ հայացքդ նրանց թեփուկավոր
պոշերն էր ուսումնասիրում մանրազնին,
միտքդ աշխատում էր մեկ այլ ուղղությամբ,
քեզ տանջում էին բոլորովին ուրիշ հարցեր,
նախ՝ թե ինչո՞վ են սնվում սրանք,
չե՞ն հիվանդանում սառը ջրի մեջ,
և հետո՝ չե՞ն ամաշում մերկ թափառել ծովափով և այլն:
Հետամնաց, խավար ու մութ ցեղ,
որ մաշում է կյանքը սիրավեպեր կարդալով
և շարունակ նամակներ է հղում Արքատ Պրեվոյին՝
Մանոնի մասին նոր տեղեկություններ ստանալու
ինդրանքով...

ավելորդ հոգս ու գլխացավանք դառնալով
նավաստիների առանց այդ էլ խիստ ու դաժան կյանքում,
սրոնք կարկտի պես, արտահերթ պատիժներ են ստանում
նսվերի ամենաանհարմար տեղերում
ամենօրյա հայտնվող գրությունների համար
(«Կեցցե սերը»,
«Ախ, կյանքս կտամ մի համբուլը դիմացք և այլի),

որոնք շափազանց դժվարությամբ էին ջնջվում,
որովհետև ծովահարսերն օգտվում էին
ինչ-որ զարմանալի ներկից,
որը նրանց համար հայթայթում էին թանաքաձկները
անսպառ քանակությամբ...
Իսկ երբ երեկոյան քայլեցիր ավազների վրայով,
և ծովահարսելը շրջապատեցին քեզ,
դու առանց ամաշելու արտասվեցիր նրանց առաջ
և պատմեցիր, որ քեզ լքել են
կապույտ աշքերով աղջիկները,
որ կանաչ աշքերով աղջիկները լքել են նույնպես,
և պատմեցիր քո կյանքը՝ առավոտյան գնում ես աշխատանքի,
երեկոյան վերադառնում ես տուն, քնում ես և նորից
առավոտյան գնում ես աշխատանքի, երեկոյան
վերադառնում ես տուն, քնում ես և նորից
առավոտյան գնում ես աշխատանքի...
Եվ ծովահարսերը արտասվեցին քեզ հիտ միասին
և փորձեցին համոզել՝ ձեռ քաշել այդ ամենից
և իրենց հետ միասին իշնել ծովի հատակը,
ինչից դու հրաժարվեցիր կտրականապես...
Բայց երբ ծովի ալիքների մեջ
անհետացան ծովահարսերը դալկադեմ,
և երբ մնացիր մենակ ավազների վրա նստած,
զգուշորեն նայեցիր շորս կողմդ և ապա դողդոց մատով
գրեցիր խոնավ ավազին. «Ախ, կյանքս կտամ մի համբույրի
դիմաց»
և գլխակորույս վազեցիր,
ինչպես գողը, մարդասպանն է փախչում
հանցանքի վայրից:

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ
ՀԱՍՈՒՆ ՏՎԱՄԱՐԴՈՒ ՍՆԱՐԻՆ,
ՈՐԸ ՈՉ ՄԻ ԿԵՐՊ ԶԻ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ՔՆԵԼ

Եկ ոչինչ, որ ոտքերդ դուրս են ցցվել օրորոցի ճաղերից
և ուսերդ նեղվում են ու, ընդհանրապես,
շեմ հասկանում ինչպես վարվել քեզ հետ.
ահա գիշերը կես է ընկել,
իսկ դու նվվում ես,
շուռումուռ գալիս,
խոսում ես— իսկ բառերդ անկապ են ու անմիտ,
լալիս ես— արցունքներդ գոլորշիանում են հատակին
Հասած,
ծիծաղում ես— և ո՞վ է, որ չի ծիծաղում քեզ հետ միասին:
Բայց նախ փակիր աշքերդ,
սիրելիս, օրոր եմ ասում, քնիր,
ահա,
ես քեզ բերել եմ աշխարհի ամենամեծ սիմֆոնիկ
Նվագախումբը
և ինչ լավ է հնչում, այն ինչ հնչում է
և դժվար է շհամաձայնել թավջութակի հետ— իսկ երբ
երաժիշտը՝
աղեղը տանում-բերում է լարերի վրայով՝
դառնացած մարդու ձայնով խոսում է թավջութակը—
անկապ ու անմիտ են սիրո բառերը, բայց պիտի խոսես,
և արցունքներդ գոլորշիանում են
դեռ հատակին Հասած, բայց պիտի ապրես,
և հրաշալի է, երբ ծիծաղում ես, և բոլորը լուր նայում են
քեզ

և հրաշալի է, կրկնում են բոլոր ջութակները միասին,
և միայն թմբուկն է, որ անվերջ սրտիդ է խփում
ուղիղ նշանառությամբ և միայն թմբուկն է օգնում ճոճել
օրորոցը

և զսպել լացը և միակ արցունքը հրաշքով փրկված...
թայց նախ փակիր աշքերդ,
թե չէ գիշերը կես է ընկել
և ես էլ հոգնեցի արդեն օրորելուց,
հոգնեցի արդեն...

ԱՇԽԱՆԱՑԻՆ ՓՈՂՈՑ

Փողոցով,
աշնանային փողոցով
աշխույժ քայլում է մի աղջիկ՝
զարմանալի կապույտ աշքերով:

Փողոցով—
դեղնած տերմեներ փողոցում—
աշնանային փողոցով
զնդալով անցնում են տրամվայները՝
լույսերը պայծառ վառած:

Փողոցում,
աշնանային փողոցում,
մի ծառի հենված
ահա կանգնել եմ ես
և զարմանալի կապույտ
երազներ եմ տեսնում:

ՎԵՐԱԴԱՐՁ

Երեկոյան դու կվերադառնաս նույն ճանապարհով:
Խտացող մթան միջով, գլուխդ կախ, մտամոլոր,
Անցավ ևս մի օր, և շփոխվեց ոչինչ.
Նույն զրուցները և նույն սուրճը դառնահամ,
ուրախացար նույն հաջողակների հետ
և նույն ձախողակների հետ տիսրեցիր,
իմացար նորությունները նույն
և ձանձրացար ձանձրութով նախկին:
Եվ ահա նույն ժամին վառվեցին լույսերը,
Նայեցիր ժամացուցիդ՝ արդեն դեղնել են տերևները,
Նայեցիր դիմացի շենքի լուսամուտին՝
պատուհանի մոտ նստած մի կին
փողոցին է նայում անտարբեր,
և վերջապիս նայեցիր երկինք
և տեսար մանկությանդ օրերին կորցրած
փայլվլուն կոճակդ,
և տեսար էլի ուրիշ բաներ,
և ապա կախեցիր գլուխդ,
և քայլեցիր մթան միջով՝
հաւանալով տիսրությամբ,
որ վաղուց արդեն շես կորցրել ու մի բան
և հիմա ինչ էլ որ գտնես
ուրիշնը կլինի...

ԺԱՄԱՆԱԿԸ, ՈՐ ՀՈՍՈՒՄ Է ՄԱՏՆԵՐԻ ԱՐԱՆՔԱՎ

Մե կամ սպիտակ աշխարհներ տանող ճանապարհների
շքեղ դարպասների առաջ
մարմարյա ոչխարներ են արածում,
և խոտը ծնկահաս
կանալ է և հյութեղ—
ֆլամանդական դպրոցի անանուն մի նկարչի
հենց նոր ավարտած կտավ,
և ներկը դեռևս չի շորացել:
Հրավիրյալների միայն մեջքերն են երևում, իսկ ընթրիքը
շարունակվում է խորհրդավոր կիսախավարում ծածկված:
Ամենուրեք մահուդ, դավաճանություն, թանկարժեք քարեր և
արծաթ
և մի վիթխարի կատու, որի խոշոր ու կանալ աշքերի մեջ,
ինչպես էլեկտրական հաշվիչի էկրանին, կատաղի պտտվում
են թվերը
և հասնելով իրենց սահմանին՝ ջնջվում են
ու նորից սկսում են իրենց պտույտն անվերջանալի...
...ես ահա դիմում եմ քեզ երկի թե վերջին անգամ,
և ինչքան գեղեցիկ է արձագանքում
մայրամուտի ջրհորի խորքերում՝ բառը վերջին,
ես ահա դիմում եմ քեզ
շքեղ դարպասների առաջ, դեմքով դառնալով դեպի հարավ,
ուր, ինչպես ջրի մեջ ընկած շաքար,

Քիշ-քիշ հյուծվում են բուրգերը փարավոնների,
և անապատի հարթ ու անծայրածիր էջի վրա
ուղտերի քարավանն է շարվել ինչպես մեքենագրված մի տող,
հեռու-հեռավոր մի տող, և ընդամենը մի կյանք, գեռես շորացած
կտավի վրա,

որն ես ապրում եմ, երեխ թե վերջին անգամ,
իսկ կատվի անթարթ աշքերում կատաղի պտտվում են թվերը
և շուրջով, շատ շուրջով կհասնեն իրենց սահմանին,
և մատները կկախվեն թուլացած...

ՆՈՐ ԽՈՍՔ ԵՐԶԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կար մի ժամանակ, երբ դու էլ էիր հեշտ ապրում
և սիրում էիր խոսել երկար ու գեղեցիկ,
և նույնիսկ պատրաստվում էիր մեռնել
շքեղ կահույքով լեփ-լեցուն
լուսավոր սենյակներից որևէ մեկում՝
անթերի սանհանգույցի հարեանությամբ:
Եվ քեզ ծանոթ քաղաքի ետ ընկած փողոցներից մեկում՝
դու հրաժեշտ տվեցիր քո սիրելի մարդկանց
և ուշքի եկար միայն այն պահին,
երբ հսկայական պայուսակը ձեռքիդ մենակ կանգնած

մնացիր

բոլորովին անծանոթ քաղաքի ուղիղ կենտրոնում։
Տարիներն անցնում են, իսկ դու գեռ կանգնած ես այնտեղ
ու սիրալիր ժպտում ես անցնող-դարձող մարդկանց։
Քո հսկայական պայուսակը վաղուց մաշվել-փոշիացել է,

և քո սիրելի մարդիկ վաղուց, շատ վաղուց էլ չկան:
իսկ դու դեռ կանգնած ես այնտեղ, ու տարիներն անցնում են։
Բայց երբ փողոցներն ամայանում են, դու փորձում ես
հոգնած ձևանալ ու երեխայի նման հրճվում ես,
երբ քեզ հաջողվում է դեռ մատներդ շարժել,

աշքերդ թարթել

իսկ եթե հանկարծ շնչելն է ստացվում,
դու գլուխդ կորցնում ես անհնարին ցնծությունից...
...Այս պատմությունը դեռևս ոշ մի տեղ չի գրված։
իսկ դու շարունակում ես խոսել երկար ու գեղեցիկ՝
լուսավոր սենյակների, շքեղ կահույքի
և, վերջիվերջո, հեշտ կյանքի մասին,
որը դեռ շես ապրել...



Եվ ինչ իմաստ ունի այսքան ջուր մի տեղ հավաքել
և այսքան ավազ,
հետո ձկներ բազմացնել, ծովահարսեր հորինել
և բազմաթիվ այլ հոգսեր։
Մանր է,
ծանր է առնել քո սրտի վրա
անցած լավ ու լատ օրերի սիրելի տիրությունը...
Ես անշուշտ դեմ շեմ, որ պետք է նստել ու նայել ծովին՝
հեռվից նավեր կանցնեն՝ կտեսնես,
ալիքներ կգան, կխփվեն ափին՝ հիացիր,
ես, անշուշտ, դեմ շեմ,
որ այս ամենը անհրաժեշտ է
բանաստեղծական արվեստը զարգացնելու համար։

Բայց ծանր է,
ծանր է, երբ տունդարձին
դու նորից առնում ես քո սրտի վրա
անցած լավ ու վատ օրերի
սիրելի տիրությունը:
Խսկ մոծակները ճանապարհին
քեզ տանջում են անտեղի խանդավառությամբ:
—Դու մի՞թե այս օրերի համար
ոշինչ շունես պահած,
դու չէ՞ որ այս օրերին կապված ես՝ անվերադարձ:
...Տագնապը թեթև խփեց քո ուսին,
դու շուռ եկար ու այդպես մնացիր
քարացած
կանգնած...

¤

Փողոցներում՝ որտեղ հիմա դու չկաս՝ գարուն է,
և մարդիկ քայլում են ոչ մի փոփոխություն չնկատելով:
Քաղաքում, որտեղ դու չկաս,
շգիտես, թե ինչու տոն է այս սովորական օրով,
և խմբերով աղջիկներ են անցնում
գույնզգույն շորեր հագած,
ոչ մի փոփոխություն չնկատելով...
Խսկ նվագախռումը դուրս է ցայտում
ամենաանսպասելի անկյուններից,
իր ետևից տանելով ցնծությունից խելակորույս
Հրոսակախումբը երեխաների՝
ամրողացնելով գարնան պատկերը կանաչավուն:

Ինչ հեշտ է սիրել այն ամենն, ինչ հեռու է,
 և ինչ բավականություն՝ պատկերացնել այն,
 ինչը շես տեսնում...
 Թայց ամենահեշտը տիրությունն է ստացվում,
 և ինչքան ես վարպետացել այդ ասպարեզում:
 Փիլիսոփայելու համար ընտրեցիր երեկոն
 և սկսեցիր քեզ որոնել այնտեղ, ուր չկաս ինքդ,
 և հայացքդ թափառեց փողոցներով, մարդկանց մեջ,
 սրճարաններում,
 և հոգնությունից արցունքութեց հայացքդ՝
 ոչ մի փոփոխություն չնկատելով:
 Իսկ նվագախումբն արդեն երկինք է բարձրանում,
 իր ետևից տանելով ցնծությունից ոչինչ չնկատող
 հրոսակախումբը երեխաների.
 Ինչ հեշտ է մոռացվում նա, ով հեռվում է,
 և ինչ ծանր է ընդունել այս տիսուր միտքը
 երբ ինքդ ես հեռվում...

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ՄԻԱՍԻՆ ԵՐԳԵԼՈՒ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ես անընդհատ մոռանում եմ հարցնել—
 ո՞ւր կորան հանկարծ այն անձրևները,
 երբ կարելի էր թափառել կիսախավար փողոցներում՝
 ոչ մի բանի մասին շմտածելով,
 երբ ես շոյում էի քո թաց մազերը,
 երբ դողացող մատներով սրբում էի
 անձրևի կաթիլները թրջված այտերիցդ:

Ուզում եմ հարցնել և անընդհատ հետաձգում եմ—
իսկ ի՞նչ պատահեց գիշերվան,
որը, մի՞թե շես հիշում,
այնպես թեթևորեն տանում էր երազների աշխարհ,
և ընդհանրապես,
այս ինչ փակ դուռ է
երազների աշխարհը ժածկել.
ինձ միշտ թվացել է,
թե այնտեղ դուռ չի եղել երբեք:
Հիշում ես, աստղերն ինչքան շատ էին,
իսկ հիմա, նայիր, եթե շատ հոգնած շես,
մի քանիսն են մեացել,
մի քանի շնչին կոպեկ
անցյալի ոսկու դեղերից...

Իսկ ամենակարևորը շմոռանամ հարցնել.
որտե՞ղ ես դու, ի՞նչ պատահեց քեզ,
ինչո՞ւ շեմ տեսնում քեզ այսքան ժամանակ,
դու, որին տեսնում էի նույնիսկ փակ աշքերով:
Իսկ հիմա աշքերս բացել
և միայն լուսինն եմ տեսնում՝
կողպեքի պես կախված
երազների աշխարհ տանող ժանր դռան վրա...

ՀՅՈՒՐԱՆՈՑ

Կան հյուրանոցի մարդիկ: Նրանք միշտ տարրեր են
սովորական մարդկանցից:
Ու թեև նրանք ձգտում են աննկատելիորեն խառնվել ու
կորչել

մարդկանց խայտարդետ հոսանքի մեջ, բայց
միևնույն է, զոկում են նույնիսկ հենց առաջին հայացքից:
Հյուրանոց,

գեղեցիկ, շրեր կին, որ երբեք չի ունեցել ընտանիք,
չի ունեցել երեխաներ՝ կարմրուկով հիվանդացած,
զարմանալի մի աշխարհ, բերներերան լցված կիրակիներով,
կոշիկի տուփերով, պիտակներով, վիթխարի հայելիներով,
և ճամպրուկներն անվերջ հիշեցնում են անցնող կյանքի
մասին:

Անցնող կյանքի մասին է երգում հավերժ կոկիկ մի
տղամարդ,

աշքը սոսուի ափսեին և ձեռքը առաջ պարզած,
անցնող կյանքի մասին է լալիս

Եսիմ որտեղից եկած
Եսիմ ինչ ազգի պատկանող
Եսիմ ինչ տարիքի մի տղամարդ:
Եվ հենց նույն այդ անցնող կյանքն է հիշել

հավաքարարը ծերացող
և գլուխը փոշեծծիլին դրած՝ ընկել է երազների մեջ...
Եվ միակը, միակը, որ երկու ոտքերով կանգնած է

ներկայի ամրակուռ հիմքերին

և երկու ձեռքերը մեջքին դրած խրոխտ նայում է
ապագային,

այդ նա է, որ միշտ հիշեցնում է քեզ, հյուրանոցի մարդ,
որ դու այստեղ ես, բայց և այստեղ չես,
որ դու հիմա կաս, բայց շատ ավելի՝ չկաս,
այդ նա է, որը հասկացնում է, թե շատ բան գիտի,
բայց խորհրդավոր լոելը ավելի թանկ է գնահատվում,
այդ նա է, պաշտոնական համազգեստով բարապահը զգոն,
նայում է քեզ և տնանում է քո միշով,
նայում ես նրան և կորցնում ես հերոսական կեցվածքը,
խեղճանում եմ ու փոշիանում՝
քո կոշիկի տուփերով, պիտակներով և ճամպրուկներով,
քո անցնող կյանքով և պրտի ծակոցներով,
որ հաճախակիացել են քեզ համար անսովոր
այս ամենօրյա տոնախմբությունից՝ հյուրանոցի

ռեստորանում,

ուր անցնող կյանքի մասին է երգում
հավերժ կոկիկ մի տղամարդ, և դու խմում ես
ու ծխում, ձգտելով զոնե փոքրինչ նմանվել
ինչ-որ մի կինոյում տեսած
կամ ինչ-որ մի գորգում կարդացած անխոցելի ու հմայիչ
հերոսին,

որ անմերջ խմում է ու ծխում և հոգնած ու ձանձրացած
շրջում՝ է հայացքը կողքի սեղանների սիրունատես

կանանցից

և հետո դրամը անփույթ նետելով սեղանին, հեռանում է՝
հորանջը հազիվ զսպելով, և դու խմում ես ու ծխում,
աշխատելով չնայել կողքի սեղանի սիրունատես կանանց,
թոցնելով աներևույթ փոշին ծնկիցդ,

իբր դու ապրում ես սովորական մի օր,
իբր սա մի առօրյա զբաղմունք է քեզ համար, որ դու
մի քիչ հոգնած ես, մի քիչ ձանձրացած, և ի վերջո՝
անփուլթ շարժումով թղթադրամը նետում ես սեղանին,
աշխատելով շմտածել ձմեռային կոստյումի մասին,
աշխատելով չնայել կիսատ մնացած կոնյակիդ,
կիսատ մնացած կերակուրիդ, որն այդպես էլ շհասկացար,
թե ինչպես պետք է ուտել,
կգնաս միայնակ քնելու փոքրիկ խցիդ մեջ,
տանջվելով սրտիդ ծակոցներից ու խալթոցներից
անլիարժեքության...
Քաղաքը վաղուց թաղվել է քնի ու մթության մեջ,
միայն դու, անքուն շենք, քաղաքի կենտրոնում
կանգնած ես բոլոր լույսերդ վառած,
ինչպես տուն,
ուր քիչ առաջ մարդ է մահացել:

Նույն փողոցը, որն անգիր գիտես՝
 դպրոցում սովորած անհամ ոտանավորի նման։
 Սերունիներ, որոնք ամեն ինչ հիշում են,
 շահելներ, որոնք ոչինչ շեն հիշում
 և անվերջ լուսանկարվում են,
 մի աղջիկ, որին բոլորը սիրում են,
 մի հաշվապահ, որն ամեն ինչ հաշվում է
 և վերջապես՝ մի քանի անձրևներ,
 որոնք տեղում են հաշվետու տարում։
 Մանոթ երջանկություն՝
 հարևանի տնից բուրող ճաշի հոտին խառնված
 և նույն համերգների, որ միաժամանակ հնչում են
 բոլոր բաց պատուհաններից,
 կեսպիշերին արթնացած երեխայի լացի նման ծանոթ,
 լուսնի նման ծանոթ, որն անվերջ սափրվում է՝
 դեմքը օճառափրփուրով պատած
 և աշքը շլած ուշադիր զննում է փքված այտերը
 փողոցի թաց հայելու մեջ...
 Հետո
 ինչ-որ մեկը,
 որն արդեն երկի պատրաստվում էր քնել,
 ճոճոացնելով մահճակալը՝ շուռ եկավ կողքի ու թառանշեց.
 Էհ, կյանքն անցնում է, և ես, որ պատահաբար լսել էի նրան,
 նայեցի դուրս և ղարմանքով տեսա՝
 իրոք, անցնում էր...

Հարկավոր է մտածել վաղվա օրվա մասին,
ասաց հարեանս

և ևս մի արկդ օճառ խցկեց պահարանի վերին դարակը:
Հարկավոր է մտածել, ասաց փիլիսոփան:

Ի՞նչ իմանաս ինչ կբերի վաղվա օրը,

թեև այն հիմնականում և ավելի շատ տանում է,
քան թե բերում, տնքալով ասաց հարեանս

հերթական աղի պարկը շալակին:

Ի՞նչ իմանաս, ասաց փիլիսոփան:

Նկատի ունեցիր նաև, որ խառն է աշխարհի վիճակը,
բոլորը խոսում են նոր պատերազմի մասին

և լրագրերն էլ են գրում, ճոնչաց հարեանս՝

մի կերպ քայիելով լուցկու վիթխարի արկդի տակ կքած։
Նկատի ունեցիր, ասաց փիլիսոփան:

Եվ զգոն եղիր, թե չէ, աշքդ կթեքես,

կտեսնես, որ մնացել ես դատարկ սենյակում նստած,
աստծո տված շորերով, այսինքն, բոլորովին մերկ,
դառնորեն քմծիծաղ տվեց հարեանս՝

ևս մի անգամ ստուգելով դռների կողաքեներն ու

փականները։

Եվ զգոն եղիր, ասաց փիլիսոփան։

Էջ, իսկ ամենակարևորը, շմոռանաս ինքդ հոգալ
կարիքներիդ մասին

և հույսդ մի դիր ոչ բարեկամիդ վրա

և ոչ էլ մտերիմներիդ, ասաց հարեանս

և հրաժեշտ տալով ինձ՝

պառկեց իր իսկ ձեռքով պատրաստած դագաղի մեջ

և մեռավ, նախօրոք
ամուր փակելով բոլոր դռները
և հանգնելով բոլոր լույսերը սենյակների:
...Էհ, ասաց փիլիսոփան:

ԹԱՆԳԱՐԱՆ

Հանկարծ քեզ՝ են նայում վաղուց մեռած մարդիկ:
Ահա գրվեց առաջին տողը,
և դու թեթև շունչ քաշեցիր
և մանրիկ քայլերով մտար հաջորդ սենյակ:
Ուր է մյուս կյանքը, հանկարծ մտածեցիր դու,
և ընդհանրապես ինչ նորություն կա այնտեղից,
գիխով բարեսում էիր ինչ-որ կիսամերկ մարդկանց,
որոնք նախաճաշում էին՝ հյութեղ խոտերի վրա տարածված
Ամուր սեղմեցիր մի մազմզոտ տղամարդու ձեռք,
ժպտացիր,
ինչ նորություն կա այնտեղից;
ո՞ւր է մյուս կյանքը, որ պիտի աստառի պես շրջվի,
և աստղերը
դեղին մետաղադրամների նման խշշոցով թափվեն
հնամաշ գոգնոցի գրպանից:
Եվ մանրիկ քայլերով անցնում ես սենյակից սենյակ:
Այստեղ բոլորը սպասում են քեզ,
դու երկար սպասված հյուր ես,
արժանի գրկաբաց ընդունելության:
Պատերի տակ շարվում են լուս,
ոմանք զինված են,

իսկ մյուսները նայում են պատկառանքով,
և վերջին սենյակի դռները բացվում են իրենք-իրենց,
և սենյակի կենտրոնում ոսկյա սարկոֆագի մեջ
պատկած է նա, ով ամենաշատն էր քեզ սպասում:
Ո՞վ է... հարցրեցի նրան, կամաց-կամաց պառկելով
Կողքին,
ի՞նչ նորություն կա... հարցրեցի հարմար դիրքով պառկած,
նա ձեռքով ինձ հասկացրեց, որ լոեմ,
և դռները փակվեցին իրենք-իրենց,
և ես լոեցի վերջնականապես
ու արդեն լրիվ խաղաղված:

ՀՐԱԺԵՑԻ ԵՐԳ

Եվ բաժանվելուց առաջ զրուցեցինք երկար:
Ոմանք գարեջոր էին խմում,
ոմանք նստել էին լուսամուտի գոգին,
մյուսները անտրամադիր ծերանում էին՝
երբեք չծերացող կանանց
հիացմոնքից խոնավացած աշքերի առաջ:
Զրուցում էինք, և րոպեն դառնում էր ժամ ու երեկո,
անցնում էին՝ ինչ իմանաս, որն ինչ ուղղությամբ,
դրսում մերթ անձրև էր գալիս, հետո ձյուն էր տեղում,
մերթ արևն էր ելնում ամպերի ետևից,
և արագորեն դեղնում էին ծառերը՝ քիչ առաջ կանաշած:
Եվ ոչ ոք չէր համարձակվում դուրս նայել պատուհանից,
ոչ ոք չէր ուզում բացել դուռն ամուր կողպված,
որն, ինչ իմանաս, միգուցե կողպված չէր ամենեին:

Եղ բաժանվելուց առաջ զրուցեցինք երկարությունը դուք հանկարծ ոտքի կանգնեցիր (այսօրվա պես հիշում եմ, թե ինչպես շրջապատճեղ բաց-կապտավուն փեշը), և երբ դու հանկարծ ոտքի կանգնեցիր, ժպտացիր տխուր և ինձ մեկնեցիր հրաժեշտի պաղ, դալուկ մատներդ— վաղուց,

շատ՝ վաղուց ես արդեն շկայի, և գերեզմանիս թումբը պատված էր անմոռուկների, ես ինչ իմանամ, որ նոր սերումդով, և արագորեն դեղնում էին ծառերը—քիչ առաջ կանչած...

ՀԱՅՐԱՎՈՐ ԵՐԶԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Իսկ երբ անջատված հեռուստացույցի պես քաղաքն է

մարտմ,

և մի հերթական գիշեր
փոխարինում է մի հերթական ցերեկվա,
դանդաղ լարում եմ զարթուցիւս հին
և սարսուռով խրվում երազներիս մեջ...
Երազներ, ուր ես ուժեղ եմ և պմենակարող,
անարգել անցնում եմ պատերի միջով
և, որն ամենակարևորն է՝ թեթևորեն սավառնում եմ օդում
և տեսնում ամեն ինչ,
միայն քեզ չեմ տեսնում ոչ մի տեղ:
Իսկ ես քեզ որոնել եմ բոլոր գրքերի մեջ,

ուր աշխարհի ամենառւրախ քաղաքներն են ապրում,
ուր միայն հանդիպում են մարդիկ
և այլևս չեն բաժանվում,
բայց դու չկայիր, չկայիր ոչ մի տեղ:
Ես քեզ որոնել եմ կինոների հերթերում,
կինոներ՝ անդավաճան սիրո պատկերներով լեցում,
և միայն դու չկայիր, չկայիր ոչ մի տեղ:
Շքշել եմ կայարաններում՝ հեռու և մոտիկ,
և դիմավորել գնացքները բոլոր,
բայց դու չես գալիս ոչ մի գնացքով...
Եվ երազն անգամ մաշվում է գրքի պես,
գնալով դժվարանում է անցնելը պատերի միջով,
իսկ ամենավատն այն է, որ պարզապես անհնարին է

դառնուա

այս աշնան ցրտին սավառնելն օդում բարակ քնաշորով...
Եվ տարիքս էլ այն չէ, հոգնել եմ արդեն,
ներիր, այլևս չեմ կարող թռչել,
չեմ կարող թռչել...

ԳՐԵՐԱՅԻՆ ԺԱՄԵՐ



1. Գիշերվա սառույցները սև,
սառնությունը ճակատիդ վրա,
անկենդան լույսերը փողոցների:
Եվ միայն արձաններն են առանց դիրքերը փոխելու
խորհրդավոր նայում իրար՝ աննկատ հասկացնելով,
որ հարկավոր է գնալ կայարան,
բոլորն արդեն այնտեղ են.
Կ նվազախումբն է այնտեղ,
և դիրիժորը՝ փայտիկը բարձրացրած,
ուր-որ է կշարժի ձեռքերը...
«Շտապ օգնության» մեքենան սուրաց՝
տանելով ինչ-որ մեկին,
որը դադարում էր երազելուց:
Իսկ գնացքը դանդաղորեն մոտենում էր կառամատույցին.
սովորական եռուզեռ էր կայարանում, սակայն ձայներ
չկային:
Եվ ընդհանրապես այս ժամերին լիովին բացակայում է
ձայնը:

Զկար նաև երաժշտությունը, թեև
ամեն ինչից պարզ երեսում էր, որ
նվազախումբն արդեն սկսել է նվազել,

և դիրիժորը եռանդով թափահարում էր ձեռքերը,
 և լարումից կարմրատակել էին դեմքերը երաժիշտների:
 Այս ու՞մ երազն է, մտահոգված շորսրոլորս էի նայում,
 որովհետև գնացքն արդեն կանգնել էր,
 բայց ոչ ոք չէր իջնում վագոններից
 և ոչ ոք չէր բարձրանում վագոնները...
 ...Դադարել էր նոռուզեռը կայարանում,
 կառամատուցն արդեն ամայի էր,
 հեռանում էին նաև երաժիշտները, տարակուսանքով
 նայելով իրար:

Այս ու՞մ երազն ընդհատվեց, դառնությամբ մտածում էի ես,
 նայելով համրացած գնացքին,
 որը հանկարծ ցնցվեց տեղում
 և հետո դանդաղ հեռացավ՝
 բոլոր դռները փակած:

2. Առաջին սերը — անվերջ մոռանում ես նրան.
 ցերեկները շեն կարող հիշել,
 որովհետև զանգում ես հեռախոսով,
 որովհետև զանգում են հեռախոսով,
 որովհետև ինչ-որ թղթեր ես ստորագրում,
 որովհետև քեզ ինչ-որ թղթեր են ուղարկում
 ցերեկները դու ծերանում ես աննկատ,
 և երեկոյան դարձյալ ծերանում ես աննկատ
 և միայն գիշերը, երբ թեթի ժամացուցն արձակելով
 դնում ես սեղանին,
 հիշում ես առաջին սերդ, որ չի ծերացել բոլորովին:
 Դու գիտես, հազարավոր պատեր այն կողմ
 նա ապրում է իր կյանքը,

և դու ապրում ես քո կյանքը,
թեև արձակել ես թէիդ ժամացույցը
և դրել ես սեղանին,
և վայրկյանները մրջյունների նման դուքս վագելով
ժամացույցից,
Հեռանում են քո կյանքից, կորչելով
սեղանին թափթփված գրքերի ու թղթերի արանքում:
Դու գիտես, հազարավոր պատեր այն կողմ
գիշեր է: Եվ հանգած են լույսերը:
Ճիշտ այսպիսի մի լուսին կախված է լուսամուտից
և անտարբեր նայում է նրան,
ում կորցրել եմ վաղուց,
ում մոռանում եմ ցերեկները
և երեկոյան մոռանում եմ դարձյալ,
և միայն գիշերները, երբ մնում եմ մենակ,
հանում եմ թէիս ժամացույցը, դնում եմ աշքերիս առաջ
և անձայն լալիս եմ իմ անցնող կյանքի համար,
և արցունքները կորչում են
սեղանին թափթփված գրքերի և թղթերի արանքում:

3. Ինչ-որ բան խանգարեց,
այլապես ես հիմա կարող էի Մեքսիկայում լինել,
քնած՝ մայրաքաղաքի հյուրանոցներից մեկում,
խրված՝ իսպանալեզու երազների մեջ:
Բայց ես զարմանալիորեն ուրախ եմ,
որ հիմա վերադառնում եմ տուն,
հարազատներիս համար գնած զանազան նվերներով
բեռնավորված:

Ինքնաթիոը սահում է

տոնականորեն զարդարված գիշերային երկնքով։
Փորձում եմ մտածել և ոչինչ չի ստացվում,
ես անվերջ վայրկյաններն եմ հաշվում
սարսափից, որ ուր որ է կգլորվեմ ներքեւ։
Սարսափից, որ ուր որ է մի բան կպատահի՝
ինքնաթիռում հրդեհ կրոնկվի,
կպոկվի թևերից մեկը,
կամ երկու թևերն էլ միանգամից։
Կամ էլ, մեկ էլ տեսար՝ ինքնաթիռն անհայտացավ,
և ես մեն-մենակ հայտնվեցի երկնքում՝
խավարի ու սառնամանիքի մեջ,
պայուսակներով, ճամպրուկներով, խաղալիքներով
բեռնավորված
կուրամ ներքեւ՝ դեպի հայրենի լեռներն ու գաշտերը,
գետերն ու ձերակները, անտառներն ու պուրակները,
կուրամ՝ ճամպրուկներս ու պայուսակներս ամուր բռնած,
վերարկուիս փեշերը փոփոացնելով հրեշտակի թևերի նման,
հրաժեշտ տալով գլխարկիս, որն ինձանից ուշ կհասնի
} գետնին,

լրացուցիչ տվյալներ հաղորդելով մեր անցած ուղու մասին։
Ես ուզում եմ մտածել, և ոչինչ չի ստացվում,
ուզում եմ վերհիշել անցած կյանքս, բայց ոչինչ շեմ գտնում
վերհիշելու,
գոնե ինչ-որ մի դեմք, ինչ-որ ուրախ կամ տխուր պատկեր,
գոնե ինչ-որ մի տող՝ բավականաշափ իմաստում՝
կյանքը գեղեցիկ և նպատակասլաց եղրափակելու հարմար...
Բայց հողն արդեն շատ է մոտ,
իսկ ես դեռ անպատրաստ եմ
նրա հետ այսպես՝ դեմ առ դեմ հանդիպելու համար...»

4. Ես ապրել եմ ուրիշ գիշերներ,
որոնք չափազանց երկար էին տևում
ձանձրալի կինոյի նման,
տեսել եմ աստղեր, որ վառվում էին անպատճախան սիրուց
և մոլորակներ, որ դեռ կայծկլտում էին՝
փարատած կասկածները վերջին։
Եվ մարդկանց, որ խելագարի պես վազում էին երազների
հտեւից,

նամակներ գրում իրար, մեռնում էին կարոտից
և բոլորը միասին սպասում էին անհամբեր,
թե երբ է վերջանալու գիշերը, որը երկարում էր
ձանձրալի կինոյի նման։
Եվ ես հիացմունքից խոնավացած աշքերով
նայում էի նրանց, ովքեր վազում էին երազների հտեւից.
որտեղից գտնեի ծաղիկներ նրանց ճանապարհին նետելու,
որտեղից գտնեի թաշկինակ՝ հրաժեշտի համար
թափահարելու,

ես հիացմունքից խոնավացած աշքերով՝
նայում էի նրանց աշքերին,
որ վառվում էին անպատճախան սիրուց,
կայծկլտում էին՝ փարատած կասկածները վերջին,
նայում էի թանաքոտ մատներին,
որ երկար նամակներ էին գրում,
հոգնատանց մարմիններին,
որ վազքի մեջ մեռնում էին կարոտից,
որ քնի մեջ նույնիսկ թպրտում են՝
հիշողությունների ցանցի մեջ խճճված։
Ես որտեղից ճարեմ ուրիշ գիշերներ՝
գեղեցիկ երաժշտությունով և երջանիկ հանդիպումներով,

խոստումներով հեռու գնացող և գույնզգույն հրավառությամբ,
Ես որտեղից ճարեմ ուրիշ գիշերներ՝
ամբողջովին ծաղիկների մեջ կորած,
և թաշկինակներ՝ սրբելու արցունքները երջանկության...

5. Ես մի օր կվերադառնամ տուն,
գիշերով՝ ծերությունս խավարի մեջ թաքցրած.
գողունի կմոտենամ պատուհանին
և կամացուկ կթակեմ ապակին,
որպեսզի ոչ ոք շարթնանա,
բացի նրանից, ով դասերը մաքուր սերտած
քնել է պատուհանի տակի մահճակալին,
փոքրիկ, հնամաշ շալվարն ու վերնաշապիկը
աթոռին խնամքով ծալած
և խորը քնի մեջ տեսնում է
առաջին դասարանցուն լվայել երազներ:
Ես նրա համար սքանչելի մատիտներ եմ բերել
աշխարհի ամենահեռավոր երկրներից,
շքեղ ու գունավոր գրքեր՝ խորհրդավոր պատմություններով,
հեծանիվ, որի նմանը չես գտնի ամբողջ քաղաքում,
տարրեր շափսի գնդակներ և զանազան մանրմունք բաներ,
որոնք ես չեի կարող երազել այն տարիներին,
որովհետեւ ես չգիտեի, որ ընդհանրապես գոյություն ունեին
դրանք...

Ես մի օր կվերադառնամ տուն,
գիշերով, գողունի կմոտենամ պատուհանին
և կթակեմ ապակին,
նորից ու նորից, կթակեմ երկար ու անպատասխան—

ևոչոք շի արթնանա քնից,
ևոչոք շի կտրվի երազից,
և մոլորված կկանգնեմ գիշերվա խավարի մեջ՝
սքանչելի մատիտներով,
շքեղ ու գունավոր գրքերով,
տարբեր շափսի գնդակներով
և հեծանիվով,
որի նմանը շես գտնի ամբողջ քաղաքում...

6. Ովքե՞ր են այս մարդիկ—
տարակուսանքով նայում ես կրպակների պատուհաններից
համառորեն ժպտացող կինոաստղերի մաքուր սափրված
դեմքերին
և սքանչելի ատամնաշարերը բացած գեղեցիկ կանանց,
որոնք, միգուցե, վաղուց են ծերացել:
Մանեկենները խանութների ցուցափեղկերում անցկացնում
են հերթական գիշերը,
անշարժ կանգնած նույն դիրքով՝ Ղովտի կնոջ նման:
Մանեկենները։ Ահա մի նոր խոսակցության սկիզբ,
որը հասունանում է ինչպես անապատի բույս,
հասունանում է դանդաղ՝ ուղտի բրդից դանդաղ
և ուեռուն,
ինչպես գաղափարը պատերազմի— ուղեղներում միարժիշտ։
Մանեկենները։ Փառահեղ կրծքավանդակներում մի-մի
փայտփորիկ
կտցահարում են վերջին միջատները կասկածների,
և մոտորի միալար բվլոցով
նրանց շուրջբոլորը հուսահատ պտույտներ են գործում
հոգիները, որ ոչ կարողանում են հեռանալ

և ող էլ մոտենալ՝ մի նոր կյանքի խոստումով—հուսահատ
բվլոցով պտտվում են հոգիները՝

արհեստական ծաղիկների շխամրող գույներից խարված
մեղուների պես։ Զարմանալի գետեր են հոսում գիշերային
քաղաքի փողոցներով,

և ձուկ են որսում կատուները քրտինքի մեջ կորած,

և ձուկ են որսում բոլորը,

ովքեր արթուն են այս գիշեր,

և ձուկ են տեսնում երազում

ովքեր քնած են արդեն։ Ահա

մի նոր խոսակցության սկիզբ։ Ահա մանեկենները

մինչև ծնկները կանգնած դանդաղ հոսող ջրերի մեջ,
բարձր պահած ձեռքերի մեջ վերջին ձուկը,

որ թպրտում է հուսահատ,

ինչպես կյանքը, որ գուցե թե մի օր մարի,

և բարալիկ ծնկոցով կկտրվի փայտփորիկի լարը

և կանշարժանա վերրջին գիշերվա մեջ,

և ուղտի բրդի պես կիշեքաղվեն

ժպիտները՝

կինոաստղերի մաքուր սափրված դեմքերին։

7. Խոսիր սիրո մասին, և գիշերային քաղաքը կարթնանա։
Բարձրածայն խոսիր սիրո մասին՝

անցնելով փողոցից-փողոց—

գիշերային քաղաքը կարթնանա, լույսերը կվառվեն

պատուհաններում,

ծառերը կսկսեն աճել զարմանալի արագությամբ,

գաճաճ թփերը կփարթամանան,

և վաղուց մեռած ծիլերը կարթնանան և դուրս կսողան՝

ծակելով ասֆալտը, բետոնը, ապակին:
Աչա տես, նոր թռչուններ հայտնվեցին հետզհետե սպիտակող
երկնքում,
տես,
ինչպես են վառվում նըանց փետուրները գույների
առատությունից,
տես սերը՝
այդ զարմանալի գետը ինչպես է հոսում
քաղաքի փողոցներով,
լցվում պատուհաններից ներս,
բարձրանում հարկ առ հարկ...
Դու շարունակիր խոսել,
բարձրաձայն,
սիրո մասին,
և անաղմուկ կոտրատելով գիշերվա կճեպները սև
դուրս կցատկի առավոտվա թռչունը,
և հոգիդ կիաղաղվի միանգամից՝
առատությունից գույների...

Միտիւրիր, երբ նստած ես սեղանի առաջ.

և մի արտասվիր, երբ գինի ես խմում,

կամ աստված գիտի թե ինչ,

և մի գրիր բանաստեղծություններ,

երբ հեռու ես քո քաղաքից:

Փողոցով քայլող այն երեք մարդուց

դու նա ես, որը շի գնում առաջ

և շի օրորում գլուխը,

կամ էլ շի ճոճվում տեղում.

դու նա ես,

որը վճռական ու ողբերգական շարժումներով
խրվում է հողի մեջ՝
անվերադարձ վշտի կնիքը դեմքին:

Իսկ քո մշուշոտ աշքերի առաջ,

շափից դուրս հուզված,

ճշում են, թոշկոտում

նավթոտ, կնճռապատ ծովահարսերը:

... էլի նույն խոսքերի և նույն քամու

և ավագի վրա

դու վերջացնում ես քո օրը,

և լուր նստում ես մութ սենյակի մեջ

և ծերացող տղամարդու հուսահատությամբ

անհեթեթ ժպտում...

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Ոչինչ չէի հասկանում,
բայց հրաշալի էր.
սև սերթուկավոր մի մարդ
թափահարում էր ձեռքերը,
և հնչում էր իսկական ու մեծ
երաժշտությունը,
որն ես առաջին անգամ էի լսում,
որովհետեւ
բոլորովին վերջերս էի ծնվել
և նոր-նոր էի գրել-կարդալ սովորում
քույրերիս օգնությամբ:
Լսում էի և ուզում էի մտածել,
լսում էի և տեսնում էի բաներ,
որոնք թեև անծանոթ էին,
բայց ժպտում էին
և շոյում էին գլուխս,
որը հասունանում էր արևածաղկի նման,
և իսկական ու մեծ երաժշտությունը
շողում էր արեածաղկի վերեռում,
ինչպես իսկական ու մեծ արև:

Երբեք դու կհիշես այդ տեսարանը,
 Երբ այլևս քիչ բան կմնա հիշելու:
 Արագորեն աճող ծառերի խուռներամ բազմություն
 և թոշուններ,
 որոնք ապրում և թոշում են միաժամանակ:
 Ճով և էլի ճով—
 Նրա անունը քեզ կնետի
 Թախծի գունատ ալիքների մեջ,
 ուր դու ավելի լավ ես լողում:
 Եվ ալիք առ ալիք փշրվում են ավազի վրա
 անցած օրերդ— և դու,
 որ վազում ես ափի երկայնքով
 և չես կարողանում հասկանալ;
 Թե ինչ կկատարվի այս ամենի հետ,
 Երբ իշնի խավարը,
 անընդհատ իշնի խավարը...
 Եվ դու կհիշես (չէ՞ որ
 դու այդպես ես ապրում),
 Երբեք կհիշես այդ տեսարանը—
 արագորեն աճող ծառերն արդեն երկինք են հասել,
 և չկա ոչ մի թոշուն,
 որն ապրել ուզենա...

ՓՈՔՐԻԿ ԱՍՏՂԻ ԵՐԳԸ

Ես քո մասին կարդացել եմ մի դեղնած մագաղաթի վրա:
Անշափ տխուր օր էր,
լրագրերը նոր պատերազմից էին գրում,
և ոչ մի հետաքրքիր բան չկար մխիթարվելու
հսկ դա մի շատ հին մագաղաթ էր,
որը շգիտես թե ինչպես էր հայտնվել
աշնան դեղին տերեներով լցված փոսի մեջ:
Զգացվում էր, որ շուտով անձրև է գալու,
և բամին հապճեպ դեսուղեն էր քշում տերեները՝
անձրևին տեղ տալու համար,
և քամու շնորհիվ ես պատահաբար տեսա տերեների

արանքից

Հեռավոր աստղի լուսը,
որը փոքրիկ աղամանդի նման
կայծկլտում էր անշափ հին մագաղաթի վրա:
Տխուր էր,
պատերազմի առաջին օրվա պես տխուր,
որը երեկի թե շատ տխուր է, լրագրերից ավելի տխուր:
Եվ ես մագաղաթը զգուշորեն հանեցի տերեների արանքից,
սրբեցի զգուշորեն և բերեցի տուն:
Եվ երբ տառը տառին կպցնելով՝ սկսեցի կարդալ,
պարզ երեաց, որ օրորոցային երգ է,
որովհետեւ, երբ սկսեցի կարդալ,

շզգացի, թե որ պահից կարդալը փոխվեց երգի.
քնեք, ասում էր երգը, քնեք հազար տարի առաջ
և քնեք հազար տարի հետո, ասում էր երգը
և ինչ իմանամ ինչ է լինելու հետո—
մագաղաթը երգեց ինձ հետ—
քնեք, խաղաղ քնեք,
ինչ իմանամ, ինչ կդառնաք հետո,
միոտանի կլինեք, կամ էլ միծեռանի,
կամ էլ լրիվ անձեռ,
կամ էլ լրիվ անձեռ,
ես ինչ իմանամ, գուցե վաղը
ձեր դատարկ օրորոցները
կթափառեն դատարկ տիեզերքով մեկ...
Դե, ուրեմն, քնեք, քնեք,
գոնե այս մի քանի ժամը,
գոնե այս մի գիշերը
գուցե վերջին գիշերը
քնեք, խաղաղ քնեք...
Եվ ես լաց եղա անզուսպ,
գլուխս լրագրերի մեջ թաղած...

Ահա և իսկական անտառը: Ընդամենը մի քանի քայլ,
և ծառերը հարազատի պես ընդունեցին քեզ:
Ու մի ծանոթ դեմք, տխրությամբ մտածեցիր,
զգուշորեն շրջանցելով դողդողացող նապաստակին,
որը մեջքի վրա պառկած աստղերն էր հաշվում:
Քիչ հեռվում անտառապահի արձանն էր՝
բավականին հաջող կրկնօրինակը
Ռոդենի՝ արդեն լափից դուրս երկար մտածող մարդու:
Շոմը՝ խփված փասիանը ատամների մեջ:
Հետո երևաց մեղավոր ժպիտը,
իսկ որսորդի դեմքը հայտնվեց ավելի ուշ:
Ինչ-որ մեկը հանգցրեց լույսը, և անտառը միանգամից
մթնեց:
Եվ ապա գայլերն սկսեցին աշխույժ երթևեկությունը՝
ավտոմեքենաների լապտերների պես աշքերը պայծառ
վառած:

Երեխ կորցրել եմ ճանապարհը —
անսպող ուրախությամբ մտածեցիր,
Հիմա գազանները վրա կտան —
սիրտդ հրճվանքից կծկվեց,
կամ գոնե օձը կխայթի և կամ էլ ուժեղ անձրև կսկսվի,
և դու կպահվես մի որեւէ ծառի տակ,

և տերկից սառը կաթիլը կծորա ծոծրակիդ,
և դու միանգամից կերչանկանաս...
իսկ եթե հանկարծ անտառապահի աղջիկը
դուրս ելնի քո դեմ
և ամոթխած կանգ առնի հանկարծ
և աշքերը խոնարհի ներքեւ—
դու նրան անպայման կպատմես մեծ-մեծ քաղաքների

մասին,

տղամարդու դժվարին հոգսերով լցված կյանքի մասին,
որն անցնում է այսպես՝ թափառումների մեջ,
և ապա դու նրան անպայման կխոստովանես,
որ հոգնել ես ամեն ինչից
և որ կուզենայիր ապրել մի խոզ անտառում,
քողտիկում աղքատիկ...

Հետո ինչ-որ մեկը լույսերը վառեց,
և մարդիկ ձեռքերը գրպանները խրած դուրս ելան փողոց
և հեռացան արագ քայլերով,
առանց իրար երեսի նայելու... .

ՔՐՈՆԻԿՈՆ

Խոնավ քարանձավի հեռավոր ու մութ անկյունում
ծվարել է անանուն մի բույս,

որից

գուցե թե հազար տարի հետո

մարդ առաջանաւ:

Դուրս կփա քարանձավից,

կնստի արևի տակ,

աշխարհում միայնակ;

մեն-միայնակ մի մարդ:

Կօրորի ինքն իրեն,

ինքն իրեն կկերակրի

և կմեծանա կամաց-կամաց:

Հետո քարանձավից դուրս կփա

մեկ ուրիշ մարդ՝

մեկ ուրիշ անանուն բույսից առաջացած.

կնստի արևի տակ,

կօրորի ինքն իրեն,

ինքն իրեն կկերակրի

և կմեծանա կամաց-կամաց:

Այսպես մինչև մութն ընկնելը:

Եվ երբ արևը մայր մտնի

և երբ ցրտից քշված

նրանք կմտնեն քարանձավ,

նա, որը առաջինն էր ծնվել անանուն բռւյսից,
նա, որը առավել հասուն էր
ու առավել ուժեղ,
առանց ավելորդ դեսուդեն ընկնելու,
առանց հապաղելու կվերցնի մյուսին
և դուրս կշպրտի քարանձավից
և խաղաղ ու անվրդով կքնի՝
ընդամենը մի քանի ակնթարթում ավարտելով
առաջին համաշխարհային պատերազմը:

ՍԱՂԻԿՆԵՐ

Դաշտում ինչքան երեխաներ կան քնած:
Նրանք դեռ շատ փոքր են
և խոսել չգիտեն:
Նրանք, նույնիսկ,
դեռ չեն սովորել
քայլել:
Խսկ վերեկից,
ամպերի արանքից նայում է մայրը
և խնդրում է բոլորին.
Վգույշ անցեք նրանց կողքով,
թե չէ ինչ պիտի անեմ,
եթե արթնանան բոլորը միանգամից
ու սկսեն լաց լինել
բոլորը միանգամից:

ԹԱՏՐՈՆ

Ամեն օր սափրվել և լվացվել երկու անգամ:
Լողանալ հնարավորին շափ շուտ-շուտ:
Խողանակել ատամները,
Խողանակել կոշիկները,
Խողանակել վերարկուն:
Կարդալ դասական գրականություն:
Ծուկա՝ շաբաթվա վերջին օրը:
Խմել հում ձու և բերանը ողողել սողայով:
Բարեկել հարեաններին և մուծել տան վարձը:
Քնել հեռուստացույցի առաջ՝
գեմքը լրագրով ծածկած:
Արթնանալ,
ամեն օր
սափրվել և լվացվել երկու անգամ:
Եվ խեղդել Դեղդեմոնային ամեն իրիկուն:

■

Երբեմն լույսերը մարում են, և ձյուն է գալիս այս
ճանապարհին:
Նոր ծնված երեխան՝ մաքուր ու գեղեցիկ առաջին ձյան
նման:
Օրորեցեք օրորոցները և կտեսնեք հրաշքը,

կահսնեք, թե ինչպես է
ձյունը դառնում ծաղիկ։
Իսկ երբ կժպտա առաջին անգամ՝
սիրտդ կծավի անսովոր մեծ երջանկությունից,
կհենվես պատին, զարմանքով կմտածես ինքդ քեզ.
աստված իմ, ինչպե՞ս է
այսքան մեծ երջանկությունը տեղավորվել
այսքան փորիկ օրորոցի մեջ
և ինչպես է տեղավորվելու սրտիս մեջ,
որը շատ ավելի փոքր է օրորոցից...
Իսկ երբ այս ճանապարհի վրա լույսերն հանգչում են
և պատուհանիդ սև պաստառին սկսում են երեալ
ճերմակ ու փափուկ լույս տարածելով՝
ներքե սուրացող ձյան հյուսքերը,
քեզ կթվա, թե այդ դու ես բարձրանում վերև,
ճիշտ այնպես, ինչպես կամրջից
սուրացող գետի ալիքներին նայելիս թվում է,
որ գետը կանգնած է և դու ես,
այդ դու ես կամրջի հետ սուրում առաջ...
Բայց ես հիմա բարձրանում եմ երկինք առանց կասկածի,
բարձրանում եմ առանց թերի և առանց զարմանալու,
որովհետև գիտեմ, շատ հազվադեպ, բայց և երբեմն
պատահում է

և ում հետ չի պատահել այսպես՝
երբ երջանկությունդ շատ է մեծ,
և դու բառ չես գտնում
արտահայտելու համար...

Ցածրաձայն խոսիր, ասում է կինս,
որ երեխան շարթնանա—
և ես քայլում եմ ոտքիս մատների վրա,
զգուշորեն փակում-բացում եմ դռները,
զսպում եմ հազս,
որ երեխան շարթնանա:
Երեխան, որ երազի մեջ
ինչ-որ անհեթեթ բաներ է տեսնում
և մեկ ժպտում է
և մեկ էլ թաթիկներն է թափահարում հանկարծ...
Անշատիր հեռուստացույցը, ասում է կինս,
որ երեխան շարթնանա,
պատերազմից են խոսում, ասում եմ կնոջս,
զինվորականներ՝ են խոսում, ասում եմ կնոջս,
հետաքրքիր են խոսում, թող մի քիչ մնա—
դե լավ, ասում է կինս,
թող մնա, ասում է կինս,
միայն նրանց ասա մի քիչ հանգիստ խոսեն,
մի քիչ խաղաղ խոսեն,
որ երեխան շարթնանա...

Այն, ինչ շտվեցի քեզ,

այն, ինչ շուզեցիր վերցնել, այն, ինչ շդարձավ միրգ՝

ու վերջապես՝ այն, ինչ շտվեցի քեզ,

թող մնա ինձ մոտ այսօր, վաղը,

թող մնա ինձ մոտ առհավետ:

...Հանդարտ ու սահում ընթանում է առավոտվա

արարողությունը:

Այն, ինչ խմորվում է հիմա իմ մեջ,

գերեզմանաթմբիս կդառնա ծաղիկ, վարդ,

կամ գուցե բոլորովին ուրիշ բան՝

սենտիմենտալ ու եղերական մի բույս,

իր թերթերով, տերևներով և վերջապես՝ ցղղունով,

որը անպայման կզարմացնի գիտությանը իր հոտով, ձևով,

որը անպայման կզարմացնի գիտությանը իր գույնով:

...Կարծատե է արևի իշխանությունը սրտերի վրա:

Այն, ինչ դու շուզեցիր ստանալ որպես խոստում, ահա ես
այրում եմ

և նետում տարբեր ուղղություններով, իհարկե,

սոսկալի տանջվելով ցավերից ու վշտերից:

Իսկ մենակության հրաշալիքները կամաց-կամաց պարզվում
են իմ դեմ,

և ես մի կերպ ուղղում եմ մեջքս, ոտքերս,

և ես մի կերպ ուղղում եմ հայացքս:

...Գուցե լավ է, երբ երգը կեսից է ընդհատվում,
ես լալիս եմ նրանց համար,
ովքեր շեն հասկանա այս խոսքերի իմաստը՝
եկ ես լալիս եմ, որովհետեւ վերջնական ու հավիտյան է
իշխանությունը գիշերվա:
Իմ ողբը շարունակվում է առանց ընդհատվելու,
որովհետեւ ես հիշում եմ հանկարծ, որ այն, ինչ շտվեցի քեզ,
որ այն, ինչ շուզեցիր վերցնել, որ այն, ինչ շդարձավ միրգ,
խմորվելու է իմ մեջ անընդհատ ու անընդհատ
և գերեզմանաթումբս ծակելով նետվելու է դուրս՝
սենտիմենտալ ու եղերական ճիշով:



Ես նախ հող նկարեցի ճերմակ թղթի վրա,
ու ու հարուստ հող:
Հետո առողջ սերմեր ցանեցի հողում,
գեղեցիկ ժաղկի սերմեր:
Ես անվերջ փիրեցնում եմ իմ հողը,
սերմերն իմ ջրում
ջանասիրաբար,
իսկ ցուրտ օրերին
տաքացնում եմ
ձեռքիս ափերով:
...Ամեն գիշեր,
երբ փակում եմ աշքերս՝
գեղեցիկ ժաղիկներ են բացվում
ճերմակ թղթերի վրա:

Քաղաքի քու, խոնարհ անձրեզ,
 որ վարժեցրած է ու արդեն տանու,
 զուգարանի պես՝ քաշում ես ամպից կախ ընկած թելլ.
 անձրես է գալիս,
 սանիտարական միջոցառման պես, որը նշված է
 ինչ-որ մի դեղնած հաշվեմատյանում...
 ...Մուտքում կուզ եկած վիթխարի շենքի,
 խղճուկ, որրուկ նոյ, աշխարհում մենակ,
 փրչոտ մի կատու քսվում ոտքերիդ,
 և մութը, մութը, որ հեղեղի պես լցվում է ահա
 և հետզհետե բարձրանում է վերս
 Մուտքում կուզ եկած վիթխարի շենքի,
 նայում ես հեռու— գուցե չես նայում,
 և մտածում ես— կամ չես մտածում,
 Մի քիչ սեր լիներ— նվզում է հոգիդ,
 սեր լիներ մի քիչ— ու լաց ես լինում:
 Իսկ անձրեն անվերջ թափվում է, թափվում
 և բարձրանում է մթի գոլորշին,
 զրին խառնված բարձրանում է վեր՝ վիթխարի շենքը
 նավի պես հսկա, լուռ օրորվում է խավարի վրա:
 Խղճուկ, որրուկ նոյ, տխուր նայում ես քո ունեցվածքին,
 այս ի՞նչ ես փրկել և ուր ես տանում.
 այս փրչոտ կատվի՞ն, թիկնո՞ցդ հնամաշ,
 որ ժամանակն է վաղուց նետելու,
 գրքի դեզե՞րը՝ շափածո տանջանք,
 ասֆալտ, ապակի, տուփեր բետոնե, որ տուն են կոլվում,
 պարտադիր սո՞ւրճը առավոտյան վաղ,
 ինն անց երեսում, հացի խանութում...

Թայց լոռւթյունը քերծելով թեթև,
ոմանք տավիդ են նվագում, լսիր,
ուզում են երգել և կու-կու
մատնում են իրենց ծագումը խավար...
Այս ինչքան ագուավ անցավ փողոցով,
շարագույժ երգով՝ այլևս երբեք, այլևս կու...
Մուտքում կուշ եկած նայում ես նրանց
և մտածում ես— թե՞ չես մտածում,
այս երբ շատացան— մտածում ես դու,
ո՞նց են գիրացել— զարմանում ես դու...
ինչքան շատ ագուավ— ոչ մի աղավնի,
ինչքան շատ տավիդ— ոչ մի մեղեղի,
միալար ու գոհ, ներդաշնակ կուան— այլևս երբեք:
Կոնգուկ, որբուկ Նոյ, կուշ եկած, մենակ,
կանգնել ես մթնում հսկա նավի մեջ,
մի քիչ սեր լիներ— մտածում ես դու,
սեր լիներ մի քիչ— ու լաց ես լինում:
Խոկ անձրեն հանկարծ մոտենում է քեզ,
խոնարհ ու քսու մատներն է քսում դեմքիդ, ուսերիդ.
— Սերը չի դառնա,— շշնջում է նա, —
դու սեր չես փրկել քո այն նավի մեջ:
— Սերը խեղդվել է, — երգում են ուրախ ագուավները սե, —
շկար, սեր շկար քո այն նավի մեջ:
Հետո հեռացան դհոլի զվարթ դմիոցի տակտով...
Թայց դու քսվելով պատերին խոնավ, խղճուկ, որբուկ Նոյ,
աշխարհում մենակ, պտտվում ես քո թակարդ-նավի մեջ,
նվվում ես տկար՝ մի քիչ սեր լիներ, սեր լիներ մի քիչ...
Եվ քո միայնակ ողբն է օրորվում
մթության անծայր հեղեղի վրա...

ԵՐՁԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՆՐ ՕՐ

Ավարտված երգը, պատոված փուշիկի նման սմբած՝
կուշ է եկել սեղանի մի անկյունում,
հատակին փոշի և զանազան մանր կենդանիներ,
անփոփոխ կերպարանքներով՝ առաջին փարավոնից մինչև
մեր օրերը
և մի բարակ թախիծ, որ աննկատ թրջում է մթնող փողոցները.
Ուսանողական արկած մի պառավող տիկնոջ կացարանում,
սիրտդ լի է խանդավառ զգացմունքներով տարբեր,
իսկ ստամոքսիդ մեջ
միակ կոտլետը հանձնվել է առանց դիմադրության,
և պատուհանի կոտրված ապակին շի թողնում, որ կարգին
հարբես,
և դուք շարունակում եք երջանկությունից խոսել,
իսկ դու մտածում ես, որ երջանկությանը կատարյալ
կլիներ,
եթե կարողանայիր դուրս գալ
ճաշարանի փակվելուց զոնե մի քանի րոպե առաջ...
Զեռքդ տանում ես ուսին, շոյում ես թևը գիրուկ—
պատուհանի կոտրված ապակին խանգարում է քեզ սիրել,
իսկ զանազան մանր կենդանիները
շարունակում են անտարբեր վազվզել՝
ինչ-որ անհասկանալի հիերոգլիֆներ գծելով
հատակի փոշու վրա...

Երբեք երջանիկ եղե՞լ եմ, հարցրեցի ինքս ինձ, տարիներ հետո
երբ վերադառնում էի պառավող տիկնոջ թաղումից,
որն, ի վերջո, պառավել էր հիմնավորապես
և սմբած կուշ էր եկել սեղանի վրա...

Հիմա էլ ո՞ւմ հետ խոսեմ երջանկության մասին, հարցրեցի
ինքս ինձ,
ավարտված է երգը, ասաց փողային նվազախումբը, և
փողոցը մթնեց մեկից,
ավարտված է, հաստատեց լուսինը. պատուհանի կոտրված
ապակին
և աստղերը՝ զանազան մանր կենդանիներ, անփոփոխ
կերպարանքներով,
շարունակում էին անտարբեր վազվակել՝
ինչ-որ անհասկանալի հիերոգլիֆներ գծելով
երկնքի սեացող պաստառին...

ԱՄՐՈՑԸ

Այն գիշեր ամրոցը վերականգնում էր իր պատերը,
բարձրանում էր վայրկյան առ վայրկյան՝ աշխարհի բոլոր
ծայրերից հավաքելով վաղուց ի վեր կորսված քարերը,
որ շարվում էին իրար վրա,
և գիշերվա որոշ մի պահի
ամրոցը թեթևացած շունչ էր քաշում՝
արդեն լիովին կանգուն։
Հետո անհայտ է, թե որտեղից դուրս էր նետվում գետը
և տանու, սովոր կատվի նման
մռմռալով՝ մեջքը քսում էր ամրոցի մամուած քարերին...

ճռնշոցով բացվում են ամրոցի դարպասները ծանրութեա,
և հեծյալների մի հոծ խոմբ թիկնոցները ծածանելով
և փոշու ամպ բարձրացնելով՝ ձուզում է խավարին,
և դարպասները նորից գոցվում են ճռնշոցով։
Հետո մաքուր ու խաղաղ երեսում է լուսինը՝
օրորոցում մաքուր ու խաղաղ քնած
երեխայի կլոր ու ճերմակ երեսի նման։
Հետո անաղմուկ բացվում են
ամրոցի ամենաբարձր սենյակի դռները,
և պատշգամբ է ելնում
ճերմակ գիշերազգեստով մի աղջիկ
և տիսուր աշքերով նայում ճանապարհներին,
որ կորել են գիշերվա անթափանց խավարում...
Անցել են հազար, գուցե ավելի տարիներ,
բայց ամեն գիշեր հավաքվում են վաղուց կորսված քարերը
և շարվում են իրար վրա,
ամեն գիշեր լույսերը վառվում են
ամրոցի ամենաբարձր սենյակում,
որտեղ սպասում են նրանց,
ովքեր գնացին մի օր ու չվերադարձան։

ՎԵՐՁԻՆ ՀՐԱԺԵՇՏԻ ՄՈԼՈՐԱԿԸ

Մի տխուր ուսանող, որ ոշինչ շունի սովորելու,
շորս պատ, դատարկ սենյակ

և մի խանդավառ արև, որ տեղի-անտեղի
մտնում է պատուհանից ներս

և տնտղում է սենյակի պատերը

և ոշինչ լի գտնում

մի դեղնած պլակատից բացի,
որի վրա մի անճոռնի դինոզավը էր նկարված,

որը շրջում էր

քաղաքային պուրակի ժառերի արանքում,
իսկ վերևում գրված էր.

«Պահպանենք բնությունը—

առավոտյան ժամը 9-ից մինչև երեկոյան ժամը 5-ը,
ընդմիջում՝ 12-ից մինչև 1-ը»:

Իսկ քաղաքային պուրակի ժառերը

կանաչում ու ծլում էին խստիվ համապատասխան ցուցումին՝
առավոտյան ժամը 9-ից մինչև երեկոյան ժամը 5-ը,

կանոնավոր ընդմիջում էին անում կեսօրին,

իսկ շաբաթ և կիրակի օրերին

շքանում էին երկրի երեսից:

Եվ մի շաբաթ օր,

երբ արեք սովորականի. նման

ներս նայեց պատուհանից— զարմանքից

քիշ էր մնում մայր մտներ—

շկար տխուր ուսանողը,

և դինոզավրը շկար,

ծառերն էլ շկային— միայն գրությունն էր մնացել.

«Պահպանենք բնությունը...»,—

իսկ դա տեղի էր ունեցել ուրբաթ երեկոյան,

երբ մարդիկ հոգնած վերադառնում էին տուն

և ուշադիր նայում էին իրար երեսի

և կամ լրագրերի մեջ գլուխները թաքցրած՝

համաշափ շնչում էին՝

խանդավառ հոգվածների բույրով արբեցած...

...Ուրբ սթ երեկոյան,

երբ տխուր ուսանողն առաջվա նման

ոչինչ շուներ սովորելու

և կեսրուն-կիսարթուն պառկած էր

սենյակի ուղիղ կենտրոնում,

դինոզավրը հանկարծ սահեց պլակատից և անշատվելով

պատից,

դանդաղ մոտեցավ և կանգնեց ուսանողի առաջ.

աստվածային նշան է, ուսանողն ասաց,—

բարի է սկիզբը մեր ճամփորդության,—

և շարժվեցին:

Եվ դինոզավրը, որ մինչ այդ լուր էր,

անսպասելիորեն խոսեց մաքուր գրական հայերենով.

«Թեկուզ մի անգամ էլ ծնվես այս մոլորակում,

շես մոռանա ոչինչ,

երջանկությունը շատ նուրբ ժաղիկ է,

ավաղ, չի ժաղկում ցուրտ երկնքի տակ,

իսկ ով մեռնում է ժամանակից շուրջ,

Հետո կմեռնի նորից ու նորից,
միայն մի ժաղիկ, որ անուն չունի,
կուղեկցի նրան երկու աշխարհում,
մթնում լույս կտա,
իսկ առավոտյան կլինի կողքին,
և լույսը կլինի ավելի պայծառ—
և հոգնած լոեց։

Աստվածային նշան է,— ուսանողն ասաց,—
բարի է սկիզբը մեր ճամփորդության։
...Եվ հայտնվեցին
մի շատ տարօրինակ մոլորակում,
մի տիսուր ուսանող և մի անճոռնի դինոզավր,
և ուսանողը ութ անգամ ավելի էր տիսուր,
և դինոզավրը ութ անգամ ավելի էր անճոռնի
և ութ անգամ ավելի էր անպաշտպան,
և այնքան շատ բան կար սովորելու
այդ զարմանալի մոլորակում։
Զեռք-ձեռքի տված՝
քայլում էին մոլորակի միակ փողոցով,
իսկ փողոցի եզրին
շարված էին հենց այն ժառերը,
որոնք շաբաթ և կիրակի օրերին
լքում էին պուրակները քաղաքային
Քայլում էին նրանք և ուզում էին երազել
և ոչինչ չէր ստացվում՝
երազները թեթև էին այստեղ ուղիղ ութ անգամ
և միզուցե մի քիչ ավելի թեթև
և միզուցե մի քիչ ավելի անգույն։
Եվ առաջինը, ինչ տեսան նրանք՝

աղբանոցներն էին անթիվ ու անհամար,

շքեղ ու հարուստ աղբանոցներ,

որպիսիք չեք տեսնի երկրի երեսին.

պրիմուսներ, նավթավառներ,

պարուսինե կոշիկներ, կոտրված գրասեղաններ,

գրականագիտական հոդվածներ, թեկնածուական

դիսերտացիաներ,

սուլիչներ, փուշիկներ, հավատարմության խոստումներ,

կինոաստղեր,

բանաստեղծություններ, սիրային նամակներ,

պրեզիդենտության թեկնածուներ և մի գնդացիր, որը

անվերջ ու շարունակ կրակում էր

ամենատարբեր ուղղություններով, ~

և մի ամրիոն,

որը նետել էին ելույթ ունեցողի հետ միասին,

և հոետորն ակնոցն ուղղելով շարունակում էր միտքը
զարգացնել.

բնության պահպանությունը բոլորիս խնդիրն է...

երջանիկ զույգեր, զերմ վերաբերմունքներ,

սոխակների քառաձայն երգչախումբ,

փետրահան արված թևավոր մտքեր,

առողջ դատողություններ, տեղին դիտողություններ,

կարճ փոխանցումներ

և բարձեր,

որպես սառը զենք կցված դատական գործերին...

Զեռք-ձեռքի տված՝

քայլում էին մոլորակի միակ փողոցով,

և տիսուր ուսանողը հանդիպեց հանկարծ իր հորեղբորք՝

սապատավոր ու սրամիտ մի ծերուկի,

որը մեռել էր վաղուց,
ժառանգելով իր սիրասուն զավակներին
քաղաքային լրագրի համարները բոլոր,
որ խնամքով
հավաքել էր իր ամբողջ կյանքի ընթացքում—
սապատավոր ու սրամիտ ծերունին,
որն անցավ առանց գլուխը շարժելու,
իսկ ուսանողը քար էր կտրել զարմանքից
և երկար ժամանակ շարունակում էր կտրել,
նկատելով, որ իր հորեղբոր սապատը
ամենաին չի ուղղվել գերեզմանում...
Զափազանց զերմ էր հանդիպումը նոյ նահապետի հետ,
որը շվարած կանգնել էր
և մորուքն էր փետում,
և կարճ զրույցից հետո պարզվեց,
որ զրհեղեղը վտանգի տակ է,
որ զրհեղեղի համար նախատեսված ջուրը
լիովին բռութուշ են արել՝
բոստաններ են զրել, ավտոմեքենաներ լվացել,
ցրել են դեսուդին ու հետքն անգամ չկա,
իսկ տապանի մեջ
խոզեր է բուժում ինչ-որ ստահակ,
ինչ-որ տարօրինակ խոզեր,
որոնք ցերեկը հաշում են շան պես,
իսկ գիշերները
խոլում ու լալիս են անմխիթար...
Անսահման հուզիչ էր պահը,
երբ նրանց դեմ ելավ Դոն Կիխոտն՝ անձի,
արդարության զինվորը հին,

մի կերպ քայլում էր
շքանշանների ծանրության տակ կքած,
հին զինվորը, որին
խփել էին քարով, նիզակով ծակծկել,
սպանել էին աշխարհի բոլոր պատերազմներում,
խեղդել էին ջրի մեջ,
թունավորել գաղերով,
ձին սատկել է գաղերից,
իսկ ինքը, փառք աստծո, ողջ է մնացել,
իսկ Սանչո՞ն՝ նա վաղուց լքել է տիրոջը
և նվիրվել է գիտությանը անմնացորդ
և հիմա դիսերտացիա է գրում.
«Դոն Կիխոտը
և ինչպես պայքարել նրա գեմ» թեմայով...
Հին զինվորը...
երկրի երեսին չկա ոչ մի պատ,
որի տակ նրան գնդակահարած Ալինեին...
Առավել հուզիչ էր բաժանումը, և մեծարգո Դոնը
անշափ սրտաշարժված
ինդրեց ուսանողին և ուղեկցին նրա,
որպես հիշատակ այս սքանչելի հանդիպումից,
լուսանկարվել այս աղբանոցների սքանչելի ֆոնին՝
կողք-կողքի՝
միասին
կախաղան հանված,
մեղմ քամուց ճոճվելով...
...Զարմանալի մոլորակ, փողոցից քիչ հեռու
ցախավելներն էին ցցվել՝ բնության զարդը միակ
և ամեն ցախավելին՝

սև սերթուկավոր մի ագռավ,
անշարժ՝ իմաստուն լոռովյան մեջ խորասուզված:
Աննման մոլորակ—ասֆալտած երկնքով,
հատուկենտ աստղեր ծերտի մեջ կորած
և բորդը տված այծի պես
մի ոսկրոտ լուսին
կաղամբ է ուտում օրը ութ անգամ:
Հրաշալի մոլորակ—
բազմահարկ, շքեղ գերեզմանոցներով,
և հանգուցյալներ,
պառկած ոսկեզօծ դագաղների մեջ,
պճնված ընտիր հագուստ-կապուստով,
իսկ աշքերի տակ՝ կապտուկներ անթիվ,
քթերը ջարդված, սմբած փորերով—
նշան այն բանի,
որ մինչ մեռնելը շեն կերել ոչինչ
քոթակից բացի—օրը ութ անգամ...
Սքանչելի մոլորակ—
ուր ամեն ուրբաթ օրվա ավարտին,
գիշերվա ինչ-որ անհայտ մի ժամի,
երբ փողոցներից վերանում են մարդիկ,
երբ վերջին քնատ տրամվայր
շորշորուկ կողերն օրորելով՝
շքանում է խորխորատում միակ փողոցի,
գիշերվա ինչ-որ անհայտ մի ժամի
դանդաղ ու ծանր շնչելով՝
մի տարօրինակ կենդանի,
շգիտես թե որտեղից,
մտնում է մոլորակի միակ փողոցը,

բազմաթիվ ոտքերը քսելով ասֆալտին,
հազիվ շարժելով մարմինը վիթխարի,
այդ անճարակ կենդանին,
որի ազգականները վաղուց վերացել են,
որովհետև
ոչ արագ վազել են իմացել,
ոչ արագ թունավորել,
ոչ կծել,
ոչ խայթել,
ոչ օպերատիվ քծնել
և ոչ էլ մատնել օրվա խաղաղ պահերին...
Իսկ այս մեկը,
իր բազմաթիվ ոտքերը քարշ տալով,
դանդաղ սողում է փողոցում
գիշերվա անհայտ մի ժամի,
անճոռնի մարմինը տանելով մի կերպ...
— Այդ դո՞ւ ես, — հարցրեց ուսանողը տխուրու
— Այդ ես եմ, — ասաց դինոզավրը միակ:
Եվ եկեղեցու զանգերն հնչեցին մեկից,
և փողային նվազախումբը
նվազեց Շոպենի հանրահայտ մեղեղին,
և դուդուկահարները ձգեցին անսահման տխուր
և անսահման սրտամաշ մի երգ,
և երկնքից հանկարծ ծաղիկներ թափվեցին,
և ուսանողը ծնկի իջավ
և ձեռքերը պարզեց նրան,
— Մի վերանա, խնդրում եմ քեզ,
մի վերանա,
խնդրում եմ նորից ու նորից,

մենք միասին կշրջենք
քաղաքային պուրակի ծառերի արանքում,
դու ցայտաղբյուրից չուր կխմես,
դու պաղպաղակ կուտես,
հեռուստացույց կնայես, կխռուս հեռախոսով,
լեզուներ կսովորես, կինո կգնաս,
հետո գարնանային
կամ աշնանային մի գեղեցիկ օր
կհանդիպես մեկ ուրիշ դինոզավրի,
կամուսնանաս, տուն-տեղ կդնես...
Եվ դինոզավրը երկար լուռ մնաց,
տիուր լուռ մնաց և հետո ասաց.
-- Զկա ոչ մեկը, ոչ մեկը չկա,
ես միայնակ եմ և ես էլ չկամ...
Հետո շրջվեց, դանդաղ հեռացավ...
Եվ փողային նվագախումբը գնաց նրա ետևից,
և դուդուկահարները գնացին նրա ետևից,
և հանրահայտ Շոպենը գնաց նրա ետևից,
իսկ ուսանողը նայում էր կարկամած,
տեսնում էր՝ ինչպես է քիշ-քիշ հեռանում,
քիշ-քիշ վերանում
միակ դինոզավրը, վերջին դինոզավրը,
հեռանում դանդաղ, վերանում դանդաղ,
սուզվում էր քիշ-քիշ
սուլիչների մեջ,
փուշիկների մեջ,
թեկնածուական դիսերտացիաների,
առողջ դատողությունների, տեղին դիտողությունների,
բռւսաբանական հոդվածների,

Հավատարմության խոստումների,
կոտրված գրասեղանների,
պրիմուսների, նավթավառների,
նեյտրոնային ռումբերի,
պրեզիդենտների և ամբիոնի,
որը նետել էին ելույթ ունեցողի հետ միասին
և հոետորը,
ակնոցն ուղղելով, դեռ շարունակում էր միտքը
զարգացնել.

«...Բնությունը... ահա...
մի խնդիր... որը կանգնած է... բոլորիս առաջ...»
Եվ մեն մի ագոռավ,
որը ուշադիր լսում էր նրան,
գլուխը շարժեց,
հարգանքով ասաց.
— Իհառոկեե,
Կոռաաա...»

ՀՐԵՇՏԱԿՆԵՐ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՆՔԻՑ



ԱՆՎԵՐՋ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔ

Ես մոտենում եմ քեզ, ինչպես քնառ երեխա,
որը մութ սենյակում
աշքերը փակ դեպի իր անկողինն է գնում՝
ձեռքերն առաջ պարզած։
Պատերդ տաք են, բայց ես չեմ տեսնում քեզ,
որովհետև հիմա
աշքերս՝ թեև բաց, բայց արցոնքով են լցված
և շտեսնող աշքերով, ձեռքերս առաջ պարզած՝
խարիսխելով շրջում եմ քո փողոցներում,
զգուշորեն անցնելով մետաղյա օրորոցների,
եռանիվ հեծանիվների, շորե գնդակների,
փայտե ձիերի արանքով,
և ոտքերիս կատուներ են քսվում,
աստծո թաշկինակները՝ մայրս այդպես էր ասում։
Հետո հարազատ ձայներ փաթաթվեցին դեմքիս,
հարազատ մատներ այտերս էին շոյում,
ծանոթ քայլեր են — հայրս տուն եկավ,

ծանոթ բառեր են — քրոջս ձայնը՝ դաս է սովորում,
 ինչ-որ դուռ է փակվում,
 ինչ-որ լույս է հանգչում...
 Եվ կեսգիշերին արթնացած մի երեխա է լալիօ,
 որ վատ երազ տեսել՝ սիրտը պատովում է վախից,
 իբր դուրս է եկել տնից, խաղացել է մի քիչ
 և հետո վերադարձել է տուն,
 իսկ տանը ոչ ոք չկա,
 խաղով տարված շի նկատել, թե ինչպես է մութն ընկել
արդեն
 և տանը ոչ ոք չկա...

ԿԻՐԱԿԻ

Սենյակային ծաղիկներ՝ շարված կողք-կողքի,
 լուսամուտի գոգին՝ հիվանդ երեխաներ,
 որոնց բակ չեն թողնում խաղալու—
 նայում են դուրս սենյակային ծաղիկները:
 Եվ մինչ ըսիկ-ընիկ ասելով՝
 մեծանում էի լենինականի փողոցներում—
 անվերջ նույնն էին մնում սենյակային ծաղիկները,
 անվերջ նույնն էին մնում:
 Բայց նշված օրերին երբեմն հիվանդանում էի:
 Եվ մայրս
 աթոռների հետ միասին ինձ դնում էր սեղանին
 և հատակն էր լվանում:
 Հետո մայրս անցնում էր սեղանը սրբելուն—
 աթոռները իշնում էին հատակին,
 իսկ ես նույն կարգով

տեղափոխվում էի լուսամուտի գոգ,
որովհետև հատակը դեռ խոնավ էր,
իսկ ես դեռ հիվանդ,
իսկ ես շնայած շատ փոքր էի,
բայց կարդալ գիտեի արդեն և մայրս ջղայնանում էր,
որովհետև դժվար էր
ինձ տեղից-տեղ տանելը «Դոն Կիխոտի» հետ միասին,
իսկ ես հակառակի պես սիրում էի հաստ գրքեր կարդալ,
հատկապես լուսամուտի գոգին,
սենյակային ծաղիկների արանքում,
որովհետև մայրս գործերով ընկած՝
հաճախ մոռանում էր ինձ իշեցնել,
և ես երկար մնում էի ծաղիկների արանքում
և ինձանից ծաղկի հոտ էր գալիս,
իսկ ծաղիկներից՝ ասպիրինի...
Հետո, երկի շատ ժամանակ անցավ,
որովհետև մայրս ծերացել է արդեն,
որովհետև ինքս էլ ծերանում եմ արդեն,
բայց երբեմն (միայն կիրակի օրերին),
երբ ուզում եմ ինչ-որ բան հիշել
և ինչ-որ բան մոռանալ,
զգուշորեն հանում եմ գրքերիս արանքից «Դոն Կիխոտը»,
զգուշորեն մոտեցնում եմ դեմքիս
և հեռու-հեռվից պարզ առնում եմ ծաղիկների հոտը
և պարզ տեսնում եմ հիվանդ երեխային՝
ծաղիկների արանքում նստած,
և զարմանալիորեն ջահել մայրս
արդուկում է
արտասվելու շափ փոքրիկ վերնաշապիկներս...»

Զկարողացա այսօր տնից դուրս գալ,

շէ՞ որ այսօր իմ ծննդյան օրն է:

Ինչ տարօրինակ ու զարմանալի բան, երկար տարիներ

առաջ

եղել է այդպիսի մի օր: Եվ ինչ արած, սիրելի հյուրեր,

դուք արդեն եկել եք, և ես խորապես հուզված եմ,

խորապես ազդված եմ և շփոթված:

Ահա իմ հին լուսանկարները, սիրելի հյուրեր,

բարեկամներ իմ թանկագին, հիացեք ինչքան ուզում եք,

շէ՞ որ ամբողջ օրը մերն է: Ահա այս մեկը՝

ես՝ ընդամենը երեք տարեկան: Աշ կողքիս մայրս է ժամանում,

ետեսում քույրերս են կանգնած և ծիծաղում են,

իսկ այս ուրախ տղամարդը հայրս է:

Իսկ այստեղ ես արդեն մեծ եմ. եկեղեցու պատի տակ:

Աշ կողքին— մայրս է, աղավնին ձեռքին,

ետեսում— քույրերս են կանգնած աղավնիներով,

իսկ այս տղամա՞րդը— հայրս է, առանց աղավնու,

բայց ամբողջովին արյան մեջ կորած:

Իսկ այս մեկում ես շատ ավելի փոքր եմ,

հիվանդ եմ, թույլ ու անօգնական,

աշ կողքիս մայրս է արտասկում, ետեսում հեկեկում են

քույրերս,

իսկ դեմքը մազակալած այս տղամարդը

հայրս է: (Իսկ հիմա բոլորս առողջ ենք, սիրելի հյուրեր, և միայնակ ենք բոլորս, բարեկամներ թանկագին):

Ես այսօր շկարողացա տնից դուրս գալ.

Ինչ-որ մեկը ամուր փակել էր դռները

և պատուհաններն էր մեխել ամուր և վարագուրել,
և ես պառկած եմ սենյակի ուղիղ կենտրոնում իմ հյուգերի
հետ.

աջ կողքիս աղավնիներն են, ետևում ծիծաղը,
իսկ արցունքը
դանդաղ շրջում է սենյակում...

ՀԻՆ ԳՈՐԳ

Եվ մատդ նորից նախշի վրայով սահում է կամաց—
սկզբում աղոտ, հետո պարզորոշ՝
ինչ-որ ձայներ են հասնում շատ հեռվից՝
վայրի աղմուկով գնում-գալիս էր պատուհանիդ տակ
ավտոմեքենան,

նախ մեկն էր, հետո դարձան մի քանի, հետո շատացան,
և փողոցային շների կյանքը թեակոխեց նոր, հիրավի ժանր,
դժվարին էտապ, որի նմանը չէր տեսել բնավ
անցյալ օրերի ոչ մի անտեր-շուն:

Փողոցի շներ՝ մերկ ու անոթի,
իմ ժամացույցներ փոշոտ մանկության,
ձեր աղեկտուր կլանչոցն ահա հասավ ականջիս,
ասել է ժամը յոթն է, և տնից արդեն ելել է ժեշտանչի
Վաղոն,

գործի է գնում, անտրամադիր քացահարելով՝
ճամփին պատահած քնատ շներին, որոնք այնպես էին
սովորել արդեն սապոգին նրա՝
էլ չին շարժվում պառկած տեղերից՝ պատերի տակից,
ուր մանր դողով սեղմված իրար,
անցկացրել էին շարքաշ, անոթի ևս մի գիշեր:

Հետո վայնասուն մի անտանելի՝ ժամը ութն եղավ,
վարսավիրները անցան փողոցով և խիստ գործնական,
վարժ շարժումներով՝ փորձելով ձեր պոշ-ականջի վրա
սրությունն իրենց մկրատ-ածելու:

Եվ մատդ նորից նախշի վրայով սահում է կամաց—
և շունչդ պահած սպասում ես լուռ՝ կողքի սենյակից
ուր որ է մայրդ կկանչի. վեր կաց, այ տղա, ուշ է, ժամը
տասն եղավ,

և ի հաստատումն մորդ խոսքերի՝

հայհոյանք, հաշոց խառնվեցին իրար.

մսագործ Ավոն, բնույթով բարի, բայց տեսքը դաժան,
բոլորի կողմից շիրված, նաև անտուն շներից,
և կրկնվում էր նույն պատմությունը ամեն առավոտ,
ճիշտ ժամը տասին մսի հոտ առած շներն հաշում էին,
և հայհոյում էր Ավոն կատաղի

շներից քիշ-քիշ անցում անելով նախ կնոշն,

ապա զոքանշին, հետո հարևաններին, հետո՝ ընդհանուր,
հետո մարում էին աղմուկ ու քայլեր,

և մատդ նորից նախշի վրայով սահում է կամաց.

ինչ-որ քաղաքի, ինչ-որ մի բակում հին գորգ է կախված,
և մի շահել կին

երեխան գրկին բարի հայացքով նայում էր, լոռում,
գուցե հասկացավ, որ տարիները գնում են արագ,

և տարիքն առած օտարականն այս, ի՞նչ իմանաս, թե
ինչեր է հիշել

այս հին գորգի դեմ, որ խոնավացան աշքերը,

նույնիսկ արցունք հայտնվեց՝ նախ մեկը,

հետո դարձան մի քանի,

հետո շատացան...

ԱՅՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Այն տարիներին անձրևներն ավելի շուտ-շուտ էին գալիս,
և կինոյի հերթերն ավելի երկար էին:

Դրանք այն տարիներն էին,

երբ ծխում էինք ոչ թե ինչ-որ բանի պատճառով,
ասենք՝ ուրախանալիս, կամ տխրելիս,

այլ ծխում էինք, որպեսզի մի քիչ ուրախանալինք,
իսկ տխրում էին, սովորաբար, մեր ծնողները:

Ես հիմա շգիտեմ՝

սիրում եմ, թե չեմ սիրում այդ տարիները,

երբ տղամարդկային ամենակարեռը զբաղմունքը
մարմնի ամենատարբեր մասերի վրա դաշվածքներ անելն էր,
և հանրային բաղնիքները

մեր առաջին գեղանկարչական ցուցահանդեսներն էին,

որտեղ կտավները կախված էին ոչ թե պատերից,

այլ ազատորեն շրջում էին

աղմուկով ու գոլորշով լցված սրահում,

և մենք պտտվում էինք թաց ու օճառապատ մարմինների

արանգում՝

անսրող հիացմունքով զննելով վիշապօձերով, ծովահարսերով՝
դաշունահար սրտերով, կարապներով ու հրեշտակներով

պատված

կտավները լպրծուն... Այն տարիները,

երբ հարազատ քրոջ հետ

Գողոցում շրջելը հերոսություն էր աներեակայելի,
հավանական հետեանքները՝ խայտառակ ծեծն էր ու
կապտուկները

աշքերի տակ:

Բայց ես լավ հիշում եմ,
որ անձրեները ավելի շուտ-շուտ էին գալիս,
և շենքերի շքամուտքերում հավաքված՝
սիրահարվում էինք առավոտից իրիկուն,
որովհետև դեռևս հեռուստացույց չկար
և ինչքան ասես ժամանակ ունեինք սիրահարվելու
Բայց երբեմն անձրեները դադարում էին,
և դասերը սերտած, մաքուր լվացված,
կոկիկ սանրված աղջիկները
դուրս էին գալիս պատշգամբ,
և մենք սիրահարվում էինք ավելի ուժգին,
և հետո նրանց անուններն էինք դաշում մեր մարմինների
վրա,

որովհետև դեռևս հեռուստացույց չկար,
իսկ կինոյի հերթերը շափազանց երկար էին,
և մենք օրնիբուն
մեր դաշած թևերը ցուցադրաբար բաց արած՝
կանգնում էինք պատշգամբների տակ,
ծխում էինք, որպեսզի ուրախանայինք
և նայում էինք մեր սիրած աղջիկներին,
որոնք կարդում էին
տառասխալներով լցված իրենց անունները մեր թևերի վրա,
քշիշում էին իրար ականջի, ծիծաղում
և մի օր էլ հանկարծ անհետանում պատշգամբից,
և մենք երկար մորմոքվում էինք և կորստի տիրոջը՝

մեր անշափահաս տարաբախտի թևերն ընկած,
որպես մխիթարություն ամենավերին՝ տանում էինք կինո
և հազարերորդ անգամ նայում «Առաջին սիրո երգը»,
մինչ մեր ընկերը

բարձրածայն ողբում էր՝ մութ դահլիճում նստած...

իսկ մենք լալիս էինք բոլորս միասին,
որովհետև գիտեինք՝

գալու է նաև մեր օրը, անխուսափելիորեն գալու է,
պատշգամբից տանելու են նաև մեր սիրածներին,
որոնց ամիսներ հետո տեսնելու էինք փողոցում՝
կլորացած կորերը հաղթական ցցած,

ինչ-որ տարիքավոր տղամարդկանց հետ թև-թևի շրջելիս...

Հետո պատշգամբները դատարկվեցին բոլորովին:

Դատարկված սրտերով, դաշված թևերով երկար կանգնեցինք
դատարկ պատշգամբների տակ,

ծխում էինք ու չէինք կարողանում ուրախանալ,
հետո գլխիկոր հեռացանք՝ առանց իրար նայելու

իսկ հետո անձրևները դանդաղեցին հանկարծ
և ապա կտրվեցին անվերադարձ:

QUIDNAM FUTURUM EST?

Գուցե մի օր կհիշեմ, թե ես
որտեղ եմ տեսել այս նկարը հին՝
Հարթ, սև մազերը գորշ գլխաշորով կոկիկ փաթաթած,
ձեռքերը խաշած կրծքերի վրա, շարված էին կանայք
դարպասների դեմ և բաց աշքերով
անթարթ նայում էին իրար ու հեռու։
Օրվա ավարտն էր՝ մթի գոլորշին ժորում էր կամաց
դուդուկի թանձր մեղեգու նման, սկար տների
պատերից փափուկ և խտանալով նախ գետնի վրա,
քիշ-քիշ ենում էր, տարածվում վերև։
Օրվա ավարտն էր՝ վերադարձի ժամ, և հեռվում ահա,
փողոցի ծայրից լսվեցին ծանր քայլերի ձայներ,
ապա երեաց խումբը միաձուլ, մեկ մարմին դարձած
խումբը օրորվող, հենված ուս-ուսի, իրարից կառչած,
ծալվող ոտքերը շարժելով մի կերպ,
լարված հայացքով ու կենտրոնացած, փաթ ընկնող լեզու,
շշուկներ խեղդված. Հակոբին պահեք, ուստեն վատացավ,
դրոշակները պինդ բռնեք տղերք...: Եվ դրոշները՝
Ենովքը ահա, գայթակղության միրգը ճզմելիս,
և ծխի նման դուրս է սողոսկում դալուկ սատանան...
Էլի դրոշներ, պատկերներ էլի՝ Դավիթ Մարգարե, Հովսեփ ու
Աբել...

¹ Խնլ է լինելու հետո (լատ.):

...Տուն էին դառնում հաղթության դաշտից
հոռվմեական զորավարները,
և Տիգրան Մեծի հզոր բանակն էր
Հեռու-հեռավոր անապատների փոշին ուսերին՝
հաղթած ու հոգնած վերադառնում ետ՝ հողը հայրենի:
Եվ փարավոնը՝ աշ ձեռքը պարզած,
ուղիղ-ձիգ կանգնած իր մարտակառքում՝
փոշու ամպերը երկինք հանելով
սուրում էր՝ ցնծության ճիշ ու աղմուկին անհաղորդ, հպարտ,
ծնծղաների և շեփորի զվարթ կանչերի միջով...
Հետո ժաղիկներ, նվագ, երգ ու պար և գինու հեղեղ:
Հանուն Սուրբ Կույսի մարտի դուրս ելած
երկաթակուր ու հպարտ ասպետն էր զինված գլխովին,
գունատ ժպիտով արշավում դանդաղ՝ հրեշտակներ էին
թեածում օդում, արևն էր՝ ինչպես ոսկեզօծ պսակ, նշան
հաղթության,
շողողում նրա գլխավերենում...

Միգուցե մի օր կհիշեմ, թե ես որտեղ եմ տեսել այս
նկարը հին՝
շկային ծնծղաներ ու արև շկար, շկային ժաղիկներ,
և օրորվելով խումբն էր մոտենում,
և խմբից ահա զատվեց մի մարմին՝ ձեռքին դրոշակ,
կանգնեց մի վայրկյան ու հետո փլվեց իր դարպասի
և ձեռքերը կրծքին խաշած իր կնոջ ոտքերի առաջ...
Եվ կինը անխոս կռացավ վրան, վարժ շաբժումներով
դարպասից արագ ներս քաշեց մարմինն իր փարավոնի,
որը քթի տակ մրթմրթում էր, թե՝ էս մեկն էլ խմենք
մեր նամուսի ու թասիրի կենաց...

Եսկ երբ խավարում խումբը վերացավ,
երբ տուն քարշ տվին ասպետին վերջին,
նկարի մեջ պարզ ագռավն երեաց՝ սև սերթուկավոր,
հազար մի թեթև, նայեց աշքերիս և հրաշալի լատիներենով
հարցրեց հանկարծ. «Quidnam futurum est?...
Տարակուսանքով լոեցի մի պահ,
հետո ուսերս վերև քաշեցի՝ այսինքն, եղբայր,
ես ինչ իմանամ, առացի նրան,
ես ինչ իմանամ:

ԱՆՎԵՐՁ ՎԵՐԱԴԱՐՁ

Ծերունին խորամանկ ժպտաց և թաքցրեց դեմքը
շորշորուկ ուսերի արանքում։

Աստված իմ, բայց չէ՞ որ դու նրան ճանաշում ես,
ծերունուն, որը ծնվել է այս գիշաւ արձանների հետ,
ծերունուն, որն ապրում է ահա այս բարձրադիր այգում,
ծերունուն, որին ամեն գարնան սկզբի

ներկում են վառ կանաչ գույնով,
աթոռների, ցանկապատների և կարուսելների փայտե ձիերի,
փայտե արշերի, փայտե փղերի և մյուս
շափազանց անհրաժեշտ և շափազանց փայտե
և շափազանց կարևոր մանրամասների հետ միասին,
ծերունուն, որը խորամանկ ժպտաց
և գուկիզ թաքցրեց շորշորուկ ուսերի արանքում։

Աստված իմ, բայց չէ՞ որ դու ամեն ձմեռ
աշխարհի բոլոր ծայրերից գալիս ես այս հեռու ընկած

քաղաքը

և տեղ ես հասնում ճիշտ այն պահին,
երբ բոլոր փողոցներից

թաղման տիուր թափորներ են ելնում քո դեմ
և բոլոր դագաղներից խորամանկ ժպտում է
հենց նույն այդ ծերունին և դեմքը թաքցնում
ծաղիկների, էժանագին օդը կոլոնների և հատկապես՝
շորշորուկ ուսերի արանքում։

Բայց քո աշքերում հիմա չկա ոչինչ արցունքից բացի,
որովհետև հեռու-հեռվից եկել և կանգնել ես քո քաղաքի
շեմին,
և թակում ես նրա դարպասները, թակում ես ուժգին ու
ուժգին,
բայց ոչ ոք չի լսում քեզ, բայց ոչ ոք չի ելնում քո զեմ,
և գիպսե արձաններն են խորամանկ ժպտում
և թաքցնում դեմքերը
շորշորուկ ուսերի արանքում:

ԱՌԱՋԻՆ ՍԵՐԸ

Առաջին սերը, որը թաքնվում է ստվերների մեջ,
քաղաքում, ուր քեզ ոչ ոք չի հիշում,
ուր ոչ ոք չի նայում քեզ,
բայց ասում են առանց նայելու՝ տիսուր է,
և ավելի է տասուր, երբ շրջում ես հայացքդ
և զըրընգ-զընգ-զըրընգ
ղողանջում են քաղաքի բոլոր եկեղեցիները,
և պատերի տակ մորթվող ճիրմակ աղավնիների հայացքում
արյունաքամ է լինում առաջին սերդ,
որը թաքնվում է ստվերների մեջ,
փափուկ փետուրները քսելով սև ու հարթ պատերի
կույր ու սգավոր աշքերին...
իսկ նրանք չեն նայում քեզ,
բայց ասում են առանց նայելու՝ իզուր է,
բայց ավելի է իզուր, երբ շրջում ես հայացքդ
և զլխիվայր նետվում տարիների զրհորի մեջ,

և լացն ու հեկեկոցը ծանր հոգոցի պես
 պոկվում են մարմնիցդ և կնճիռներն են պոկվում մարմնիցդ,
 և մանկությունը լցվում է աշքերիցդ ներս,
 և սեղմում է սիրտդ... սեղմում է սիրտդ...
 Եվ խեղդվողի պես զարմանքից ու հիացմունքից
 բացում ես բերանդ ճշալու համար,
 որովհետև տեսնում ես նրան... նրան ...խորքում,
 ամենահեռվում, ամենավերջում, ստվերների մեջ՝
 ճերմակ աղավնին— սերը առաջին,
 որը մեկիկ-մեկիկ պոկում է իր փափուկ փետուրները,
 մեկիկ-մեկիկ բացում է իր արնածոր վերքերը,
 և խեղդվողի պես ցավից ու կսկիծից բացում ես բերանդ
 ճշալու համար և... զըրընգ-զըրնգ-զըրընգ
 դողանչում են քաղաքի բոլոր եկեղեցիները...

ԿԱՐՄԻՐ ՍՐՅՈՒՆԸ, ՈՐ ՄԱՐՄԻՆ ԶՈՒՆԵՐ

Փողոցում դարձյալ գարուն է, բայց նոր են հայտնվել
 տերևները:
 Եվ սկ քարերով մի եկեղեցի, որ անշափ հոգնել է ապրելուց,
 և սկ շորերի մեջ փաթաթված ծեր կանայք,
 որ բոլորովին շեն ուզում մեռնել,
 և մի տարեց տղամարդ, որ աղիողորմ լալիս է.
 այդ ինչպես պատահեց, միայն մի վայրկյան,
 ընդամենը մի վայրկյան բաց թողեց մոր ձեռքը,
 շրջվեց նայելու աղիողորմ ողբացող գառանը,
 որն այնքան գեղեցիկ էր, կարմիր ժապավենը
 ճակատին խաչ արած՝ միայն մի վայրկյան

բաց թողեց մոր ձեռքը և ահա մնաց մենակ՝
սև շալերով փաթաթված ծեր կանանց բազմության մեջ,
որ անտարբեր նայում են աղիողորմ արտասվող
տարեց տղամարդուն և խաշակնքում են արագ-արագ՝
տեր, փրկյա մեզ ի շարե...
Եվ ինչ արագությամբ մութն ընկավ,
և դու— դեմքդ արցունքների մեջ կորած,
քսվելով պատերին՝ մոլորված շրջում ես ճերմակ մոմերի մեջ
և խորհրդավոր փսփսոցների, անկյանք դիմակների և
ճերմակ ձեռքերի,
որ բռնած տանում են վառվող մոմերը...
Եվ (այդ ինչպես պատահեց) դու տեսար հանկարծ—
կարմիր ժապավենը ընկել էր հեռու, կարմիր արյունը,
որ մարմին շուներ, զարմացած ու անմեղ աշքերը
որ այլևս չեն փակվում, և մարմինը, որ գնում է
առանց աղիողորմ ողբի, և աղիողորմ ողբը,
որը պտտվում է եկեղեցու շուրջ, մորդ ձեռքից բռնած
(միայն
մի վայրկյան, ընդամենը մի վայրկյան), և դու, որ վազում ես
նրանց ետևից և ոտքերդ խրվում են հողի մեջ,
և անցնող օրերը քաշում են շորերիցդ
և անցնող տարիները, որ քամու պես խփվում են դեմքիդ
և հերթով փակում են աշքերը զարմացած ու անմեղ մոմերի...
)

ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Պատերազմի մասին հնարավոր չէ պատմել—
ասում էր Հայրս
և զղայնացած գնում-գալիս էր սենյակում,
իսկ ես տեսրակը ձեռքիս գնում-գալիս էի
նրա ետևից, որովհետև ուսուցիչն էր հանձնարարել
շարադրություն գրել պատերազմի մասին։
Իսկ ուրիշ էլ ո՞վ պիտի ինձ պատմեր պատերազմի մասին,
եթե ոչ Հայրս, որի մեղալները թաքուն
կպցնում կրծքիս
և իշնում էի բակ և հավասարը-հավասարի պես շրջում
մեղալակիր ընկերներիս հետ միասին,
Պատերազմի մասի՞ն,
հնարավոր չէ, ասում էր Հայրս, ոչ մի կերպ հնարավոր չէ
և զղայնացած գնում-գալիս էր՝
չնկատելով, թե ինչպես է ծխախոտ-ծխախոտի ետևից
կպցնում
և նորից ճմլում մոխրամանի մեջ,
իսկ ես տեսրակը ձեռքիս գնում-գալիս էի
նրա ետևից,
թախանձելով անվերջ։
Հետո մայրս միացավ մեր խմբին,
հետո քույրերս,
և թախանձում էինք

և գնում-գալիս էինք նրա ետևից,
և հետո հայրս հսնկարծ կանգ առավ՝ սենյակի կենտրոնում,
դողացող ձեռքով ճմլեց վերջին ծխախոտը մոխրամանի մեջ,
հետո հանեց պիչակը
և խնամքով կախ տվեց աթոռի թիկնակին...
Մենք զարմացած նրան էինք նայում,
իսկ նա խոնավ հայացքով նայում էր մեզ,
իսկ դողդողացող մատները վերնաշապիկի կոճակներն էին
քանդում,
իսկ երբ անճարակ շարժումներով
վերնաշապիկը մի կերպ հանեց՝
մի տեսակ խեղճացած անշարժացավ
վերնաշապիկը ձեռքի մեջ բռնած,
և մարմինը, մարմինը չգիտեր ինչպես թաքցներ,
մարմինը՝
ամբողջովին սպիների մեջ կորած...
...Մայրս արդեն լաց էր լինում անկյունում կծկված,
իսկ մենք փաթաթվել էինք ամբողջովին սպիներով պատված
մեր հորը,
իսկ մենք լալիս ու ծիծաղում էինք սրտապատառ,
կարծես հենց նոր վերջացավ պատերազմի վերջին օրը,
կարծես հենց նոր բացվեց դուռը,
հենց նոր տեսանք պատերազմից տուն դարձած մեր հորը
և փաթաթվել
լալիս ու ծիծաղում էինք սրտապատառ... .

ՇՐՋԱՆԱԿ ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ՀԱՄԱՐ

Փայտյա հասարակ շրջանակի մեջ պարզ երևում է
հայացքդ մարած, գլուխդ թեքած աչ ուսիդ վրա,
ցանցառ մորուքդ՝ արդեն ճերմակող,
մագաղաթագույն դեմքդ անլվա։ Խելառ Սարգիսը,
խելառ Սարգիսը— և ոտարոբիկ երեխաների բազմությունն
ահա

ճիշ ու աղմուկով վազեց փողոցով—
սակայն տիսուր է հայացքդ մարած, ոչ ոք չգիտի՝
երրորդ գիշերն է, որ դու չես քնում,
երրորդ գիշերն է՝ սատկել է կատուդ՝ ընկերդ միակ,
և գաղտագողի թաղել ես նրան
քաղաքային մեծ այգու անկյունում,
երրորդ գիշերն է, որ դու զրում ես գերեզմանն առաւ,
փխրեցնում հողը, մաքրում քարերից, մոլախոտերից
և կողքին նստած սպասում ես լուռ, թե արդյոք երբ է
դուրս գալու ժիլը քո կատվածառի...
Հուսով նայում էիր երկնքին խավար,

և կրկնում էին շուրթերդ ակամա՝
եթե գարունը անձրկոտ լինի,
եթե ամառը լինի արևոտ,
եթե աշունը բարեսիրտ լինի
եթե ձմռանը առատ ձյուն տեղա...
Խելառ Սարգիսը, խելառ Սարգիսը— և ոտարոբիկ
երեխաների բազմությունն ահա անցավ փողոցով,
և գիշերն իշավ՝ երկու ձեռքերով հենվեց տաք հողին,

իսկ դու շես հոգնել՝ թեև հայացքդ մարած է լրիվ,
նստել ես ինչ-որ դարպասի կողքի,
գլուխդ թեքած աջ ուսիդ վրա...
Ու հանկարծ տեսար՝ ինչ-որ տեղ մութը ավելի էր մութ,
և այդ մութի մեջ երկու կանաչ կետ, լուսավոր կանաչ,
մերթ մոտենում էին ու մերթ հեռանում,
և քո մարմինը ձգվեց, վեր ելավ,
և սրտապատառ վազում էիր արդեն քաղաքային մեծ
այգու ուղղությամբ, և հենց դռան մոտ քեզ դիմավորեց
Կապույտ Դանուբի ալիքն առաջին,
և թաքնվելով մթնում խտացած ստվերների մեջ, առաջ
գնացիր.

Թփերի միջից երևում էին պարզ վալսի ներդաշնակ
տակտով զրունող քայլքը զույգերի՝
ինչ հրաշալի տեսարան էր դա—այրեր պատվարժան,
և զինվորական նվագախմբի գործիքների պես
պսպղում էին մաֆուր սափրված այտերը նրանց,
իսկ ճարմանդները, կոճակներն հապա...
Եվ տիկնայք փարթամ, լիքը կրծքերով, աղամանդների,
ոսկյա—
արծաթյա գոտիների ու մատանիների, ժանյակ—շղթայի,
ապարանջանի, ականջօղերի սահուն-շարժական մի
ցուցահանդես՝
ինչ հրաշալի տեսարան էր դա, անցնում էին հպարտ՝
տատեր-պապերի, աղջիկ-հարսների և փեսաների իրար
սեղմված
շարքերն համերաշխ, բոլորը խմբով, բոլորն ուս-ուսի,
միայն դու մենակ, ցանցառ մորուքով,
գլուխդ թեքած աջ ուսիդ վրա, մարած հայացքով,

թփերի միջից նայում էիր նրանց, և ձեռքդ ակամա
 թաց գերեզմանն էր շոյում քո միակ, մեռած ընկերոջ,
 և կրկնում էին շուրթերդ ակամա.
 եթե գարունը անձրեստ լինի,
 եթե ամառը լինի արեստ,
 եթե աշունը բարեսիրտ լինի,
 եթե ձմռանը առատ ձյուն տեղա...

ԽՍԿ ՊԱՏԿԵՐԸ ՄՆՈՒՄ Է ՆՈՒՅՆԸ

Եվ ոմն Ձորջո դե Կիրիկո
 ուզեց մտնել անմահների շարքը,
 և դու այդ մասին իմացար բավականին ուշ,
 օ, ինչպիսի տիրություն, ինչպիսի տիրություն:
 Իսկ պատկերը մնում է նույնը՝ միայն շնչին
Փոփոխություններ:
 Գավառական փոքրիկ քաղաքում այսօր մանր ձյուն է գալիս,
 թերթի կրպակները լիքն են անիմանալի նորություններով՝
 այնտեղ ամսագրերն են դեղնում գույնզգույն պատկերներով,
 իսկ վաճառողը հպարտ է իր անուրանալի գոյությամբ:
 Ներեցեք, բայց չէ՞ որ այս ամենը ճիշտ է,
 ճիշտ է ամեն օր, ճիշտ է ամեն տեղ,
 և երբ քայլում ես փողոցով ներքե
 և հրապարակն է բացվում քո դիմաց,
 դու մտածում ես՝ ահա տիրություն
 և դու այդ մասին իմացար շատ ուշ:
 Գավառական փոքրիկ քաղաքում
 այսօր մանր ձյուն է գալիս,

իսկ դու թերթում ես գրքի մյուս էջը
և ականջի ծայրով լսում,
թե ինչպես լուսամուտի տակ
մի փոքրիկ տղա

սուլում է անհավատալիորեն ուրախ մի երգ:
Եվ հետո պատկերը մթնում է կամաց-կամաց,
և դու գիրքը ծալում—դնում ես մի կողմ
և գլուխ առնում ափերիդ մեջ
և մտածում երկար,
շատ երկար...

ԵՐԵՔ ԶՈՒՌՆԱՁԻ

Կիրակին գոլ էր տվել վարսավիրանոցի դռան մոտ
ու չէր շարժվում տեղից։
Մաքուր սափրված,
երեսները ալյուրոտ (վարսավիրը չէր խնայել փոշին),
մնացած ամեն ինչը սև՝
կոստյումները սև, ալք-հոնքերը սև,
դռան մոտ շարված էին երեքով,
ծխում ու նայում էին իրար՝ երեսները ալյուրոտ։
Պայծառ շողում էր արևը,
և առավոտյան բաղնիք գնացած պառավների
կարմրաթուշ ու մաքրամաքուր խումբն էր վերադառնում
հանդիսավոր,
ճխտած շորերով վիթխարի զամբյուղները
մանրիկ քայլքի տակտով օրորելով։
ծխում ու նայում էին նրանց՝ երեք ալյուրոտ գումաշի,

անտարբեր նայում էին նրանց
ու նվագում էին մտովի Շոպենի հայտնի մեղեղին,
հայտնի, բայց և ներելի շեղումով...
Եվ հետո շհասկացան, թե ինչպես,
առանց մի բառ անգամ փոխանակելու,
առանց իրար երեսի նայելու քայլեցին պառավների ետևից
մաքուր սափրված, ալյուրուա երեսներով երեք զուռնաշի.
մտովի ձգելով տիսուր մեղեղին,
մտովի՝ բայց լիովին տարված իրենց գործով,
մտովի՝ բայց առանց գլուխ պահելու,
և կիրակին, որ գու էր տվել ու լճացել էր
վարսավիրանոցի դռան առաջ,
դանդաղ ու ծույլ-ծույլ շարժվեց տեղից:
Եվ աղավնիների, որոնք ինչ-որ մի կտուրից նետվելով
երկինք
լուցկու ճերմակ բոցի նման բռնկվում էին օդի մեջ,
և ագռավների, որոնք բոցի մեջ մոխրացած, սևացած
աղավնիներն են նախկին,
և մեքենաների աղմուկի,
երեխաների զվարթածայն ճիշ ու ծիծաղի միջով,
բանից անտեղյակ քայլում էին պառավները հանդիսավոր,
բանից անտեղյակ քայլում էին զուռնաշիները երեք,
և քրտինքը ծորում էր մաքուր սափրված դեմքերի վրայով,
թուխ առուներ գծելով նրանց ալյուրոտ թշերին...
Իսկ երբ պառավներն անհետացան բակերի և դարպասների
որոգայթում,
կիսամութի մեջ միայնակ, մոլորված կանգնեցին նրանք,
մոլորված կանգնեցին նրանք ու նայեցին իրար հանկարծ՝
սևացած երեսներով, և կոստյումներով,

աշք-հոնքերով սև—

այս ե՞րբ մոխրացավ կիրակին՝

լուցկու պես բռնկվեց ու հանգավ,

այս ե՞րբ մթնեց օրը...

և այս ի՞նչ փողոց է՝ անծանոթ բոլորովին...

Իսկ երբ փակ դարպասի ետևից մեկը քար շպրտեց՝

կռավելով վախեցած երեք ագռավ թռան երկինք

և թեսերը դանդաղ շարժելով

լուծվեցին խավարում մթության...

ԻՍԿ ԵՐԲ ԶՅՈՒՆ ԵԿԱՎ

Իմաստուն խոսելու կարոտը քեզ խոցեց անվերադարձ
և դու քայլեցիր կռացած:

Գավառական փոքրիկ քաղաքը քեզ ոչինչ չսովորեցրեց,
նա իր թարմ կաթն էր մատուցում ճշտապահորեն՝
առավոտյան և երեկոյան:

Իսկ երբ ձյուն եկավ, դու բոլորովին սենտիմենտալ դարձար,
Դեռ մանկուց հակում կար քո մեջ

անբացատրելի տիրությունների, թախծի սահուն ելևէջների
և անկյունային գոյության հրաշքների նկատմամբ:

Իսկ երբ ձյուն եկավ, դու ուզեցիր հիշել անցյալդ
գոնե մի ծխախոտի համար,

այդ ամենը դու ուզեցիր՝ հենց երբ ձյուն եկավ:

Գավառական փոքրիկ քաղաքը

ծաղկազարդ սոնետի է նման,

իզուր բաների համար այնտեղ երկար շեն ծափահարում,
այլ ժպտում են քթի տակ

և թատրոն են գնում հսկայական ընտանիքներով:
Եվ գրավաճառը հին շլապան գլխին ուղիղ գրած
հրավիրում է քեզ խոսելու դեսից-դենից:
Իսկ դու լուռ սեղմում ես նրա ձեռքը,
կորած հիացմունքով
համեմատում իշնող ձյունը կաթի հետ
և հրաշքով փրկվելով գրավաճառի կենսուրախությունից,
նետվում ես փողոց և քայլում կորացած
ծաղկազարդ սոնետի տողերի երկայնքով:

ԵՐԵԽԱՆ, ՈՐ ԱՐԹՆԱՑԵԼ ՈՒ ԼԱԼԻՍ ԷՐ

Մարմանդ անձրև էր մաղում թոշի թաղում

և օրը երեքշաբթի էր:

Գորշ մութուլուսի միջով գալիս ու տեղ չէր հասնում
Յոթվերքի զողանքը հեռավոր. գալիս էր ու խառնվում
արթնացած երեխայի լացին, դարպասների ճռնշոցին
ու հազին տղամարդկանց, որ ծանր քայլերով ելնում էին
տներից

ու հանդիսավոր, դանդաղ մարում անձրևի մեջ միալար:
Իսկ երեխան լալիս էր ու անձրևը չէր կտրվում:
Թոշի թաղում երեքշաբթի էր՝ անթիվ, անժամանակ ու
անհույս:

Մի պառավ պիտի մեռներ՝ ծոռներով, թոռներով
շրջապատված,

և իր գործն իմացող տան շունը վայում էր բարեխղճորեն,
վայում էր առանց հաճույքի, հալից ընկել էր արդեն,
մի շաբաթից ավելի էր

ինչ պառավը մեռնում էր ու չէր մեռնում,
և շունը վայում էր, ու անձրես չէր կտրվում,
իսկ երեխան լալիս էր, ու պառավը չէր մեռնում—
իր մեծ որդուն էր սպասում, որին հեռագիր էին տվել,
հեռավոր մի քաղաք, մի քանի օրվա ճանապարհով,
որտեղ հիմա ձյուն է գալիս և գորշ մութուկուսի միջով
գնում ու տեղ չի հասնում
Յոթվերքի զողանջը հեռավոր, լացը երեխայի,
դարպասների ճոնչոցն ու հազը տղամարդկանց...
...Եվ օրերը, որ անձրեսի նման մաղում են միալար,
անլերջ շարանը երեքշաբթիների, և կյանքը,
որ անցնում է գորշ մութուկուսի միջով,
և ծերունին—երեխան, հիշու՞մ ես, որ արթնացել ու լալիս էր
Թոշի թաղում, երբ օրը երեքշաբթի էր
և մարմանդ անձրես էր մաղում...

ՀՐԱԺԵՇԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԻԿԻՄ

Գլխիկոր վազում էի քո ետևից,
իսկ դու շատ արագ էիր քայլում,
թնկթնկում էի,
իսկ դու չէիր լսում.
ծանրացել էր լսողությունդ պատերազմից:
Տարիներն անցնում էին աննկատ
և կարծես թե ոչինչ չէր փոխվում—
դու դարձյալ արագ էիր քայլում,
վազում,
չէի հասնում քո ետևից:)
Եվ հիմա գնում ենք նույն կարգով,
առջեկից դու,
իսկ ես՝ գլխիկոր ետևից,
դու հիմա շատ դանդաղ ես գնում,
քարացել է սիրտս զարմանքից,
էլ ինչու եմ ետ մնում գլխիկոր,
լալիս ու կանչում եմ քեզ նորից...

Եկ երբ անցնում էի փողոցով,
 Հիշեցի զարմանալիորեն պարզ
 Նոր տարվա վաղուց անցած մի գիշեր:
 Սա բոլորովին էլ սովորական պատմություն չէ
 և բավականին դժվար է վերակենդանացնելը,
 բայց այս անգամ, չգիտես ինչու, շափազանց հեշտ ստացվեց.
 պայծառ վառվեցին հսկայական տան բոլոր լույսերը,
 և պատերը դարձան թափանցիկ,
 ահա հայրս զալիս է՝ հսկայական եղենին քարշ տալով
 (ես մտնում եմ մի անկյուն, որպեսզի ինձ չնկատի,
 թե չէ զարմացած կհարցնի, թե ինչու եմ այսպես ծերացել)
 ահա նա մտնում է բակի դռնով
 (ես բարձրանում եմ ոտքիս մատներին
 և լուսամուտից նայում եմ ներս),
 քույրերս սոսկալի ուրախացած թոշկոտում են,
 ես էլ եմ թոշկոտում՝ մի փոքրիկ, շատ փոքրիկ տղա,
 մյուս սենյակից դուրս է գալիս մայրս, նա վերցնում է
 դեռևս պատերազմից շատ առաջ գնած հորս վերարկուն
 և գլխարկը, որն արդեն
 ետպատերազմյան ծագում ուներ,
 և հետո ինչ-որ բաներ է ասում, որոնք վաղուց մոռացել եմ:
 Սեղանի վրա օղու շշեր էին՝ ջրով լցված
 և լիմոնադի շշեր՝ ջրով լցված,
 շշերը դատարկված էին պատերազմից առաջ
 և միայն ջուրը ետպատերազմյան ծագում ուներ:
 Հետո մենք եղենին ամրացնում ենք հատակին,
 իսկ ես քարշ եմ տալիս խաղալիքների արկդը

և պետք է, որ սոսկալի աղմուկ լինի
(ականջս մոտեցնում եմ լուսամուտի ապակուն,
բայց ոչ մի ձայն չի հասնում ինձ):

Մայրս բարկանում է քույրերիս վրա,
իսկ հայրս ինչ-որ բաներ է որոնում գրաններում,
հետո ես բարձրանում եմ աթոռին,
եղնու ճյուղերին շարում խաղալիքները.

Թղթե շոկոլադներ, թղթե խնձորներ, թղթե մանդարիններ,
թղթե կոնֆետներ և մի ձմեռ պապիկ, շքեղ ու հրաշալի,
որը գնված էր պատերազմից առաջ,
իսկ մնացյալ թուղթը ետպատերազմյան ծագում ուներ:
(Քիչ հետո ես պիտի ընկնեմ աթոռից,
ես դա շատ լավ եմ հիշում՝
ճակատիս սպին մինչև հիմա կա):

Եվ ահա կունում եմ խաղալիք վերցնելու,
և ահա քույրերս ճշում են վախից
և մայրս վրա է վազում իմ լացի ձայնից
և հայրս, որ կարկամած նայում է իր վիրավոր ձեռքին,
վիրավոր ձեռքին,
որով շկարողացավ ինձ պահել, երբ ընկնում էի,
վիրավոր ձեռքին, որը դեռ նվում ու ցավում է

վիրակապերի մեջ,
վիրակապերը՝ նվերը միակ, որ հայրս բերել է պատերազմի
դաշտից

և հիմա փաթաթում էին ճակատիս, որ արյունը դադարի...
Եվ հետո հանկարծ լույսերը հանգում են,
և հսկայական տոնը թաղվում է մթության մեջ...
Հետո ես շարունակեցի քայլել փողոցով,

շփելով ճակատիս սպին, որը խճճվել է կնճիռների մեջ,
զարմանալիորեն պարզ հասկանալով,
որ
ուր որ է բարձրաձայն կհեկեկամ:

ԻՍԿ ՀԱՅԱՑՔԸ ՄԻՇՏ ՆՈՒՑՆՆ Է ՄՆՈՒՄ

Եվ մարդկանց միայն դեմքերն են փոխվում,
իսկ հայացքը՝ երբեք:
Մանրամասները փոքր-ինչ խախտված
ահա վերականգնում եմ ևս իմ մեջ:
Եվ ամեն օր, երեկոյան ժամը քսանն անց երեսունին
մայրս կանգնում էր կողքիս
և ձեռքերը կրծքին խաշած անխոս նայում էր ինձ,
ասել է թե արդեն՝ պետք է տուն գնալ:
Իսկ հենց նույն այդ ժամին
հնչում էր զինվորական նվազախումբը
և մարդու տալու աղջիկներին շուրջկալ արած
ծնողական զույգերն էին աշալուրը շրջում փողոցներով
աներեռույթ ցանցերը միշտ պատրաստ պահած:
Վառվում են լույսերը, և ես թեքվում եմ սեղանին,
իսկ հայացքս սփոռոցի զարդանախշերից հոգնած
շրջում եմ ներս,
և ուղեղիս ծալքերում որոնում հեռու գնացող մտքեր:
Օ, իմ քաղաք,
արհեստների աստվածը միշտ էլ բարի աշքով է նայել քեզ,
և քո երկնակամարում անվերջ վխտացել են
թիթեղյա վառարանների և մանկական օրորոցների
վտառները:

Օ, շոգ ամառների և ցուրտ ձմեռների քաղաք,

ևս հիմա էլ սիրում եմ քո սկսութ տների

միհարկ շարանը ուղիղ

և վայրի փայլը հումորիդ, որը տարօրինակ խառնուրդ է

գիշերային կատաղի կատվի և կոկորդ շանգորդ օղու

և շսափրվող քեռիների, որ միշտ սև կոստյումներ էին

հագնում:

ևսկ հայացքը, հայացքը միշտ նույնն է մնում,

այն շափազանց բարի է

և միշտ սահում է քո կողքով,

լուսավոր երիզ գծելով օրերի և տարիների մեջ...

եվ ինչ պայծառությամբ հիշեցիր հանկարծ

խոշորկործք մի աղջկա, որին հետամտում էիր անվերջ
անորոշ ու տարտամ տենչանքով՝

մինչ Դոն Կիխոտը կխոցեր. հերթական հողմաղացը,

Սամվելը կսպաներ հորը և ապա մորը

և Նյուտոնի գլխին խնձորներ կտեղային...

ևսկ մարդկանց միայն դեմքերն են փոխվում,

այնինչ նա՝ մարդ,

երեխա է մնում միշտ,

չի ծերանում երբեք:

եվ ամեն օր,

եղեկոյան ժամը քսանն անց երեսունին,

վառում լույսերը և թեքվում եմ սեղանին

և օրերի ու տարիների խորքում

որոնում ու գտնում եմ ինձ

և երկար ու անխոս նայում

ձեռքերս կրծքիս խաշած...

Բոլորովին սխալ է մտածել,
 թե արձանների ցանկությամբ է կիտվել
 ձյան շերտը նրանց վրա։
 Կամաց-կամաց թող կատարվի այն ամենը,
 ինչ որ պատահելու է մի օր ինձ հետ։
 Բոլորովին սխալ է մտածելը, թե դժբախտություն է դա:
 Ճիշտ ժամանակին չեկած երջանկությունը խանգարում է
 մեր կյանքի կանոնավոր երթը, և մենք ստիպված
 խառնում ենք մեր բոլոր դարակները,
 որտեղ պահված են արդեն դեղնած նամակներ,
 արդեն դեղնած թաշկինակներ, խամրած լուսանկարներ
 և բազմաթիվ լուցկու հատիկներ։
 Եվ պետք է պահպանել հերթականությունը,
 պետք է գտնել բաց տեղը, որտեղ որ պետք է դրվի
 ճիշտ ժամանակին չեկած երջանկությունը։
 Այս ամենը մեզանից շատ երկար ժամանակ է խլում,
 որովհետև մենք նստում և մտածում ենք
 անցած-գնացած բաների մասին, տրամվայների մասին,
 արցունքների մասին, կապույտ աշքերով կատուների մասին։
 Այս ամենից հետո պարտադիր է լուսամուտից դուրս նայելը։
 Խսկ լուսամուտից այն կողմ խորհրդավոր պուրակն է։
 Այնտեղ են բոլոր նստարանները, և այնտեղ են բոլոր

արձանները

և նրանք բոլորն էլ

ձյան հաստ շերտով են պատված։

Բոլորովին սխալ կլիներ մտածել, թե դա այդպես է,
 որովհետև այդպես նրանք են ցանկացել։
 Եվ դու վերջապես ծխախոտ ես վառում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱԳՈՏՑԱՆ ԺԱՄԵՐ

Ենվել եմ	3
Հայրերի հող	9
Հայպստան	10
Երբ	11
Սովորական օրվա սկիզբը	13
Արքայական օրս	14
Առավոտը օրվա...	15
Նոր արթնացում	16
Եկա մի առավոտ...	17

ՑԵՐԵԿԱՑԻՆ ԺԱՄԵՐ

Երբեք շմեռես	18
Աշուն	23
Կարոտ և սպասում	24
Այսօր ձյուն եկավ	25
Ճանապարհ ընկնողի համար	26
Ինչ-որ հեռու հեռավոր երկրում	27
Այսպես նստել իրար դեմ	28
Փողոցներով անցնում են	29

Հոգեհանգիստ	30
Գարուն	31
Ռորինգոն Կրուզո	32
Անցած ժամանակներ	33
Տոնավաճառ օտարության մեջ...	34
Փոքրիկ բանաստեղծություն	36
Մի մարդ և մեկ ուրիշ մարդ	38
Նամակ հեռավոր բարեկամիս	38
Ռոմանս	40
Գրիգոր Նարեկացի	42
Վերջին հեքիաթ	43
Կոլումբոս	45
Ոիգա	47
Առօրյա պատմություն	48
Տարիների հետ...	50
Ի վերջո կհանդիպես...	51
Հրաժեշտի խաղ	52
Ես ինչ կարող եմ անել	54
Վայրի ցորեն	55
Նորից երշանկության մասին	56
Պատերազմի ավերակ-հուշարձանը	58
Սիղիփոս	59
Մի հոգնած լեռ	62
Գոնե ինչ-որ մեկը մնար	63
Ամառվա սարսափելի շոգ էր	64
Օգոստոս	65
Առասպել	67
1945	68
Աշնան արահետների մեջ	69
Աղամ	70
Կերպարանափոխություն	71
Դանդաղ կոկնություն...	72
Բանաստեղծություն	74

ԻՐԻԿՆԱՑԻՆ ԺԱՄԵՐ

Գնալով դժվարանում է...	76
Հին արյումը	83
Իկար	84
Գետի հոսանքով ներքեւ	86
Միսաք Մեծաբենց	87
Հայրս ու մայրս	88
Իսկ երբ երեկոյան...	89
Օրորոցային...	91
Աշնանային փողոց	92
Վերադարձ	93
Ժամանակը, որ հոսում է մատների արանքով	94
Նոր խոսք երջանկության մասին	95
Եվ ինչ իմաստ ունի...	96
Փողոցներում...	97
Մի քանի խոսք...	98
Հյուրանոց	100
Նույն փողոցը...	103
Հարկավոր է մտածել...	104
Թանգարան	105
Հրաժեշտի երգ	106
Հնարևավոր երջանկություն	107

ԳԻՇԵՐԱՑԻՆ ԺԱՄԵՐ

Գիշերվա սառույցները ուեւ	109
Մի տիրիրի...	118
Երաժշտություն	119
Երեսէ զու կհիշես...	120
Փոքրիկ ասազի երգը	121
Ահա և իսկական անտառը	123
Քրոնիկոն	125

Սաղիկներ	126
Թատրոն	127
Երբեմն լուսերը մարում են...	127
Ցածրածայն խոսիր...	129
Այն, ինչ տվեցի քեզ	130
Ես նախ հռովարեցի...	131
Նոյ	132
Երջանկության ժանր օր	134
Ամրոցը	135
Վերջին հրաժեշտի մոլորակը	137
 ՀՐԵՇՏԱԿՆԵՐ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՆԹԻՑ	
Անվերջ բաժանումների քաղաք	147
Կիրակի	148
Ծննդյան օրը	150
Հին գորգ	151
Այն տարիներին	153
Ես ահա նորից...	156
QUID NAM FUTURUM EST?	158
Անվերջ վերադարձ	161
Առաջին սերը	162
Կարմիր արյունը, որ մարմին լուներ	163
Շարադրություն	165
Երշանակ լուսանկարի համար	167
— Իսկ պատկերը մնում է նույնը	169
Երեք գուռնալի	170
Իսկ երբ ձյուն եկավ	172
Երեխան, որ արթնացել ու լալիս էր	173
Հրաժեշտի բանաստեղծություն հայրիկին	175
Թղթե նոր տարի	176
Իսկ հայացքը միշտ նույնն է մնում	178
Բոլորովին սիալ է մտածել	180

Հովհաննես Երվանդի Գրիգորյան
ԴԱՆԴԱՂ ԺԱՄԵՐ
Բանաստեղծություններ

Григорян Ованес Ервандович

НЕТОРОПЛИВОЕ ВРЕМЯ

Стихи

(На армянском языке)

Издательство «Советакан грох»

Ереван, 1986

Խմբագիր՝ **Վ. Մուղնեցյան**

Նկարիչ՝ **Վան Արյան**

Գեղ. խմբագիր՝ **Գ. Խ. Գյուլամիրյան**

Տեխ. խմբագիր՝ **Գ. Գ. Ավազյան**

Վերատուգող սրբագրիչ՝ **Է. Ա. Սեղրակյան**

ИБ № 5125

Հանձնված է շարվածքի 19.08.85: Ստորագրված է տպագրության 12.02.86:
ՎՃ 03017: Ֆորմատ՝ $70 \times 108\frac{1}{32}$: Թուղթ՝ տպագր. № 2: Տառատեսակ՝
Գրքի տպորական: Տպագրություն՝ բարձր: 8,22 պայմ. տպ. մամ., 8,3
պայմ. ներկ., թերթ., 6,4 հրատ. մամ.: Տպարանակ՝ 3000: Հրատ. № 338:
Պատկեր՝ 4208: Գինը՝ 80 կուգ.:

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան-9, Տերյան 91:
Издательство «Советская литература», Ереван—9, Теряна 91.

ՀԱՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտորի
գործերի պետական կոմիտեի գումարվող տպագրության տպարան,
Երևան—82, Աղմբրալ Խակովի պող. 48:

Типография цветной печати Госкомитета Арм. ССР по делам из-
дательств, полиграфии и книжной торговли.

Ереван—82, пр. Адмирала Исакова, 48.

80 կոպ.



ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

